

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6649

3KN2

f-95

1 5 SEP 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄՊԱՅԵՔ

3K02
P-35

14 NOV 2009

329

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

ՊԵՏՐ. ԴՕՏՐԻՆԱԿԱ Դ.Ս.Ս.
Մ.Ո.Ո. 3/3 3

XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ԱՐԴՅՈՒՆԲՆԵՐԸ

Türkmenistan
DEVLET
Kitap bazarı
20
ԿՆԱՅՈՐՈՒՄ
ԴՕՏՐԱՐՏՅՈՒՆՆԱԿ
ՍՊԱՅԵՔ

~~14327~~
289

Բ Ա Վ Ո Ւ
1026

ՋԵԿՈՒՑՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ, 5-ԻՆ ՀՈՒՆՎԱՐԻ, 1926 ԹՎԻՆ.

Ընկերներ, կիսնդրերի թույլ տալ ինձ, կանգ առնելու այն հարցերի գլխավոր կետերի վրա, վորոնց շուրջը մեր կուսակցութեան XIV համագումարում և մասամբ ել մինչև համագումարը վորոշ տարածայնություններ են յերևան յեկել, վոր և առիթ են գառել կուսակցութեան համագումարում պայքար առաջանալուն: Դրա համար ել յես իմ գեկուցման մեջ կբավականանամ միայն այս հարցերով և կիսնդրերի ձեզ մի կողմ թողնել այն բոլոր հարցերը, թեկուզ հենց կարևոր, ինչպես որինակ պրոֆեսսիոնալ շարժման հարցը՝ նրա համար, վոր այդ հարցում տարածայնություններ շատ քիչ են յեղել: Բացի դրանից այս հարցի շուրջը առաջացած տարածայնությունների մասին հավանորեն ձեզ կխոսեմ թուրքիկ կերպով, գլխավոր հարցը շոշափելու ժամանակ: Դրա համար ել, ուրեմն, կրկնում եմ, թույլ տվեք ձեր ուշադրությունը դարձնել պայքարի այն հիմնական կետերի վրա, վորոնց շուրջը անհամաձայնություններ են յեղել մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտեի հաշվետվությունից հետո:

Կուսակցութեան համագումարը քննութեան ե առել մեր քաղաքականութեան ամենակարևոր և սկզբունքային խնդիրները: Ինձ թվում ե, թե ամենևին պատահական չե, վոր այս հարցերը մեր առաջ կանգնել են ներկա մոմենտում, յերբ մենք այս մի տարվա ընթացքում անտեսական մեծ հաջողություններ ենք ունեցել և մեր նվաճումներն այժմ իսկ զգալի են. մյուս կողմից ել անտեսական և սոցիալական հակասությունները անշուշտ աճել են, յերբ, հետեւաբար նոր դրություն ե ստեղծվում և յերբ բանվոր դասակարգի



1560-63

11 MAR 2013

6079

ՋԵԿՈՒՑՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ, 5-ԻՆ ՀՈՒՆՎԱՐԻ, 1926 ԹՎԻՆ.

Ընկերներ, կիսնդրերի թույլ տալ ինձ, կանգ առնելու այն հարցերի գլխավոր կետերի վրա, վորոնց շուրջը մեր կուսակցության XIV համագումարում և մասամբ ել մինչև համագումարը վորոշ տարածախոսություններ են յերևան յեկել, վոր և առիթ են գառել կուսակցության համագումարում պայքար առաջանալուն: Դրա համար ել յես իմ զեկուցման մեջ կբավականանամ միայն այս հարցերով և կիսնդրերի ձեզ մի կողմ թողնել այն բոլոր հարցերը, թեկուզ հենց կարևոր, ինչպես որինակ պրոֆեսսիոնալ շարժման հարցը՝ նրա համար, վոր այդ հարցում տարածախոսություններ շատ քիչ են յեղել: Բացի դրանից այս հարցի շուրջը առաջացած տարածախոսությունների մասին հավանորեն ձեզ կխոսեմ թուրքիկ կերպով, գլխավոր հարցը շոշափելու ժամանակ: Դրա համար ել, ուրեմն, կրկնում եմ, թույլ տվեք ձեր ուշադրությունը դարձնել պայքարի այն հիմնական կետերի վրա, վորոնց շուրջը անհամաձայնություններ են յեղել մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի հաշվետվությունից հետո:

Կուսակցության համագումարը քննության ե առել մեր քաղաքականության ամենակարևոր և սկզբունքային խնդիրները: Ինձ թվում ե, թե ամենևին պատահական չե, վոր այս հարցերը մեր առաջ կանգնել են ներկա մոմենտում, յերբ մենք այս մի տարվա ընթացքում անտեսական մեծ հաջողություններ ենք ունեցել և մեր նվաճումներն այժմ իսկ զգալի են. մյուս կողմից ել անտեսական և սոցիալական հակասությունները անշուշտ աճել են, յերբ, հետևաբար նոր դրություն ե ստեղծվում և յերբ բանվոր դասակարգի



1560-63

նոր խավերը, նոր սերունդները և առաջին հերթին՝ յերիտասարդությունը, մասամբ ել հին բանվորական կազմերի վորոշ մասը — թե մեր կուսակցութեան ներսում և թե նրանից դուրս—մեր առաջ դնում են մի շարք հիմնական կարևոր հարցեր: Կուսակցութեան XIV համագումարը այնպիսի դրութեան առաջ եր կանգնել, յերբ կուսակցութեան շարքերում ել այդ հարցերը ամբողջովին կանգնեցին մեր առջև, յերբ մի շարք այնպիսի հարցերի պատասխան եր պահանջվում, վորոնք թվում ե թե վաղուց արդեն վճռված են:

Յե՛վ իսկապես. չե՛ վոր առաջին անգամ չե, վոր մեր առաջ դրվում են ՆեՊ-ի հարցը, մեր յերկրում սոցիալիզմը կառուցելու հարցը, գյուղացիութեան նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքի հարցը, մեր կուսակցութեան ներքին կառուցվածքի հարցը—այդ բոլոր հարցերը, թվում եր թե, իրենց սկզբունքային կողմերով վաղուց արդեն վճռվել են մեր կուսակցութեան կողմից. բայց և այնպես նրանք յերևան յեկան և բավական սուր ձևով վերջին ժամանակներս կանգնեցին մեր առաջ. և հենց այդ հարցերի շուրջն ել կատաղի պայքար տեղի ունեցավ: Այս բոլորը ամենեին պատահական համարել չի կարելի:

Ամենասովորական և ամենավայրենի արբվածքի կարծիքը արտահայտվում ե նրանով, վոր նա,—լինի դա թե արբվածք-մեջ-չանին և թեկուզ հենց արբվածքի բանվոր դասակարգից,—ասում ե. «Լիզերները կռիվ են արել, գործի գլուխ կանգնած կոմունիստները վիճում են, իշխանութիւնն ձեռք բերելու համար կռվում են»: Հարցը այդպես դնելը ինքնըստինքյան սխալ ե հենց նրա համար, վոր դա չափազանց հասարակ ե: Չի կարելի, ի հարկե, հերքել, վոր Կենտրոնական Կոմիտեում վորոշ խմբավորումներ են յեղել և վոր նրանք Կենտրոնական Կոմիտեում պայքարել են՝ մեծամասնութիւնն իրենց կողմը գրավելու համար: Դա միանգամայն ճիշտ ե: Վորովհետև, բնական ե, վոր յեթե կուսակցութեան կամ Կենտրոնական Կոմիտեի մեջ մի խմբակ գտնում ե, վոր ինքը ուղիղ ե, իսկ մի ուրիշ խմբակ գտնում ե, վոր, ընդհակառակը, առաջինն ե սխալվում, ավելին կասեմ—յեթե մի խմբակ գտնում ե, վոր իր քաղաքական գիծը ուղիղ ե, իսկ մի ուրիշը գտնում ե, վոր իրենն ե ուղիղ, ապա պարզ ե, վոր սկսվում ե ներկուսակցական պայքար: Իսկ դա անհրաժեշտ ե, ինքնըստինքյան, վորովհետև այս կամ այն քաղաքականութիւնը անցկացնելը կախված ե նրանից, թե մեր կուսակցութեան ղեկավարող որգաններում ով մեծամասնութիւնն ձեռք կբերի: Մեր կուսակցութեան կյանքը շատ թե քիչ հասկացող մարդը նույնպես հասկանում ե, վոր մարդիկ յեթե ցանկանում են

իրենց ուղիղ համարած քաղաքական գիծը տանել, դրա համար ել ամենից առաջ պիտի պայքարեն մեծամասնութիւնը իրենց կողմը գրավելու համար: Խնդիրը ըստ եյութեան վճռելու համար, հետևաբար, հարկավոր ե գրադվել այն հարցով, թե արդոք, ուղիղ ե այս կամ այն քաղաքական գիծը, այսինքն, քննութեան առնել քաղաքական մի շարք այնպիսի հարցեր, վորոնք տարածայնութիւններ են առաջ բերել:

Ուրեմն, իմ այսորվա ղեկուցման գլխավոր նյութն են լինելու այն քաղաքական անհամաձայնութիւնները, վորոնք քննվել են մեր կուսակցութեան համագումարում:

I. ՈՊՊՈՋԻՑԻԱՅԻ ՏԱԿՏԻԿԱՆ

Սկզբից յես կցանկանայի մի քանի խոսք տսել պայքարի առաջանալու և նրա ընթացքի առթիվ, թե ինչպես ե այդ պայքարը սկսվել, ինչպես ե տարվել, ինչ շրջաններ ե անցել և թե ինչ դրութեան մեջ ե գտնվում ներկայումս:

Դուք շատ լավ գիտեք, վոր մեր Կենտրոնական Կոմիտեում դեռ համագումարից շատ առաջ տարածայնութիւններ են յեղել,—այն ե, թե ինչ կազմակերպչական միջոցներ պիտի ձեռք առնվեն տրոցկիզմի ուղղորդիչայի դեմ կռվելու համար: Այդ ժամանակ Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութիւնը ավելի մեղմ քաղաքականութիւն ե պահանջել. մասնավորապես ընկ. Տրոցկու նկատմամբ մեծամասնութիւնը պահանջել ե, վոր նա թողնվի Քաղբյուրի (Պալիտբյուրո) մեջ: Մեծամասնութիւնը բողոքել ե «խիստ քաղաքականութեան» դեմ, գտնելով, վոր անհրաժեշտ ե վորքան կարելի ե լայն չափով ոգտագործել այն խոշոր ընկերներին, վորոնք չնայած մի շարք հարցերում սխալվել են, բայց և այնպես աշխատանքի ուրիշ ասպարեզում կարող են մեծ ոգուտ բերել մեր կուսակցութեանը: Մեծամասնութիւնը այդ ընկերներին մեր կուսակցութեան ղեկավարող շտաբում պահելը վտանգավոր չե համարել, վորովհետև, այնտեղ այնպիսի ընկերների բավարար քանակութիւն կա, վորոնք միշտ կարող են այս կամ այն թեքումները անփաստ դարձնել:

Այդ առթիվ անհամաձայնութիւններ յեղել են մի շարք ընկերների հետ, ի թիվս վորոնց նաև ընկերներ Չինովյեվի, Կամենի և Սակոնիկովի հետ: Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեանը այդ ժամանակ համարել են «կիսատրոցկիստներ» միայն նրա համար, վոր մենք չենք ցանկացել խիստ միջոցներ ձեռք առնել: Չեզնից ամեն մեկը, ով հիշում ե այն ժամանակվա մեր կու-

սակցական դիսկուսիան, գիտե, վոր մեր այժմյան մեծամասնութեան պատկանող Կենտրոնական Կոմիտեի յուրաքանչյուր անդամ յուր ուժերի չափ պայքար եւ մղել տրոցկիզմի քաղաքական թեքումների դեմ: Սակայն դրա հետ միասին մեծամասնութեան ամեն մի անդամը այն կարծիքին եւ յեղել, վոր ուրիշ բան եւ թեքումների դեմ կռվելը, գաղափարական պայքարը, և ուրիշ՝ դրանից կազմակերպչական յեզրակացութիւններ հանելը: Ի հարկե, այդ կազմակերպչական յեզրակացութիւնները պետք եւ արվելին (դրանք այս կամ այն չափով անհրաժեշտ են և միշտ պետք եւ գործադրել), բայց ամբողջ հարցը կայանում եւ նրա մեջ, թե այդ կազմակերպչական յեզրակացութիւնները ինչ չափով են արվում:

Ահա թե ինչից են սկսվել մեր տարածայնութիւնները: Այն ժամանակ մենք, վոր համարվում եինք «կիսատրոցկիստներ», այժմյան ուղղութիւնի կողմից խիստ հարձակումների յենթարկվեցինք: Նրանք նպատակ ունեին մեծամասնութիւնը իրենց կողմը քաշել: Միաժամանակ նրանք մտադիր եին Կենտրոնական Կոմիտեի քարտուղարութիւնը վերակազմել և չլիզել այնպես, ինչպես այժմ եւ, մի շարք փոփոխութիւններ կատարել, այս կամ այն գործչին մի տեղից մյուս տեղը փոխադրել, և այլն, և այլն:

Ամենկին չի կարելի ասել, թե դա միայն մի «անսկզբունք պայքար» եւ յեղել: Ամենկին ել չեւ: Ընկերները համոզված են յեղել, վոր իրենց քաղաքական գիծը ուղիղ եւ նրանք ըստ յերևույթին համոզված են յեղել, վոր մենք շատ ենք յերես տալիս տրոցկիստական ուղղութիւնին, վոր միևնույն եւ, թե սխալ քաղաքականութիւն ենք վարում: Դրա համար ել, իրենց կարծիքով, վորպեսզի ուղիղ գիծ տարած լինեն, դուրս են գալիս Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեան դեմ: Այդ հարձակմանը, ի հարկե, մենք դիմադրութիւն ցույց տվինք և մի քանի ամիսների ընթացքում այդ մասին խոսակցութիւնները դադարեցին: Իսկ վոր նրանք հենց դրանով պայքարում եին Կենտրոնական Կոմիտեի դեմ, վոր գնդակ եին արձակում Կենտրոնական Կոմիտեի հենց սրտին, այդ մասին մենք այլևս չմտածեցինք, քանի վոր հարձակումը արդեն հետ եինք մղել: Ընկերները տեսան, վոր Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութիւնը անհամեմատ ուժեղ եւ, թեպետ մի ժամանակ վորոշ տատանումներ մեծամասնութեան մեջ վորոշ հույս ներշնչեցին նրանց: Այդպիսով, ուրեմն, ընկերները նահանջում են և մի առժամանակ Կենտրոնական Կոմիտեի դեմ ուղղակի հարձակումները դադարում են:

Բայց միևնույն ժամանակ նրանք անուղղակի շարժումներ են սկսում, վոր կայանում են հետևյալում.—նրանք ասում են՝ «մենք

Կենտրոնական Կոմիտեի կողմնակից ենք, մենք նրա դեմ չենք, մենք նրան լիովին պաշտպանում ենք»։ այսպես ասում են, բայց միևնույն ժամանակ ամեն կերպ աշխատում են իրենց համար կազմակերպչական ֆրակցիոն բազա ստեղծել: Դա արդեն մի պայքար եր, վոր տարվում եր վոչ թե ճակատ առ ճակատ, այլ անուղղակի միջոցներով: Այդ պայքարը արտահայտվում ե հետևյալ կերպով.— ինչպես յուր ժամանակ ընկ. Տրոցկին կուսակցութեան մեջ մեծամասնութիւն չունենալով՝ դիմում եր յերիտասարդութեանը, այնպես ել այստեղ ընկերները դիմում են նույն յերիտասարդութեանը, միանգամայն մոռանալով մոտիկ անցյալում իրենց աված դասերը ընկ. Տրոցկուն: Կոմյերիտմիութեան Լենինգրադի կազմակերպութիւնը փորձում ե հրավիրել համամիութենական կոնֆերանս: Նա հրավիրում ե Լենինգրադի կոնֆերանս և մի շարք հրավերներ ուղարկում կոմյերիտմիութեան նահանգական կոմիտեներին, վորպեսզի վերջիններս գան այնտեղ, իբր թե՝ «վորպես հյուրեր»: Պարզ ե, վոր դա արվում ե միայն նրա համար, վորպեսզի քաղաքական և կազմակերպչական գծով մի ընդհանուր ֆրոնտ ստեղծվի և պայքար սկսվի կուսակցութեան մեծամասնութեան դեմ:

Յես չեմ ուզում խոսել ուղղութիւնի թույլ աված մի շարք ուրիշ քայլերի մասին, և կանցնեմ ավելի մոտ շրջանին, այն ե՝ Լենինգրադի ռայոնական կոնֆերանսներին, Լենինգրադի նահանգական կուսակցական կոնֆերանսին և մեր կուսակցական համագումարին: Ի՞նչ ե խոսվել Լենինգրադի ռայոնական կոնֆերանսներում, այնտեղ ասել են,— «մենք Կենտրոնական Կոմիտեի կողմն ենք», «մենք կուսակցութեան մեծամասնութեան կողմնակից ենք», «մենք ուզում ենք ընդհանուր ուժերով աշխատել», «մենք սարի նման կանգնած ենք այժմյան Կենտրոնական Կոմիտեի հետեը»: Բայց... «մեղավորը միայն Բոգոլչևսկին ե»: Այդպես են նրանք ռայոնական կոնֆերանսներում իրենց ուժերը դասավորել:

Նահանգական կոնֆերանսում ասել են. «մենք Կենտրոնական Կոմիտեի կողմն ենք», «մենք կուսակցութեան միասնականութեան կողմնակից ենք», «մեր Կենտրոնական Կոմիտեն հրաշալի ե», «մենք միանգամայն կողմնակից ենք Կենտրոնական Կոմիտեի բոլոր անդամների հետ ընդհանուր ուժերով աշխատելու, բայց... մեղավորը միայն Բոգոլչևսկին ե և մի քիչ ել... Բուխարինը»: Բայց և այնպես այս բոլորից հետո ել Լենինգրադի կոնֆերանսը վստահութիւն ե հայտնել Կենտրոնական Կոմիտեին և Կենտրոնական վերահսկիչ շանձնաժողովին: Հետագայում, կուսակցական համագումարի սկզբում և նույնիսկ նրանից հետո, յերբ նա բացվեց, ուղղութիւնի

անա այս յոգունոն ունեւր. «մենք Կենտրոնական Կոմիտեի կողմն ենք, մենք կուսակցութեան միասնականութեան կողմնակից ենք, աստուած մի արասցե, յեթե մեկը ասի, թե մենք Կենտրոնական Կոմիտեի դեմ ենք, դա մեր հասցեին բամբասանք կլինի, բայց... մեղավորը Բուխարինն է և նրա նոր շկոլան»: Ահա հենց այստեղ ել պարզվում է Կենտրոնական Կոմիտեի կից—զեկուցողի դեմքը:

Իրանից հետո, համագումարում ընկ. Կամեներ հայտարարում է, թե Կենտրոնական Կոմիտեն «խարեյուլթյան քաղաքականութիւնն» է տարել. հետո նա այդ հայտարարութեան համար ներողութիւն է խնդրում, իսկ հետո ել ասում է, վոր Կենտրոնական Կոմիտեի քարտուղարութիւնը հիմնովին փոփոխութեան պետք է յենթարկել: Այժմ ինչպէս յերևում է այդ «մենքը» պարզապէս Կենտրոնական Կոմիտեի դեմ է: Այդ «դեմը» արդեն հաստատվում է նրանով, վոր նրանք Կենտրոնական Կոմիտեի հաշվետվութեան շուրջը հանած բանաձևին դեմ են ձայն տալիս. և դեռ ավելին—«Լենինգրադսկայա Պրավդա»-ն, վոր նոր ուղղութիւնայի Ֆրակցիոն որդանն եր' հայտարարում է. «մենք» համագումարին կողմնակից ենք, բայց միաժամանակ մեր պատվիրակութեան կողմն ել ենք, վորը ձայն է տվել համագումարի դեմ,—և ասում է,—մեր պատվիրակութիւնը իրավացի է»: Այդպիսով, ընդունված վորոշումները սկսվում են հարձակումների յենթարկվել: Սա, ի հարկե, մի չտեսնված փաստ է մեր կուսակցութեան պատմութեան մեջ:

Իսկ պարզ տեսնում եք, թե սա ինչ ստրատեգիական մանյովր է: Ինքնըստինքյան հասկանալի է, վոր յեթե նրանք Լենինգրադի բանվորներին միանգամից ասեին, թե «մենք» մեր կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեի դեմ ենք, թե «մենք» Կենտրոնական Կոմիտեի ղեկավարող գրուպպաների մեծամասնութեան դեմ ենք և այն, և այլն, այդ ժամանակ պարզ է, վոր շատ բանվորները ձայներ հավաքել չէր լինի և այն ժամանակ, ամենայն հավանականութեամբ Լենինգրադի «միաձույլ պատվիրակութեան» գործը համագումարում այնպէս չէր լինի, ինչպէս յեղավ: Հենց այս ամբողջ ստրատեգիան ել նրա համար է յեղել, վոր վորքան կարելի է շատ ձայներ գրավեն իրենց կողմը: Յերբ Կենտրոնական Կոմիտեի դեմ ուղղված հարձակումները հետ են մղվում, այդ ժամանակ ել սկսվում է «նահանջ» և արշավանք՝ թիկունքից: Սկզբում խղճուկ Բոգուշևսկին, վորի հողվածը բոլորի կողմից միաձայն դատապարտվել է. ի միջի ալոց այդ հողվածը լույս տեսնելու համար Բուխարինը պատասխանատու է նույնչափ, վորչափ և Կամեններ, վորպէս «Բոլշևիկ» ժուրնալի խմբագիրներին մեկը: Իրա հետ

միաժամանակ նրանք ձայներ են վորսում Կենտրոնական Կոմիտեի դեմ արշավելու համար: Իսկ վերջում արդեն բացարձակ կոթի հայտարարում համագումարի վորոշումներին դեմ: Ահա այն տաքտիկական պրիոմները, վոր գործադրել է նոր ուղղութեան: Հաղիվ թե կարիք լինի ապացուցելու, մանավանդ յեթե լավ հետևած լինեք թերթերին, վոր այս բոլորը այսպէս է: Յես դեռ խոսում եմ միայն հիմնական փաստերի մասին և չեմ ուզում առ այժմ նրանց գնահատականը տալ: Նոր ուղղութիւնայի այդ տակտիկան յուր գաղթնակետին հասավ այն ժամանակ, յերբ համագումարի կայացրած վորոշումները սկսեցին գնդակահարվել: Յեվ ինքնըստինքյան պարզ է, վոր համագումարի մեծամասնութիւնը, վոր միևնույն է թե կուսակցութեան համագումարը, վորպէս կուսակցութեան ամենաբարձր որդանը, վորպէս ամբողջ կուսակցութեան կամքի արտահայտիչը—այնպիսի մի դրութեան առջ եր դրված, վոր ստիպված եր բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել, ստեղծված ներկուսակցական ծանր դրութիւնը վերացնելու համար: Իսկ, հավանորեն, թերթերում կարգացած կլինեք այն ընկերների ձուները, վորոնք Լենինգրադից յեկել եին համագումարը վորջուցնելու: Նրանց մի մասը կանգնած եր համագումարի՝ այսինքն մեծամասնութեան կողմը, վոր միևնույն է թե ամբողջ կուսակցութեան կողմը, իսկ վորոշ մասը կանգնած եր ուղղութիւն խմբակների կողմը: Յես խորհուրդ կտայի բոլորիդ ուշադրութիւն դարձնելու այն ձուներին, վոր արտասանել են Լենինգրադից յեկած ուղղութիւնայի կողմնակիցները՝ կուսակցութեան համագումարում: Նրանք շարունակ հայտարարում եին—«մենք կուսակցութեան համագումարի կողմն ենք և չեմ վորջուցն ենք ուղարկում նրան», և այլն: Բայց «մեր պատվիրակութիւնը ուղիղ է վարվել»: Այժմ հարց է առջանում—ինչպէս է ձայն տվել պատվիրակութիւնը: Պատվիրակութիւնը ձայն է տվել կուսակցութեան համագումարի դեմ, պատվիրակութիւնը ձայն է տվել մեծամասնութեան բանաձևի դեմ,—սա բոլորին հայտնի է, սակայն այն ներկայացուցիչները այս բոլորից հետո կուսակցութեան համագումարում ասում են. «ճիշտ է, համագումարը միանգամայն իրավացի է, բայց և մեր պատվիրակութիւնն ել է ճշմարիտ»: Թե ինչպէս կարելի է համաձայնեցնել այս յերկու բանը իրար հետ, դա ինքը ալլահն ել չգիտե: Պարզ է, վոր չի կարելի համաձայնեցնել: Յեվ վոչ մի ղեկալեկտիկա չի կարող այս հակասութիւնները բացատրել: Չի կարելի միանգամից հաստատել յերկու՝ իրար միանգամայն բացասող դրութիւններ: Կամ մեկն է ճիշտ, կամ մյուսը: Պարզ է, վոր նման դիրքը վոչ մի քննազա-

տութեան չի կարող դիմանալ յուր անսկզբունք լինելու պատճառով, իսկ փաստորեն նման դիրքը վոչ այլ ինչ է, յիթե վոչ չենթարկվել կուսակցութեան համագումարի վորոշումներին: Այնպես վոր այս կուսակցական ճգնաժամը, վոր ներկայումս մենք ապրում ենք և վորը՝ յես համոզված եմ, շուտով կվերացնենք, մի ծանր յերևույթ է մեր կուսակցական կազմակերպութեան կյանքում: Սակայն մի յերևույթ, վորը ինչ էլ վոր լինի և վորքան կարելի է, կտրճ ժամանակամիջոցում պետք է վերացնենք:

II. ԼԵՆԻՆԻՉՍԸ ԿՍՁՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՅԵՎ ՆՈՐ ՈՊՊՈՁԻՑԻԱՆ

Այժմ յես անցնում եմ յերկրորդ հարցին, թե ինչպես նման պայքարը իսկույն ազդում է կուսակցական կազմակերպութեան միասնականութունը խախտելու, նրա ներքին կառուցվածքի և առհասարակ այն բոլորի վրա, ինչով վոր մենք սովոր ենք հպարտանալ. այդ պայքարը ազդում է նրա դիսցիպլինայի և միասնականութեան վրա: Այստեղ էլ չափազանց հետաքրքիր է, թե ինչպես է փոխել իր դիրքերը նոր ոպպոզիցիան:

Իսկ շատ լավ գիտեք, վոր ընկ. Զինովկը ընկ. Տրոցկու հետ ունեցած դիսկուսիայի ժամանակ հայտարարում էր. — պրոլետարիատի դիկտատուրան պաշտպանելու համար և վորպեսզի մեր յերկրում հնարավոր լինի բանվոր դասակարգին տանել սոցիալիզմի կառուցման ճանապարհով, անհրաժեշտ է վոր մեր կուսակցութունը հարյուր առիսով միաձուլ լինի: Իսկ ինչպես էին բնագոտում մեզ այդ ժամանակ, յերբ վոր մեզ համարում էին «կիսաբոցկիստներ»: Մեզ այդ ժամանակ ասում էին. «Ինչպես կարելի է Տրոցկուն պահել Քաղբյուրոյում, վորին հենց ինքներդ ել մեզ հետ միասին մեղադրում եք թեքումների մեջ, չե՞ վոր Քաղբյուրոյում յոթ մարդ կա, կնշանակե վոր նրա մի յոթերորդ մասը զուտ լենինյան չէ. ոգնութեան հասեք, մենք դրանից կկործանվենք: Ղեկավարելու համար հարկավոր է ունենալ հարյուր տոկոսի միասնականութուն, մանավանդ ղեկավարող կադրերի մեջ, վորպեսզի կարելի լինի պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ կուսակցութեան ուսերի վրա դրված ամբողջ ծանրութունը տանել»: Այդ հարյուր տոկոսի միասնականութեան մասին այնքան խոսեցին ու խոսեցին... վոր վերջիվերջո իրենք արդեն փոքրամասնութուն դառան: Վորովհետև հենց վոր նոր ոպպոզիցիայի ընկերները փոքրամասնութուն կազմեցին, մանավանդ մեր այս համագումարի ժամանակ, նրանք սկսեցին այնպիսի լոզունգներ դնել, վորոնցից

մի ժամանակ իրենք էլ էին հրաժարվում: Յես դեռ չեմ խոսում այն մասին, ինչ վոր յեղել է մինչև համագումարը:

Ապա ինչ լոզունգներ են առաջ քաշել նոր ոպպոզիցիայի ներկայացուցիչները մեր կուսակցութեան համագումարում: Ընկ. Զինովկը իր կից ղեկուցման մեջ հայտարարում է, վոր հարկավոր է գործի մեջ քաշել ոպպոզիցիայի բոլոր կենդանի ուժերը: Մենք շատ լավ գիտենք, վոր վերջին տարիներս մենք մեծ ջանքեր ենք թափել մի շարք ոպպոզիցիոն թեքումների դեմ կովելու համար: Մենք հիշում ենք բանվորական ոպպոզիցիան, դեմոկրատական ցենտրալիզմը, մասամբ արդեն մեր կուսակցութեան շրջաններից դուրս յեկած «Բաբոչայա պրավդա»-ի խմբակները և մի շարք ուրիշները: Զե՞ վոր նրանց դեմ մենք միշտ կովել ենք, չե՞ վոր հենց լենինը յուր կյանքի վերջին տարիները ամբողջապես նվիրել է զանազան թեքումների դեմ կովելուն և մարքսիստական-լենինյան գիծը անվտանգ պահելու: Մեզնից շատերն են մասնակցել այդ թեքումների դեմ կովելու ժամանակ, և մեզ հաջողվել է այդ անել: Հենց ինքը Զինովկը լենինյան գիծը անադարտ պահելու համար միշտ ասել է, — և նրա հետ միասին մենք էլ կրկնել ենք Տրոցկու հետ ունեցած դիսկուսիայի ժամանակ, — վոր կազմակերպչական հարցում ամենին չի կարելի նահանջել լենինից-մից: Մեր կուսակցութունը կազմակերպչական հարցում ուրիշ կուսակցութուններից տարբերվում է հենց նրանով, վոր կառուցված է կազմակերպութեան կամքի իսկական միասնականութեան հիմքերի վրա: Այն ժամանակ, յերբ մի շարք ուրիշ կուսակցութուններ, ինչպես որինակ մենչևիկական, եսերական, — դեռ չեմ խոսում բուրժուական կուսակցութունների մասին, — իրենցից ներկայացնում են վորպես ֆրակցիաների զանազան միացումներ, խմբակներ, խմբակիկներ, կարծիքների տարբերութուն, կուսակցութեան զանազան մասերի կոալիցիա, մի խոսքով ներկայացնում են իրենցից այնպիսի կուսակցութուններ, վորոնց մեջ աջ ձեռքը չի իմանում, թե ինչ է անում ձախը, — հենց այդ ժամանակ մենք վճռականապես դեմ էինք այն բանին, վոր մեր կուսակցութունն էլ ունենա նման կառուցվածք: Քանիցս մենք ապացուցել ենք, վոր մեր հաղթանակները մեծ մասամբ պայմանավորված են հենց նրանով, վոր մեր կուսակցութունը յուր կազմակերպչական ելուժամբ իսկապես վոր պողպատե է յեղել: Ի հարկե, մենք ունեցել ենք դիսկուսիաներ, հարցերը յերկար քննութեան ենք յենթարկել, յերկար վիճաբանել ենք, բայց այդ բոլորից հետո յերբ վար վորոշում ենք կայացրել, այդ ժամանակ արդեն մենք ընդհանուր

ուժերով և համերաշխ կերպով սկսել ենք այդ վորոշումները կյանքի մեջ մտցնել: Քիչ ընկերներ չեն յեղել թե կուսակցութեան զեկավար մասերից, թե միջակներից և թե շարքային անդամներից, վորոնք չնայած ձայն են տվել կուսակցութեան այս կամ այն վորոշման դեմ, բայց և այնպես վորոշումը կայացնելուց հետո, այդ վորոշումները կատարել են: Մեր յերկաթե զիսցիպլինան, միաձուլութունը և կուսակցութեան կամքի միասնականութունը միշտ մեր հատկանիշ կողմն են յեղել և համոզված ենք, վոր այդպես ել կմնան: Դա մի ճշմարտութուն է, վորը կարիք չկա ապացուցելու մեզ համար:

Յերբ վոր ընկ. Տրոցկին և նրա կողմնակիցները վերջին լերկու զիսկուսսիաների ժամանակ մեզ հետ վիճում եին և առաջ քաշում տրոցկիստների հին լոզունգը—«դու ել ապրի և թող ուրիշներն ել ապրեն»—վոր նշանակում է, թե դուք մեծամասնութուն կազմեցեք և միաժամանակ թույլ տվեք, վոր մենք ել ունենանք խմբակներ և զանազան տեսակի ֆրակցիաներ, այն ժամանակ մենք վճռականապես բողոքում եինք այն բանի դեմ: Ինչ՞ու. վորովհետև մենք շատ լավ գիտեինք, վոր պրոլետարիատի զիկատատուրայի պայմաններում մեր կուսակցութեան մեջ կարծիքների տարբերութուն կարող ենք թույլ տալ մինչ այն ժամանակ, քանի դեռ այդ մասին վորոշում չենք կայացրել. բայց վորոշում կայացնելուց հետո բոլորս պարտավոր ենք այդ վորոշումը կատարել: Մենք մեծ հպարտութուն ենք համարում, վոր մեր կուսակցութեանը վերջին տարիներում հաջողվել է, թեպետ մեծ ղժվարութեամբ, բայց և այնպես պայքարել ու հաղթահարել զանազան տեսակի թեքումներ, հոսանքներ, խմբակներ ու ֆրակցիաներ: Մենք միշտ այդ համարել ենք խոշոր նվաճում մեր կուսակցութեան մեջ: Յեվ անա այդ բոլորից հետո, յերբ մանավանդ վերջին XIII համագումարում մենք այդ բանը ավելի ամրացրինք և նույն համագումարի կողմից բարձրաձայն խստեցինք այդ մասին և տասը անգամ ընդգծեցինք, անա այս բոլորից հետո այդ նույն բաների կողմնակիցը այժմ արգեն հանդես գալով փոքրամասնութեան մեջ, կարծիքների ազատութուն է պահանջում, «յերաշխիքի» լոզունգ է առաջ քաշում, բարձրաձայն խոսում է փոքրամասնութեանը իրավունք տալու, ուղղորդիսն ուժերին գործի մեջ քաշելու մասին և այլն, և այլն: Մենք գտնում ենք, վոր դա միանգամայն անիմաստ բան է:

Ի հարկե, նոր ուղղորդիցիայի տեսակետից դա միանգամայն ճիշտ է, վորովհետև նա, ով հաղթվում է, միշտ դաշնակից է փրկա-

րում: Յերբ վորևե մի խմբակ անհաջողութուն է գտնում, նա ամեն կերպ աշխատում է յուր կողմը քաշել նոր ուժեր: Դա հասկանալի է: Սակայն չնայած վոր դա հասկանալի է, բայց և այնպես դա միանգամայն հակասում է Լենինի ուսմունքին:

Այժմ, ընկերներ, դուք տեսնում եք, թե նոր ուղղորդիցիան ինչքան է հեռացել XIII համագումարի վորոշումներից, ուղղակի 180 տոկոսով: Յեթե այդ ընկերները XIII համագումարի ժամանակ խոսում ու 100 տոկոսի միասնականութեան և միաձուլութեան նշանաբանն եին դնում, ներկայումս, սակայն, փոքրամասնութուն կազմելուց միանգամայն հակառակն են անում և փաստորեն իրենց ավելի բարձր դասում, քան կուսակցութունը: Պարզ է, վոր այս հանգամանքը միանգամայն չի կարելի համարել նրանց սկզբունքային դրական կողմը: Կուսակցութունը յերբեք նման բան թույլ տալ չի կարող: Յեթե մենք այդպես վարվելու լինենք, այդ դեպքում մեր պրոլետարական կուսակցութեան յերկաթե շարքերից վոչինչ չի մնա:

Այժմ, ընկերներ, յես կանգ կառնեմ յերկու բանի վրա ել, վորոնք կապված են այս հարցի հետ: Մեզ վրա համագումարում ամենաձանր տպավորութունը թողեց ընկ. Կրուպսկայայի ճառը, վորին մենք շատ սիրում, հարգում ու գնահատում ենք: Յեվ չնայած դրան, նա այնպիսի բաներ ասաց, վոր քաղաքականապես ամենևին թույլատրելի չեն մեր տեսակետից: Ի՞նչ ասաց նա: Յուր ճառերից մեկում նա ասում է. «Ի՞նչ կա վոր, համագումարի մեծամասնութունն ել կարող է սխալվել. չէ վոր 1906 թվին Ստոկհոլմի համագումարում այնպիսի մի դրութուն եր ստեղծվել, վոր համագումարի մեծամասնութունը, բողկացած մենչևիկներից, սխալվեց, իսկ համագումարի փոքրամասնութունը, բողկացած բուշևիկներից՝ ճշմարիտ եր»:

Այդ ժամանակ նրան այսպիսի մի հարց է տրվում. «Ապա ի՞նչպես. ձեր կարծիքով ուրեմն XIV համագումարը նույնն է, ինչ վոր Ստոկհոլմի՞նը»: Այդ ժամանակ ընկ. Կրուպսկայայն նորից դուրս յեկավ և իբր թե ինչ վոր «բացատրութուններ» տվավ, վորոնք ըստ եյութեան վոչ միայն վոչինչ չպարզեցին, այլև դրութունը ավելի բարդացրին: Նրա ասածներից դուրս է գալիս հետևյալը.— Յես պետք է ասեմ, վոր դուք մենչևիկներին դատում եք այնպես, ինչպես նրանք յեղել են 1917 թվին. ի հարկե, դուք հիշում եք, վոր նրանք այդ ժամանակ միանգամայն անպետք եին. բայց մի մոռանաք, վոր 1900 թվին նրանք ավելի լավ եին: Ահա թե ինչի եին հանգում նրա տված բացատրութունները:

Մի ընդհանուր ընդունենք այս բացատրութիւնը: Բայց միթե սա դործին ոգուտ ե տալիս. ամենին վոչ. և դա շատ հասկանալի պատճառով: Իրանից այսպես թե այնպես դուրս ե գալիս, վոր փոքրամասնութիւն կարծիքով մեր համագումարը նման ե Ստոկհոլմի համագումարին, և զրա համար ել մեր համագումարի մեծամասնութիւնը նրանք նայում են այնպես, ինչպես 1906 թվին բոլշևիկները նայում եին մենշևիկներին: Սակայն թույլ տվեք ասել հետևյալը. յերբ մենք 1906 թվին մենշևիկներին հետ վիճում եինք, այդ ժամանակ հիմնական տարածայնութիւններ կային. վիճում եինք այնպիսի կարևոր հարցերի շուրջը, ինչպիսին են հեղափոխութիւն շարժիչ ուժերը, զինված ապստամբութիւն հարցը, լիբերալ բուրժուազիայի նկատմամբ ունեցած վերաբերմունքը. վիճել ենք այնպիսի կարևոր հարցերի շուրջը և շուտով ել կուսակցութիւնը պառակտվել ե: Ամեն մեկը սա գիտե: Յեվ մենք տեսանք, վոր չանցած մի քանի տարի, բոլշևիկները մենշևիկներից բաժանվեցին: Այժմ յես հարց եմ տալիս—1906 թվին այդ պառակտման համար նպաստավոր պայմաններ կային, թե չե: Ի հարկ ե, կային: Յեվ այդ բանը այն ժամանակ մենք զգում եինք: Ինչպես եինք մենք դործում 1906 թվին մենշևիկներին դեմ: Այդ ժամանակ համագումարը վերջանալուց հետո առանձին զեկուցումներով հանդես եինք գալիս, ստեղծել եինք մեր Ֆրակցիոն կենտրոնները, տարածում եինք մեր առանձին գրականութիւնը, ընդհանուր կազմակերպութիւն հետ միաժամանակ ունեինք մեր ինքնուրույն կազմակերպութիւնը, մի խոսքով ունեինք կազմակերպված Ֆրակցիա, կատաղի կռիվ եինք մղում և վերջիվերջո բաժանվեցինք վորպես առանձին կուսակցութիւն: Այժմ յես հարց եմ տալիս—ինչպես կարելի ե այժմ մի բառով անգամ հիշել Ստոկհոլմի համագումարը. միանգամայն անթույլատրելի ե: Դա շատ վտանգավոր խաղ ե! Վերին աստիճանի վտանգավոր խաղ: Յեվ ինչ ե դուրս գալիս Կրանց ասածներից: Իբր թե, այժմ, տարածայնութիւններ են գնում, իբր թե հազագումարի մեծամասնութիւնն ել կարող ե սխալվել այժմ այնպես, ինչպես մենշևիկները 1906 թվին մեծամասնութիւն կազմելով հանդերձ այնպես սխալվել են և վոր այժմյան փոքրամասնութիւնը իրավացի ե: Ինչ կարիք կա այդ բոլորը հիշելու, ինչ կարիք կա նման ճառեր ասելու, ինչի համար են նման ակնարկները:

Թերևս կարելի լինի ասել, վոր այդ հարցում Նադեժդա Կոնստանտինովնայի սխալվել ե, ավելի ճիշտ, այն չի ասել, ինչ վոր ցանկացել ե, վոր նա նախ քան ասելը, լավ չի մտածել. ի հարկե,

այդ առթիվ շատ բան կարելի ե ասել. բայց չե՞ վոր չպետք ե մտանալ, վոր այդ բոլորը լսում ե ամբողջ յերկիրը, մեր ասածները բոլորը կարգում են: Ինչ վոր խոսվում ե այստեղ, կարգում են և՛ բանվորները և՛ մեր թշնամիները, և վերջիվերջո ինչ ե դուրս գալիս. թե արտասահմանում, թե մեզ մոտ՝ Խորհրդային Միութիւն մեջ բանվոր դասակարգը, գյուղացիութիւնը, ուսանողութիւնը կարգում են այդ բոլորը և բոլորի մեջ պատում ե Ստոկհոլմի համագումարի մասին ասած այդ խոսքը: Պարզ ե, վոր դա չի կարող խառնակութիւն չզցել. Բանվորների մեջ սխալում են խոսակցութիւններ, թե ո՞վ ե արդար իրավացի—մեծամասնութիւնը, թե՞ փոքրամասնութիւնը: Յեվ ամեն մեկը, ով ցանկանա ծանոթանալ այդ զիսկուսիայի հետ, անշուշտ յուր հոգու մեջ մի կասկած ե ունենալու—չլինի՞ թե մի կամ յերկու տարուց հետո կուսակցութիւնը բաժանվի: Ամեն մեկը մտածելու ե—թե յեթե XIV համագումարում խոսք ե յեղել Ստոկհոլմի համագումարի մասին, չլինի՞ թե դա հենց բացատրվում ե նրանով, վոր համագումարի մի մասը պահանջել ե ունենալ իր կից զեկուցողը, յուր համար առանձին ուղի ե ընդգծում և դեմ ե ձայն տալիս համագումարի մեծամասնութիւնը, վոր միևնույն ե, թե ամբողջ կուսակցութիւնը: Նման մտքեր կարող են ծագել ամեն մեկի գլխում:

Ոպարդիցիայի նման հայտարարութիւնները, վորից հետագայում նա չի հրաժարվել, չափազանց մռայլ սովեր են գցել ուղիցիայի հետագայում ասածների վրա. և մասամբ այն փաստերի վրա, վորոնք ներկայումս տեղի են ունենում:

Յես պետք ե ելլ կանգ առնիմ Նադեժդա Կոնստանտինովնայի ճառի յերկրորդ մասի վրա, վորովհետեւ նա ավելի անկեղծորեն ե խոսել, քան ուղիցիայի մյուս փորձված պոլիտիկները: Նա այնպիսի միտք ե արտահայտել, —մարքսիզմը մեզ սովորեցնում ե, վոր յուրաքանչյուր մի ճշմարտութիւն համապատասխանում ե սովյեակ կոնկրետ իրականութիւնը: Մեծամասնութիւնը կարող ե սխալվել: Ճիշտը վոչ թե այն ե, ինչ վորոշում ե համագումարի մեծամասնութիւնը, այլ այն, ինչ վոր համապատասխանում ե իրականութիւնը:

Դա, ի հարկե, ուղիղ ե: Ինքնըստինքյան հասկանալի ե, վոր ամբողջ կուսակցութիւնն ել կարող ե սխալվել, ամբողջ համագումարն ել, կուսակցութիւնն առանձին պարագուլիսներն ել կարող են սխալվել, նույնիսկ Լենինն ել սխալներ ե ունեցել, ճիշտ այնպես, ինչպես Մարքսն ել քիչ չի սխալվել. և միթե այս բոլորը մինչև այժմ մեզ հայտնի չեն յեղել: Ի հարկե, հայտնի են յեղել:

Ինչո՞ւն է կայանում նման խոսակցությունների ելուժյունը: Ի՞նչպես պետք է հասկանալ նման խոսքերը, յերբ դրանք ասվում են վոչ թե վորպես կարծիքների փոխանակություն (փիլիսոփաների ակումբում), այլ նման մտքերը քննության են յենթարկվում քաղաքական համագումարում և ասում են, թե ճշմարտությունը այն չէ, վորին մեծամասնությունն է ձայն տալիս, այլ այն, վորը համապատասխանում է իրականության: Դժվար չե պատկերացնել, թե ինչ են ուզում ասել: Ապա ի՞նչ է դուրս գալիս: Յեթե մենք վերցնենք մեծամասնության կայացրած վորոշումը մի կողմ թողնենք և ասենք, թե ճշմարիտը նա է, վոր համապատասխանում է իրականության, այն ժամանակ մեր առաջ մի հարց կկանգնի, թե արդյոք, ո՞վ է վերջիվերջո հարցը վորոշում և վո՞րն է համապատասխանում իրականությանը: Ի՞նչպես վորոշել այդ հարցը: Վերցնենք մի որինակ: Ընկ. Կամենսկը հաշվել է, վոր հացի ավելցուկների 61 տոկոսը գտնվում է կուլակների ձեռքում, իսկ ուրիշները գտնում են, վոր այդպիսի բան չկա. հավանորեն նրանցից վորեւե մեկը համապատասխանում է իրականության, իսկ գուցե սրանցից վոչ մեկն էլ չի համապատասխանում իրականությանը և մի յերրորդն է համապատասխանում. չէ՞ վոր դա էլ միանգամայն հնարավոր է: Այժմ ես հարց եմ տալիս—յեթե այդպես մտածելու լինենք, այն ժամանակ էլ ինչի՞ համար են կուսակցությունը և նրա վորոշումները: Ել ի՞նչ կարիք կա վորոշումներ կայացնելու, յեթե այդ վորոշումներից հետո էլ «փիլիսոփայորեն» մտածելու են. (Սատանան գիտե, չէ՞ վոր ճշմարտությունն անպայման մեծամասնության զրպանում չի գտնվում, այլ նա միշտ համապատասխանում է իրականության): Սիդորը մտածում է մի կերպ, Պավելը մի այլ կերպ, Անիսիմ Զախարովիչը մի ուրիշ կերպ, իսկ կուսակցությունն ուր մնաց—հարց է առաջանում: Չէ՞ վոր յեթե այսպես մտածելու լինենք, այն դեպքում հնարավոր չի լինի վո՞չ մի վորոշում կայացնել:

Կուսակցության ելուժյունն էլ հենց կայանում է նրա մեջ, վոր ի նկատի ունենալով այն հանգամանքը, թե աշխարհում չկա մի մարգարե, վորը կարողանա 100 տոկոսով ճիշտ վորոշել, թե վորն է համապատասխան իրականությանը—մեծամասնության կայացրած վորոշումը համարվում է վորպես ճշմարիտ վորոշում: Դու գտնում ես, վոր այդ մեծամասնության վորոշումը սխալ է, շատ լավ, սպասիր, յերբ հետևյալ համագումարի սկզբին Կենտրոնական Կոմիտեն զիսկուսիա կբացի, սկսիր պայքարել քո կարծիքի համար և աշխատիր մեծամասնությունն ձեռք բերել. դուցե այդ ժամանակ


դու մեծամասնությունն էլ ստանաս, այդ ուրիշ հարց է: Իսկ յեթե դու այժմ կուսակցության կայացրած վորոշումներին չենթարկվես, նշանակում է դրանով քայքայում ես ամբողջ կուսակցական կազմակերպությունը: 2-րդ չի՞ կարելի կուսակցությունը, վոր բաղկացած է մի միլիոն հոգուց, պատկերացնել այսպես.—ամեն մեկը կարգում, դատում և փիլիսոփայում է այն մասին, թե վորն է համապատասխանում իրականությանը, ըստ վորում մեկը սա հասկանում է այսպես, մյուսը այնպես, յերրորդը—մի այլ կերպ և վերջի վերջո մեծամասնությունը վոչ մի վորոշում չի կայացնում, ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մեծամասնությունն էլ կարող է սխալվել:

Իսկ կուսակցությունը: Այդ դեպքում էլ ինչի՞ է պետք կուսակցությունը: Այն ժամանակ մի՞թե ավելի լավ չեք լինի ասել, թե կուսակցություն այլ ևս չկա, թե կան առանձին «փիլիսոփայոր անձնավորություններ»: այդ դեպքում յեկեք պարզ կերպով ասենք, թե վոչ կուսակցություն կա և վոչ էլ կազմակերպություն:

Յեթե նման դատողությունները մենք դնելու լինենք Ստուկ հոլմի համագումարի մասին արած հայտարարությունների կողքին, այն դեպքում մենք ուղղակի պիտի «կարաուլ» կանչենք: Վորովհետև մեք մի այնպիսի կուսակցական կազմակերպության անդամներ ենք, վորը տարբերվում է մյուս բոլոր կուսակցություններից ներ ենք, վորը տարբերվում է մյուս բոլոր կուսակցության հառաժեղ ցենարալիզմով, խիստ դիսցիպլինայով, կուսակցության համագումարին յենթարկվելով և յուր կուսակցական սկզբունքներով: Իսկ ի՞նչ են ցանկանում այժմ անել: Այժմ ցանկանում են կոալիցիայի, դրուպպաների և Ֆրակցիաների միջոցով մեր կուսակցությունը դարձնել զիսկուսիայով դեպիվոզ փիլիսոփաների ընկերություն, վորը գատում է ճիշտ այնպես, ինչպես պոնտացի Պիդատովը—ի՞նչ է ճշմարտությունը—և ասում է՝ իմ սեփական պորտը (ծիծաղ):

Պարզ է, վոր մեր կուսակցական կազմակերպությունից նման հիմնարկություն ստեղծել չենք կարող: Իրա համար էլ մենք ստիպված եմք այդ նոր ոպպոզիցիայի ընկերներին հիշեցնելու, վոր նրանք Լենինյան ուսմունքի ամենահիմնական ուղուց շեղվում են, այն բանը Լենինյան ուսմունքի և նրա կառուցվածքի մասին ունեցած ուսմունքից: Չէ՞ վոր, ընկերներ, մենք շատ լավ գիտենք, վոր մեր տարածայնությունները մենչի՞ իկների հետ սկսվել են հենց կազմակերպչական հարցերից: Չէ՞ վոր մեր կուսակցության ամենալավ կողմերից մեկը նրա ուժեղ կառուցվածքն է: Կոմունիստական Իստերնացիոնալի ամենամեծ նվաճումներից մեկը հենց նա է, վոր

1560-67



մեր կուսակցութիւնը ոտարերկրյա բանվորներին վորոշ չափով արդեն սովորեցրել է, թե ինչպես պիտի այնպիսի կուսակցութիւն ունենալ, վորը իրենից ներկայացնի վոչ թե դիսկուստայով զբաղ-վող փիլիսոփաների մի խմբակ, այլ ինի միասնական կամք ունեցող յերկաթե մի կուսակցութիւն, վորը միայն կարող կլինի դեմադրելու հսկայական դժվարութիւններին: Այդպիսի կուսակցու-թիւնը միայն ընդունակ կլինի քաղաքացիական կռիւլը տանելու, մեծ ճակատամարտներ վարելու, բարդ քաղաքական մանյովներ կատարելու, մի տեղ ուղղակի ճնշումով, մի այլ տեղ նահանջով, մյուս տեղը արշավելով, մի չորրորդ դեպքում խորամանկութեամբ, մի այլ տեղ պաշտօնումով, և այլն: Այս բոլորին մենք վաղուց վարժ-վել ենք. և սա ել մեր կուսակցութեան իսկական վոզին է:

Յե՛վ անա կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեան դեմ գուրս յեկած ընկերները՝ մեր կուսակցութեան այս հսկայական նվա-ճումը, — վորը լենինյան ուսմունքի ամենահիմնական կողմերից մեկն է, — միանգամայն սոստցել են: Դա կայանում է նրա մեջ, վոր ուղ-ւորիցիան սկզբում պահանջում էր կարծիքների ազատութիւն, ապա պահանջում է իր կենդանի ուժերը ոգտադրածել, իսկ հե-տագայում ոկսում խոսել նույնիսկ Ստոկհոլմի համագումարի մա-տին: Լենինիգմի այս հիմնական ուսմունքը վոչնչացվում է մանա-վանդ այն ժամանակ, յերբ վոր սկսում են խոսել արդեն ինչ վոր որյեկտիվ ճշմարտութեան մասին և մոռանում մեծամասնութեան կայացրած վորոշումը:

Այդպիսով պայքարի ընթացքում յերևան յեկած մի շարք դա-տողութիւններից պարզվեց, վոր ընկ. ընկ. Զինովյեը, Կամեներ և սերիշները XIII համագումարից առաջ նույնիսկ իրենց պահանջած 100 տոկոսային միասնականութիւնից այնքան են հեռանում և այս անգամ արդեն այնպիսի ճառեր են ասում, վոր միանգամայն դեմ են մեր կուսակցութեան հիմնական սկզբունքներին: Այդպիսով Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեան դեմ տարվող պայքարի նման ձևերն ու պրիոմները բնականաբար հանգում են լենինիգմի հիմնական խնդիրներից մեկի — կազմակերպչական հարցի վերաբն-նութեանը, վոր ոտար լեզվով բեվլիգիա է կոչվում:

Այժմ ընդունված է մեծ-մեծ բաներ խոսել, սակայն չպիտի մոռանալ, վոր այդ մեծ-մեծ խոսքերը շատ կրկնելուց բոլորովին տեսնամանում են: Ինքնըստինքյան հասկանալի է, վոր առ այժմ կազմակերպչական հարցում հանդես բերած այդ խառնաշփոթու-թիւնը, վոր նշանակում է լենինիգմի բեվլիգիա, դեռ ևս վերջնա-կանապես չի ձևակերպվել: Հենց վոր մեծամասնութեան կողմից

սկսեցին գոչել — «Այդ ինչ պատահեց, Փրակցիաների ազատութիւնն էք պահանջում, ել ուր մնացին ձեր նախկին հայացքները» — այդ ժամանակ ուղարկիցիան իր լոզունգը յետ վերցրեց և թազցրեց զրպանում: Կամեների կարգացած հայտարարութեան մեջ այդ մա-սին այլևս խոսք չկար:

Յե՛վ դա շատ հասկանալի է, վորովհետև ուղղակի աչք է ծակում, դրանից շատ վատ հոտ է փչում, ավելի վատ հոտ, քան այն հոտած ձվերից, վորոնց մասին խոսեց ընկ. Զինով-յեը և վորոնցով իբր թե ոմբակոծում են Լենինգրադի կազ-մակերպութեանը: Այդ լոզունգը այնքան վտանգավոր էր, վոր նրանք իսկույն վերցրին և թազցրին զրպանում: Մենք դրա մա-սին այստեղ հիշեցի՞ք նրա համար, վորպեսզի ցույց տանք, թե ուր կարող են հասնել այն ընկերները, վորոնք սխալ ճանապարհի վրա են կանգնած:

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր քանի նման տրամադրու-թիւններ յերևան են յեկել, անհրաժեշտ էր դիմադրութիւն ցույց տալ. և կուսակցական համագումարի մեծամասնութիւնն էլ այդ-պես վարվեց, նման տրամադրութիւններին դիմադրեց, նման դա-տողութիւններին դեմ պայքարեց և բոլորովին չսխալվեց, վոր այդ-պես արավ: Համագումարը այս խնդրում իսկապես վոր պաշտպա-նեց լենինիգմը այդ թեքումներից, վորովհետև, մեկ էլ եմ կրկնում, լենինյան ուսմունքին քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր մարդ, քիչ թե շատ գրագետ ամեն մի բոլշևիկ շատ լավ գիտե, վոր կազ-մակերպչական հարցում լենինիգմին միանգամայն ոտար և վնասա-կար են այնպիսի պահանջները, ինչպիսին են՝ զանազան Փրակցիա-ների և գրուպպաների ազատութիւն կամ Ստոկհոլմի համագումա-րի մասին խոսակցութիւններ, և այլն, և այլն:

III ՆՈՐ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՐՈ-ՅՈՒՄԸ

Այժմ յես անցնում եմ իմ գեկուցման յերրորդ մասին, ամենա-եյական խնդրին, այն հարցին, թե ինչ իսկական տարածայնու-թիւններ կան մեր քաղաքականութեան մեջ: Կուսակցութեան հա-մագումարում հենց այդ հարցերն էլ դարձան յեղած վիճաբանու-թիւնների բովանդակութիւնը և այդ հարցերի տեսակետից ել վերջի վերջո նախագծվեցին այն բաժանումները, վորոնք հանդես յեկան կազմակերպչական հարցերի ասպարեզում և վորոնց մասին յես քիչ առաջ խոսեցի: Ամենից առաջ յես կաշխատեմ մի քանի

խոսքով նոր ուղղութիւնային ընդհանուր զաղափարական դեմքը պարզել և վորքան կարելի է կարճ խոսել այն հիմնական քաղաքական գծերի մասին, վորոնք բնորոշ են այդ ուղղութիւնային համար:

Ինձ թվում է, թե դատողութիւնները հետևյալ շարանը կարող է մոտավորապես պարզել ուղղութիւնային իսկական դեմքը: Ահա թե ինչ են ասում նրանք. — միջազգային հեղափոխութիւնն ուշանում է, կապիտալիզմը կայունանում է (ստաբիլիզացիա), իսկ քանի վոր միջազգային հեղափոխութիւնը ուշանում է, արդյոք, մենք սեփական ուժերով կարող ենք մեր առաջ զբաղակալ խնդիրները վճռել, և չէնք կործանվի արդյոք: Հազիվ թե կարողանանք, վորովհետև մեր յերկիրը թե տեխնիքապես և թե տնտեսապես հետամնաց է: Յեթե միջազգային հեղափոխութիւնը սկսվեր և արագ քայլերով առաջ գնար, այն ժամանակ զուցե մենք զիմանայինք: Իսկ այդ ոգնութիւնը չկա. արդյոք, մենք չէնք խորտակվի:

Ապա նրանք մտածում են այսպես. — 1921 թվին միջազգային հեղափոխութիւնը ուշանալու պատճառով մենք մացրինք նոր տնտեսական քաղաքականութիւն (ՆԵՊ): Դա մի նահանջ էր: Այժմ էլ մենք դարձյալ շարունակում ենք նահանջել և այդ քաղաքականութիւնից չենք հրաժարվում: Միթե սա լավ բան է: Մեր առաջ ինչ սպառնալիքներ են կանգնած: Ասում են, վոր մեր պետական արդյունաբերութիւնը սոցիալիզմի մի կտորն է: Թերևս այդ էլ այդպես չէ, ավելի շուտ մեր արդյունաբերութիւնը պետական կապիտալիստական է: Աշխատավորձը չափազանց ցածր է, արդյունաբերութիւնն մեջ փոխհարաբերութիւնները դեռ ևս այնպես են, վոր բանվորները չափազանց քիչ ռոճիկ են ստանում, տնտեսավարները (խոզյայտովեննիկ) անհամեմատ լավ են ապրում, մեր ամբողջ արդունաբերութիւնը շուկայի միջոցով կապված է գյուղացիական տնտեսութիւն հետ — ո՛ր է այստեղ սոցիալիզմը:

Ահա թե ինչպես են մտածում ուղղութիւնային հարող ընկերները, ահա թե ինչու են նրանք կասկածում: Իսկ վերջին ժամանակներս զբան ավելանում են նաև ուրիշ բաներ: Որինակի համար համագումարում պարզվեց, վոր նույն այս հողի վրա աճում են նաև այսպիսի մտքեր, թե մեր պետական արդյունաբերութիւնը չի կարելի համարել սոցիալիստական: Բայց զբանով էլ հարցը չի փակվում: Խոսում են նույնիսկ մեր բանակի մասին: Որինակի համար Լենինգրադում ուղղութիւնները զինվորական կոմունիստներին թույլ չեն տալիս ժողովներին ներկա լինել և ծաղրում են նրանց «զալատապագոններին» անվանելով: Մի ուրիշ բան: Ընկ. Սակոնիկովը մեր համագումարում ասում է, թե մեր բանկերը կա-

պիտալիստական հիմնարկութիւններ են. և վոր կուլակն էլ չափազանց արագ կերպով աճում է ու ապրանքային ավելցուկների 61 տոկոսը իր ձեռքն է հավաքել: Ընկ. Զալուցկին էլ ասում է, թե պետական ապարատը զանազան դասակարգերի պայքարի ֆոկուսն է և վոչ թե պրոլետարական դիկտատուրայի կազմակերպութիւնը, թեկուզ և ազավաղված կերպով: Այստեղ, ինչպես տեսնում եք, Զալուցկին ցույց է տալիս, թե նույնիսկ պետական ապարատն էլ է ֆոկուս:

Վերջիվերջո այստեղից ինչ է ստացվում — միջազգային հեղափոխութիւնը ուշացել է, ՆԵՊ-ը — դա անդադար նահանջ է, մեր տեխնիքական հետամնացութիւնն պատճառով մենք կխորտակվենք, թե ինչ է մեր պետական արդյունաբերութիւնը — չի հասկացվում — վոչ մուկ է և վոչ էլ գորտ, մեր բանակը ևս սկսել է սխալ ճանապարհով գնալ, մեր բանկերը կապիտալիստական հիմնարկութիւններ են, կուլակը արագ կերպով ուժեղանում և արշավում է, մեր պետութիւնը վոչ թե պրոլետարական կազմակերպութիւն է, այլ զանազան դասակարգերի կովի ֆոկուս է: — Ի՞նչ է ստացվում այս բոլորից: Թշնամական ուժեր վորքան ուզեք կան մեր դեմ, մեր ուսերի վրա մեծ ծանրութիւններ կան և մենք մենակ չենք կարող տանել, իսկ միջազգային հեղափոխութիւնը շարունակ ուշանում է: Ի՞նչ է մնում մեզ անելու: Մնում է միայն մեզ հրաժարվել մեր հիմնական սկզբունքներից կամ այլասերվել. և մենք թերևս այսպես էլ անում ենք:

Ահա, ինձ թվում է, ուղղութիւնային այն զաղափարական դեմքը, վոր պարզեցին նրան հարող բնկերները իրենց ճառերում: Դա, անկասկած, հոռետես մի հոգաբանութիւն է, դա հուսախաբոված մարդու մի հոգաբանութիւն է, վորն ուղղակի չի հավատում, թե մենք կարող ենք հաղթահարել մեր առաջ կանգնած բոլոր դժվարութիւնները:

Սխալ կլինի կարծել, թե այդ հոգաբանութիւնը յերկնքից է իջել. սխալ կլինի նույնպես կարծել, թե այս բոլորը մի յերկու ընկերների թեորեալիքական խորհրդածութիւնների արդունք է: Այդ տրամադրութիւնը կամ այդ հոգաբանութիւնը ունի յուր հողը և վորոշ պայմանների արդունք է, դա արտահայտում է մասսաների վորոշ մասի լքված տրամադրութիւնները և դրա համար էլ դա չափազանց վտանգավոր է, վորովհետև այն ընկերները, վորոնք արտահայտում են այդ տրամադրութիւնները, նշանակում է շարժման պոչից քարը են գալիս և պանիկա տարածում: Մինչդեռ, միանգամայն հակառակը պիտի անել: Նման դեպքում հարկավոր է միան-

գամայն սառնասրտութեամբ և առանց տատանումների հարցը պարզ կերպով դնել:

Այս բոլորը դեռ վերջնականապես չեն ձևակերպվել վորպես թեորիա և մի ամբողջութուն չեն ներկայացնում իրենցից: Կոնկրետ առաջարկութիւններ տալու տեսակետից ուղղորդիչիան շատ աղբատ եր և համարյա թե «մերկ» եր: Դա յերևաց նրանից, վոր յերբ մենք նրան ասացինք՝ «Շատ լավ, դուք ասում եք, վոր մենք թերագնահատել ենք կուլակին, իսկ դուք ինչ կոնկրետ առաջարկութիւն ունեք: Դուք ասում եք, վոր մենք գլուղի չքավորութեանը չենք ոգնում: Իսկ դուք ինչ եք առաջարկում: Դուք ասում եք, վոր մենք ՆԵՊ-ի բացասական կողմերը չենք նկատում, իսկ քննչ կառաջարկելիք դուք, վորպեսզի այդ վտանգները նախատեսենք»: Յերբ վոր մենք հարցը այսպես դրինք, ուղղորդիչիայի կողմից վոչ մի կոնկրետ առաջարկութիւն չստացանք: Սա ցույց է տալիս, վոր ուղղորդիչիան մի ամբողջացած բան դեռ չունի, վոր նա միայն մի վորոշ տրամադրութիւն է արտահայտում: Բայց միաժամանակ դա ցույց է տալիս, վոր այդ տրամադրութիւնը այնքան ուժեղ է, վոր մեր կուսակցութեան մեջ իսկ արդեն վորոշ թերութիւններ են յերևացել, իսկ այդ թերութիւնների դեմ հարկավոր է վճռականապես պայքարել, քանի դեռ նա շատ չի հասունացել:

IV. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ.

Ուղղորդիչիայի ընդհանուր գեմքը պարզելուց հետո, թույլ ավելք ավելի մանրամասն կանգ առնել մեր տարածայնութիւնների գլխավոր հարցերի վրա: Դուք գիտեք, վոր ամենակարևոր հարցերից մեկը մի յերկրում սոցիալիզմը կառուցելու խնդիրն է:

Յես այսոր «Ինիամո» գործարանում եի: Յես գիտամաք ժողովից առաջ այնտեղ գնալով, խնդրեցի, վորպեսզի ինձ մտ կանչեն մի 20—30—40 կուսակցական և անկուսակցական բանվորներ և ցանկանում եի իմանալ, թե նրանք ինչ են մտածում մեր զիսկուսիայի մասին: Ի հարկե, այդ վորձը շատ չնչին եր. բայց միաժամանակ պետք է ասել, վոր այն խոսակցութիւնը, վորը տեղի ունեցավ մեր մեջ, շատ ոգտավեա եր: Մի շարք հարցեր կան, վոր ձեծվել են մեր զիսկուսիայի ժամանակ, կենդանի արձագանք են գտնում բանվորական մասսաների մեջ. հենց այդ հարցերի թվին է պատկանում նաև սոցիալիզմը մի յերկրում կառուցելու խնդիրը: Դրա հետ միասին պիտի մասնանշել, վոր այդ բոլոր հարցերը բանվորական մասսաների մեջ զրվում են ավելի կոպիտ ու սուր ձևով և համարյա նույնպիսի պատասխաններ են ստացվում, ինչպես և

«վերևում»: Մի ընկեր ասում ե. — Ինչպես կարող ենք մի այնպիսի աղբատ յերկրում, ինչպիսին մերն է, լուծել այդ բոլոր դժվար հարցերը. իսկ մի ուրիշը պատասխանում ե.— յեթե մենք սկզբից գիտեինք, վոր դժվար է լինելու այդ հարցերը լուծել, այդ դեպքում ել ինչու ենք Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը կատարել: Յեթե մենք այս ութ տարվա ընթացքում կարողացել ենք հաղթահարել բոլոր դժվարութիւնները, ապա ուրեմն, հետագայում ել կարող ենք: Իմ կարծիքով միայն այսպես կարելի է դնել հարցը, և սա ամենաճիշտն է— կամ կարող ենք, կամ չենք կարող: Այստեղից պարզ յերևում ե, վոր այդ հարցը չափազանց հետաքրքրում է վոչ միայն շարքային կուսակցական ընկերոջը, այլ նաև անկուսակցական բանվորին: Այլ կերպ ել չեր կարող լինել, վորովհետև մենք շինարարական աշխատանքների մեջ ենք քաշել հսկայական բանվորական մասսաների: Միանգամայն սխալ կլիներ կարծել, թե բանվոր դասակարգի լայն մասսաները չեն հետաքրքրվում այն հարցով, թե ուր ենք մենք գնում և վերտեղ կհասնենք: Մենք շատ եժան կարծիք ունեցած կլինեինք բանվոր դասակարգի լայն մասսաների մասին, յեթե մի ըրպե անգամ յենթադրեինք, թե այդ բոլոր խնդիրների մասին միայն մենք կարող ենք խոսել ու հասկանալ: Սակայն, ներեցեք, այդ այդպես չէ: Ծիշտ է, նրանց մեջ կանալ: Սակայն, քննվում և այլ ձևակերպումն ստանում, այդ հարցերը այլ կերպ են քննվում և այլ ձևակերպումն ստանում, բայց վոր այդ բոլոր հարցերը հետաքրքրում են բանվորական մասսաներին, զրանում վոչ մի կասկած լինել չի կարող: Դրա համար մյան կարգերի գանազան բացասական կողմերը, որինսկի համար տեսնում է շքեղ ժագազիներ և զրանց կողքին անխնամ յերեխատեսնում է շքեղ ժագազիներ և զրանց կողքին անխնամ յերեխատեսներին, վորոնք դեռ գոյութիւն ունեն հեղափոխութեան 9-րդ տարում, նա կամա-ակամա հարց է տալիս— ուր ենք մենք գնում: Մեթե բանվորը այսպիսի հարց չի տալիս. ի հարկե տալիս է. և նա չի սխալվում, վոր այդպիսի հարց է տալիս: Նա ամենաապուշ նա չի միտքով, վոր այդպիսի հարց չտար: Մեր շարքային բանվորը կլիներ, յեթե այդպիսի հարց չտար: Մեր շարքային բանվորներին, մանավանդ նրանց, վորոնք զյուղից նոր են յեկել գործարանում աշխատելու, այս հարցերը շատ են հետաքրքրում: Իսկ ծարանում աշխատելու, այս հարցերը նույնպես դնում են իրենց իսկ կուսակցականները, այս հարցերը նույնպես դնում են իրենց առաջ, մասամբ նոր բանվորների զրգումով: Յե՛վ դա այլ կերպ ել չի կարող լինել, վորովհետև մեր կուսակցական բանվորները բանվորական մասսաներից դուրս չեն ապրում, այլ ամբողջ ժամանակ գտնվում են նրանց մեջ, վորոշ չափով նրանց ազդեցութեանը յենթարկվում և արտահայտում նրանց տրամադրութիւնները:

Սոցիալիզմը մի յերկրում կառուցելու հարցը, կարելի է ասել, բարձրացնում է յուրաքանչյուր բանվոր. միայն տարբերութունը կայանում է նրա մեջ, վոր նա այլ կերպ է ձևակերպում այդ հարցը: Ահա թե ինչ է ասում նա. «Սա ինչ սոցիալիզմ է, յերբ մի կողմ թափված են անազին քանակությամբ անխնամ յերեխաներ, իսկ գրանց կողքին շքեղ մագաղիներ»: Դա նույն հարցն է, մի այլ ավելի կոպիտ ձևով արտահայտած: Դա նույն հարցն է, վոր մենք ավելի ուղիղ ձևակերպած ասում ենք—հնարավոր է արդե՞ք կառուցել սոցիալիզմը մի յերկրում:

Յես կցանկանայի առաջին հերթին կանգ առնել այս հարցի վրա: Յերբ վոր սոցիալիզմը մի յերկրում կառուցելու հարցը համագումարի մեծամասնութունը դնում և գրական պատասխան է տալիս, այդ դեպքում իսկույն մեր դեմ արշավանք է սկսվում. «Ահա թե ինչ, միթե դուք ցանկանում եք մի յերկրում սոցիալիզմ ստեղծել. կամ չլինի թե դուք կցանկանայիք մի գավառում կամ մի նահանգում սոցիալիզմ կառուցել. չլինի թե միայն մի հետամնաց գյուղում կցանկանայիք սոցիալիզմ կառուցել: Իսկ յեթե այդ այդպես է, հապա ինչպես եք դուք այդ բանը համաձայնեցնում ձեր ինտերնացիոնալիստական ծրագրի հետ: Յեզ միթե դա այնպիսի հիմարների տեսակետ չէր լինի, վորոնք մտածում են սոցիալիզմի կառուցումը մի յերկրով սահմանափակել: Միթե դա չի նշանակում հրաժարվել միջազգային կապից, ինտերնացիոնալիզմից, հրաժարվել մարքսիզմից և լենինիզմից»: Միթե մենք յերեք հարյուր անգամ չենք ասել, վոր յեթե միջազգային հեղափոխութուն չլինի, միջազգային կապիտալիզմը մեզ կուլ կտա: Միթե մենք քանիցս չենք ասել, վոր մենք մեր վերջնական հաղթանակը կապում ենք միջազգային հեղափոխության հետ: Իսկ քանի վոր դուք կառուցում եք սոցիալիզմը մի յերկրում, քանի վոր դուք գտնում եք, թե դա հնարավոր է, այն ժամանակ ել ինչի է հարկավոր միջազգային հեղափոխութունը: Չլինի թե դուք ցանկանայիք այդ մի յերկրից կամաց-կամաց հոմիոնտերնն էլ հեռացնել, քանի վոր սոցիալիզմը կարելի է կառուցել նոյն իսկ մի վորևէ գյուղում» (ծիծաղ): Ահա թե ինչպես են դնում հարցը, ահա թե ինչ են ասում: Նրանք ասում են, թե գրանով ել դուք ցույց եք տալիս ձեր նեղ նացիոնալիզմը, ուրեմն և ժխտում եք միջազգային տեսակետը: Նրանց ասելով, մարդիկ իբր թե այսպես են մտածում, վոր կարելի է առանց միջազգային պրոլետարիատի ել յուրա տանել, ուրեմն և գրա համար ել ժխտում են ինտերնացիոնալիզմը: Ահա և ձեզ ոպպորտյունիզմ, ահա և ձեզ կուլակային թեքում, ահա և ձեզ կուլակ չկա, և այլն, և այլն:

Նման «պատճառաբանությունների» հետ հարկավոր է հաշվի նստել, վորովհետև այդպես մտածում են շատերը: Այդպես մտածողները կարող են կարծել, վոր կուլակցության մեծամասնութունը բացարձակապես հրաժարվում է յուր հիմնական սկզբունքներից և վոչ միայն հրաժարվում Հոկտեմբերյան Հեղափոխության նվաճումներից, այլ և հրաժարվում յուր միջազգային պարտականություններից: Ահա մոտավորապես ինչպես կարելի է ձևակերպել այն բոլոր ասածները, վոր բերում են մեր դեմ: Յես պետք է ասեմ, վոր այստեղ իրար հետ կապված ավի այն բոլորը, ինչի մասին խոսել է ոպպոզիցիան առանց վորևէ կապակցության Սակայն, կարծում եմ, վոր ինձ թույլ կտրվի այդ աշխատանքը կատարել— դա համապատասխանում է մեր յեղբայրական համերաշխությանը (ծիծաղ):

Այսպես, ուրեմն, այս պատճառաբանությունների հետ ել հարկավոր է հաշվի նստել, հարցը լավ պարզել և հիմնավորել այն տեսակետը, վորը մենք համարում ենք ուղիղ: Ամբողջ խառնաշփոթությունը առաջանում է նրանից, վոր հարցին նայում են շատ հասարակ ձևով: Յեթե մեր առաջ հարցը այսպես դնելու լինեն— արդյոք, կարո՞ղ է յերկար գոյություն ունենալ մի այնպիսի գրութուն, յերբ միջազգային հեղափոխութուն չի կատարվում և մենք ել, վորպես պրոլետարիատի ղեկառուներ այն և սոցիալիզմի յերկիր, անվերջ պաշտպանում ենք մեր գոյությունը: Կամ թե մի այլ կերպ: Յեթե նրանք մեր առաջ հարցը դնեն այսպես—կարո՞ղ է պատահել, արդյոք, վոր միջազգային հեղափոխութունը չլինի, իսկ մենք ել հանգիստ կերպով շարունակենք առաջ գնալ, կառուցենք մեզ մոտ սոցիալիզմ և վոչ վոր ել մեզ չխանգարի: Կրկնում եմ, յեթե մեր առաջ հարցը այսպես գրվեր, այն ժամանակ մենք ինչպես կպատասխանեինք դրան: Պարզ է, վոր այդպիսի հարցին միայն կարելի էր բացասական պատասխան տալ, վորովհետև մենք դեռ ևս գրավում ենք ամբողջ յերկրագնդի 1/6 մասը և դեռ շատ թույլ ենք: Իսկ 3/6 մասը գրավում են մեր թշնամիները, վորոնք, ընդհակառակը, շատ ուժեղ են: Ար թշնամիների թվին են պատկանում այնպիսի հսկայական ուժեր, ինչպիսին են Էյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները կամ Անգլիան իրենց հսկայական ռազմական տեխնիկայով և խոշոր ուժերով: Ապա ինչ եք կարծում, կփորձեն նրանք յերբևիցե մեզ խեղդել, թե մինչև վերջը հանգիստ կերպով նայելու և փառաբանելու են մեր գոյությունը: Պարզ է, վոր վաղ թե ուշ մեր մեջ կոնֆլիկտ լինելու է: Ապա, հարց է առաջանում. միթե մենք կարող ենք ասել, թե այդ պայքարի մեջ

մենք կարող կլինենք դիմադրել, յեթե միջազգային հեղափոխութեան կողմից մեզ ոգնութիւնն չլինի և յեթե Արևմուտքի բանվոր դասակարգը իրեն համար հանգիստ նստի: Ի հարկե չե:

Յեթե մինչև այժմ ել մեր գոյութիւնը պաշտպանում ենք, դա խոշոր չափով կախված է նրանից, վսր թեպետ միջազգային հեղափոխութիւնը դեռ չի հաղթանակել և բանվոր դասակարգը դեռ իշխանութիւնը չի վերջրել, այնուամենայնիվ բոլոր յերկրների բանվորները սանձահարել են իրենց բուրժուազիային և թույլ չեն տվել մեր դեմ դուրս գալու. դա մեկ: Մյուս կողմից ել Մորոկկոյի, Ասորիքի, Հնդկաստանի և Չինաստանի նման գաղութային և կիսագաղութային յերկրները կապիտալիստական հասարակութեանը մեծ անախորժութիւններ են պատճառել: Յեթե այս բոլորը չլինեին, հավանական է, վոր մենք մեր հունգարական ընկերների նման անհաջողութիւն կրեինք և գուցե, նույնիսկ, չկարողանայինք դիմադրել 1918—20—21 թվերի պաշարումներին և այլևս գոյութիւն չեինք ունենա: Յեթե մեր կողմը չլիներ միջազգային հեղափոխութեան ուժը, վորը չնայած դեռ չի հաղթել, բայց և այնպես կա և շարունակում է յուր գոյութիւնը, այն ժամանակ մեզ համար չափազանց դժվար կլիներ: Այս հարցում վոչ մի կասկած չի կարող լինել: Կասկած չի կարող լինել նաև այն հարցում, վոր յեթե միջազգային հեղափոխութիւնը ավելի ու ավելի չզարգանա, այլ ընդհակառակը, դադարի, այդ դեպքում, իհարկ է, վոչ մի յերաշխիք չի կարող լինել, վոր կապիտալիստները մեզ կարող են կուլ տալ: Մենք յերբեք չենք կարող հավատացած լինել, վոր այդ դեպքում չենք հաղթվի ու անագին փրկանք չենք կրի, բանի վոր ուժը մեծ չափով կապիտալիստների կողմն է: Այստեղից անա պարզ է, թե ինչու մեր վերջնական հաղթանակը կապում ենք միջազգային հեղափոխութեան հետ թե միջազգային պրոլետարական շարժման և թե մեր շարժման զարգացման տեսակետից: Դա ինքնըստինքյան պարզ է, վորովհետև սրանք իրարից տարբեր բաներ չեն: Ինչպես մեր շահերն են կապված միջազգային հեղափոխութեան շահերի հետ, այնպես ել Անգլիայի, Ֆրանսիայի կամ Գերմանիայի պրոլետարական շարժման շահերն են կապված մեր Խորհրդային Միութեան ուժեղանալու, ամբանալու կամ անելու հետ: Կարծիք է, արդյոք, այդ մասին վեճ լինել. վոչ մի վեճ չի կարող լինել: Վոչ վոք չի կարող վիճել այն մասին, թե միայն միջազգային պրոլետարական շարժման զարգացումը կարող է յերաշխիք լինել, վորպեսզի կապիտալիստները չհամարձակվեն մեր դեմ զինված ուժերով դուրս գալու: Բայց միաժամանակ չպետք

է մոռանալ մի այլ հանգամանք ևս: Այստեղ կա նաև մի այլ, այսպես ասած, հակառակ կախումն. դա նա է, վոր մեր Խորհրդային Միութեան գոյութիւնը ինքնըստինքյան սանձահարում է Արևմուտքում գոյութիւն ունեցող ռեակցիային և թույլ չի տալիս նրան ուժեղանալու: Յեթե մի վոչ գեղեցիկ որ մենք դադարեինք մեր գոյութիւնը, այդ դեպքում առանց կասկածի պիտի ասել, վոր բոլոր կապիտալիստական յերկրներում հալածանքը ավելի կուժեղանա բանվոր դասակարգի դեմ: Այստեղից պարզ է, վոր մենք ամենասերտ կապերով կապված ենք Արևմուտքի բանվոր դասակարգի և գաղութների ժողովուրդների հետ:

Բայց բանը նրանումն է, վոր վեճը այս գծով չի գնում: Այս ինդրում տարածայնութիւններ չկան, այլ վեճը ուրիշ խնդրի շուրջն է:

Ընկ. ընկ. Կամեներ և Չինովկեր ասում են, վոր մեր տեխնիքական և տնտեսական հետամնացութեան պատճառով չենք զիւսանա. այս մասին մենք խոսեցինք, հիշեցրինք ոպպոզիցիային կուսակցութեան համագումարում: Գլխավորը այստեղ յերկու փաստեր են: Առաջինը այն, վոր ընկերները չառարկեցին այն բանի դիմ, վոր այդպես ասել են և յերկրորդ, չգիտեմ ինչու նրանք ավելի հարմար գտան այդ հարցի մասին չխոսել, հավանորեն յենթադրելով, վոր դա նրանց ամենաթույլ կողմն է: Այսպիսով, ուրեմն, մենք այս կետի դեմ վիճեցինք. բայց չէ՞ վոր սա այլ հարց է, մի հարց, վոր առաջին հարցի հետ անուղղակի կապ ունի, այն հարցի, թե հնարավոր են արդյոք, հարձակումներ կապիտալիստական պետութիւնների կողմից: Մենք բոլորս խոստովանում ենք և պիտի խոստովանենք, վոր միայն միջազգային հեղափոխութիւնն պիտի կարող է մեզ ազատել միջազգային իմպերիալիզմի հետ և, վոր կարող է մեզ ազատել միջազգային իմպերիալիզմի հետ ունենալիք ընդհարումի և թերևս պարավելու հնարավորութիւնից: Այս հարցում վոչ մի կասկած չի կարող լինել:

Բայց, արդյոք, այսպես կլինի, յեթե մենք այլ հարց դնելու լինենք մեր առաջ, այն է, թե մեր տեխնիքական հետամնացութեան պատճառով մենք անալայման պիտի խորտակվինք:

Այս հարցը քիչ թե շատ նոր է այն տեսակետից, վոր առաջին անգամն է նա դրվում մեր կուսակցութեան առաջ ավելի պարզ ձևակերպված, իսկ ըստ եյութեան նա ամենեին նոր չէ: Այսպես կոչված սոցիալիստական բանակից մեր բոլոր թշնամիները հարցը միայն այդ ձևով են դրել: Վերն է նրանց գլխավոր «պատճառաբանութիւնը» մեր դեմ կամ ավելի ճիշտ, վեր պատճառաբանութիւնն են նրանք համարում գլխավոր: Նրանք ասում են. — «Մի-

Թե դա մարքսիզմ է, յերբ դուք ասում եք, թե սոցիալիզմը կարելի է կառուցել մի այնպիսի յերկրում, վորտեղ ազգաբնակչության մեծ մասը գյուղացիներ են: Չե՞ վոր գյուղացիութիւնը մանր բուրժուազիա է: Միանգամայն հիմարութիւն է կարծել, թե սոցիալիզմը կարելի է կառուցել մի յերկրում, վորտեղ բանվոր դասակարգը ազգաբնակչության ամենաչնչին մասն է կազմում: Յե՞վ իսկապէս հարցուր միլիոն գյուղացիութիւնն և մի քանի միլիոն բանվորներ, վոր միեւնույն է, թե հսկայական մանր-բուրժուական ծովում մի փոքրիկ կղզի: Ահա թե ինչ են ասում սոցիալ-դեմոկրատները: Յե՞վ այդ ասում են վոչ միայն սոցիալ-դեմոկրատները, այլև բուրժուազիան:

Մի՞թե մենք չենք հիշում, թե Լենինին շարունակ ինչի մեջ էին մեղադրում: Լենինին մեղադրում էին նրանում, վոր նա իբր թե մի նոր դպրոց է ստեղծել, վոր հակասում է Մարքսի դպրոցին: Նրանք ասում են, թե Մարքսի կարծիքով չի կարելի սոցիալիզմ կառուցել մի յերկրում, վորտեղ բանվոր դասակարգը չնչին փոքրամասնութիւնն է կազմում, մինչդեռ Լենինի կարծիքով կարելի է կառուցել: Ըստ սոցիալ-դեմոկրատների նույնպէս չի կարելի կառուցել սոցիալիզմ մի այդպիսի յերկրում: Իսկ ըստ Լենինի դուրս յեկավ, վոր կարելի է: Յե՞վ ինչ են ասում մեր թշնամիները: Նրանք ասում են, վոր մենք նահանջում ենք մարքսիզմից:

Չենց այդ հարցի հետ ել կապված են մի շարք ուրիշ հարցեր: Մեզ ասում են, թե պրոլետարական պետութիւնն չի կարող լինել այնտեղ, վորտեղ հենց ինքը պրոլետարիատը փոքրամասնութիւնն է կազմում: Իրա համար ել հարկավոր է բուրժուական դեմոկրատիա, դրա համար ել պիտք է առաջ քաշել հետեյալ լոզունգը. — «հետ դեպի առողջ կապիտալիզմ»: Ահա թե ինչ են ասում մենշևիկները: Այժմ՝ մի կողմ թողնենք այն բոլորը ինչ ասում են մենշևիկները և տեսնենք, թե ինչ են ասում մեր կուսակցության մեջ գտնվող մի քանի խմբակներ: Մեր կուսակցության մեջ ևս յեղել են այնպիսի խմբակներ, վորոնք նման կարծիքներ են հայտնել: Նման կարծիքն է ունեցել նաև ընկ. Տրոցկին, վորի հետ անցյալ և նախանցյալ տարիներում մենք ուժեղ դիսկուսսիա ենք ունեցել: Ի՞նչ է ասել ընկ. Տրոցկին: Նա մի կողմից վճռականապէս դեմ է յեղել մենշևիկներին, վորոնք ասել են, թե — «բուրժուական հանրապետության սահմաններից դենը չես կարող անցնել», իսկ մյուս կողմից ել ընկ. Տրոցկին դեմ է յեղել բոլշևիկներին, յերբ նրանք ասել են, թե պրոլետարական դիկտատուրան կարելի է պաշտպանել գյուղացիության հետ դաշնակցելով: Ընկ. Տրոցկին ասել է, թե

այդպիսի բան անկարելի է: Գյուղացին ձեզ իսկույն կղավաճանի: Յե՞վ հենց վոր բանվոր դասակարգը իշխանութիւնը վերցնի, իսկույն կռիվ է սկսվելու նրա և գյուղացիության մեջ: Այդ կովում պրոլետարիատն անշուշտ կհաղթվի, յեթե յեվրոպական պրոլետարիատը յուր յերկրում հաղթանակելով մեզ անմիջապէս ոգնության չհասնի: Արեւմուտքում հաղթող բանվոր դասակարգը յուր տեսնիկայով կոզնի մեզ հաղթահարելու բոլոր դժվարութիւնները: Իսկ այն, ինչ բոլշևիկներն են ասում, դա արդեն մարքսիզմ չէ: Յե՞վ ընկ. Տրոցկին այս բոլորից հետո ասում է, թե իբր բոլշևիկները մարքսիզմն աղավաղում են և այսպէս ասած «բոլշևիկյան մեկնաբանութիւն» տալիս դրան:

Իուք գիտեք, վոր Տրոցկու այս կարծիքների դեմ մենք ուժեղ պայքար մղեցինք: Մենք նրան ասացինք. դու կարծում ես, թե մենք մարքսիզմին «բոլշևիկյան մեկնաբանութիւն» ենք տալիս. ի՞նչ կա վոր: Թո՞ղ այդպէս ել լինի, քանի վոր դա «համապատասխանում է իրականութեանը», ինչպէս ասել է Նադեժդա Կրուպսկայան և յեթե այդ այդպէս է, դա վատ բան ել չի: Այդ ուղղութեամբ ել մենք կարող ենք առաջ գնալ:

Ահա թե ինչպէս է յեղել գործը: Կուսակցութիւնը պայքարել է նման թեքումների դեմ: Վերջին յերկու դիսկուսսիաների ժամանակ մենք ուժեղ պայքարեցինք այդ թեքման դեմ: Յե՞վ ի՞նչ ոգուտատացավ կուսակցութիւնը այդ յերկու դիսկուսսիաների ժամանակ տարված պայքարից: Կուսակցութիւնն այն ոգուտան ստացավ, վոր սովելի քան համոզվեց, թե իշխանութիւնը վերցնելուց հետո բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ անպայման կռիվ չպիտի լինի. կուսակցութիւնը համոզվեց, վոր ճիշտ է, նման պայքարը հնարս վոր է, բայց չի կարելի ասել, թե անպայման կլինի: Ի հարհնարս վոր է, բայց չի կարելի սկսվեր և բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ պառակտում լիներ, պարզ է, վոր պրոլետարական դիկտատուրան կխորտակվեր: Սակայն, հենց ամբողջ հարցն էլ նրա մեջ է, վոր յեթե մենք ուղիղ քաղաքականութիւն վարեել յուր լինենք՝ կարող ենք այդ բանի առաջն առնել: Ընկ. Լենինն ել իր վերջին զրկածներում դարձյալ այսպէս է պատասխանում. — «Բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ պառակտումն հնարավոր է, բայց չի կարելի ասել, թե անխուսափելի է»:

Իսկ յեթե բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ պառակտումն անխուսափելի չէ՝ ապա դա ի՞նչ է նշանակում: Նշանակում է, թե չնայած վոր մեր յերկիրը հետամնաց է, բայց և այնպէս մենք չենք խորտակվի: Ճիշտ է, մենք կամաց-կամաց առաջ

կգնանք — առաջ մեր մուժիկի ձիու ոգնությամբ, ապա խոշոր արդյունաբերության նստույզի ոգնությամբ, իսկ հետո ել ելեկտրոֆիկացիայի ոգնությամբ: Ուրեմն կամաց-կամաց, բայց և այնպես առաջ կգնանք: Իսկ ուր ենք գնում մենք. ի հարկե դեպի սոցիալիզմ: Չե՞ վոր մենք միշտ այդպես ել մտածել ենք: Չե՞ վոր դա հենց ամենագլխավոր քաղաքական ավանդն ե, վոր թողել ե մեզ Վլադիմիր Իլիչը: Ընկ. Լենինը յուր կյանքի վերջին տարիներում գրել ե մի հիանալի հոդված Սուխանովի դեմ, վոր տեղ նա նույնպես խոսում ե այդ հարցի մասին և ահա թե ինչ ե ասում. «Ճիշտ ե, մեր յերկիրը շատ հետամնաց ե, ճիշտ ե մենք տնտեսական ամուր բազա չունենալով վերցրել ենք քաղաքական իշխանությունը. սակայն մենք դա արել ենք նրա համար, վորովհետև համոզված ենք յեղել, վոր թեպետ դանդաղ, կամաց-կամաց, բայց և այնպես մենք կկառուցենք սոցիալիզմ: Մանավանդ, վոր մի կողմից պրոլետարիատը, մյուս կողմից գաղութային ժողովուրդը արշավում են միջազգային կապիտալիզմի դեմ»: Ահա թե ինչ ե ասել Լենինը:

Յերբ ընկերները մեզ ասում են, թե մեր յերկրի տեխնիքական հետամնացության պատճառով մենք անպայման կխորտակվենք, դա ի հարկե չի նշանակում, թե նրանք ուզում են ասել, վոր մեր աշխատանքի հետամնաց գործիքները մեր դեմ դուրս կգան: Ասենք թե, ռանդա սովոր գործիքը կտասալի Համասիութենական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյին (Պոլիտ-բյուրոյին): Ի հարկե այդպես չպետք ե հասկանալ: Նրանք զրանով ուզում են ասել, թե մեր տեխնիքական և տնտեսական հետամնացության պատճառով անպայման վեճ կսկսվի բանվորի և մուժիկի մեջ և մուժիկը յուր հետամնաց գործիքներով մեր գլխին կտա: Ուրիշ խոսքով, ուզում են ասել, թե մեր տեխնիքական և տնտեսական հետամնացության պատճառով պրոլետարիատի և մանրբուրժուազիայի մեջ կռիվ կսկսվի, վորի ժամանակ կհաղթի մանրբուրժուազիան:

Մենք նման կարծիքի դեմ ել ենք պայքարել և ասել ենք, թե չի կարելի յենթադրել, վոր այդ կռիվն անպայման պիտի լինի: Մենք ասել ենք, թե բանվոր դասակարգի և դյուղացիության մեջ պառակտումն պարտադիր չե: Մենք ասել ենք նույնպես, վոր մենք կարող ենք մեր խոշոր արդյունաբերությունը այնպես զարգացնել, վոր նա վոչ միայն չկտրվի գյուղական տնտեսությունից, այլ, ընդհակառակը, միշտ ուժեղ կապված լինի նրա հետ: Գյուղացիական լայն մասսաների հետ միասին մե՞ք ի հարկե շատ դանդաղ քայլերով առաջ կգնանք, բայց դրա փոխարեն իսկապես առաջ կգնանք

և մեր յերկրում կկառուցենք սոցիալիզմ: Ահա թե ինչպես եք դրել հարցը:

Այժմ յես հարցնում եմ. մի՞թե այդ կարծիքի դեմ հիմա կարելի ե հակաճառել և մի՞թե վորե ե հիմք կա դրա համար: Չե՞ վոր մենք ամբողջ յերկու տարի կռվել ենք տրոցկիզմի դեմ և ապացուցել, վոր մեր կարծիքը ուղիղ ե: Ի՞նչ իրավունք ունինք մենք այժմ հրաժարվելու այս բանից: Ո՞վ ե ասել մեզ, վոր այժմ մենք հետ պիտի գնանք: Դա ինձ համար միանգամայն հասկանալի չե: Ընդհակառակը, մեր կուսակցությունը գաստիարակել ենք այն վոգով, թե սա միակ ուղիղ ճանապարհն ե: Հակառակ կարծիքի կողմնակիցները այն ժամանակ մեզ վոչ մի ուրիշ պատճառաբանություն չեն բերել, իսկ այժմ հանկարծ կանգնում և ասում են. «մեր տեխնիքական և տնտեսական հետամնացության պատճառով մենք անպայման կխորտակվենք»: Դա մի դարձ ե դեպի այն տեսակետը, վորի դեմ մենք ուժեղ կերպով պայքարել ենք: Այդ բոլորից դուրս ե գալիս, վոր ըստ եյության մեզ ուզում են տանել դեպի ընկ. Տրոցկու հին տեսակետները, վորոնց դեմ մենք այնքան պայքարել ենք:

Մենք ամենևին չենք ցանկանում այդ բանը: Յեվ ինձ թվում ե, թե միանգամայն ճշմարիտ են այն բանվորները, վորոնց հետ այսօր յես խոսեցի և վորոնք ասում են հետևյալը. — «Յեթե իսկապես մեր տեխնիքական ու տնտեսական հետամնացության պատճառով մենք անպայման պիտի խորտակվենք, այն ժամանակ ել ի՞նչ կարիք կար Հոկտեմբերյան Հեղափոխությունը կատարելու, ել ի՞նչ կարիք կար այնքան գոհաբերություններ տնելու»: Բանվորները միանգամայն ճշմարիտ են, յերբ վոր ասում են. — «Մենք ներքը միանգամայն ճշմարիտ են, յերբ վոր ասում են. — «Մենք ներկայումս առաջ ենք գնում և վոչ միայն այժմ, այլ առնվազը յերկու տարի ե, վոր արդեն սկսել ենք առաջ գնալ: Ինչո՞ւ պիտի անպայման յենթադրել, վոր յեկող տարի ել չենք շարունակի առաջ գնալ: Ինչո՞ւ համար մյուս տարի անպայման պիտի խորտակվենք: Ի՞նչ հիմք կա յենթադրելու, վոր հետևյալ տարում մենք ել ավելի չենք ուժեղանալու: Զե՞ վոր մենք ավելի ծանր պայմաններում չենք գտնվել, բայց այնուամենայնիվ սեփական ուժերով դուրս ենք ենք գտնվել, բայց այնուամենայնիվ սեփական ուժերով դուրս ենք յեկել այդ դրությունից: Ի՞նչ հիմք կա յենթադրելու, վոր հետևյալ տարիներում նոյնպես չենք շարունակի արդպես: Ինչո՞ւ մենք «անաարիներում նոյնպես չենք շարունակի արդպես: Ինչո՞ւ մենք «անպայման» պիտի խորտակվենք»: Ահա թե ինչ են ասում բանվորները:

Յեվ իսկապես, մեր տեխնիկական կամաց-կամաց բարելավվում ե. վոչ վոք չի մոռացել այն ժամանակները, յերբ մետաղա-

գործ բանվորները զաժիգալիկներ ելին պատրաստում ու վաճառում, վորովհետև անգործ ելին: Մենք այդ ժամանակ վոչ միայն չխորտակվեցինք, այլ և դուրս գալով այդ գրությունից և վերականգնելով խոշոր արդյունաբերությունը հասցրել ենք այն համարյա մինչպատերազմյան նորմային: Միանգամայն անհասկանալի է, յերբ մարդիկ կարծում են, վոր մենք այժմ անպայման պիտի խորտակվենք: Վոչ մի կերպ չի կարելի նման կարծիքի հետ հաշտվել: Յե՛վ մենք չզիտենք, թե ինչու այդ հետամնացությունն այնպայման մեզ պետք է վտանգ սպառնա, քանի վոր ամեն տարի մենք նորանոր հաղթանակներ ենք ունենում ու հաղթահարում ենք նույն այդ հետամնացությունը: Ահա թե ինչու՞մն է հարցի ելությունը:

Մեզ համար միանգամայն պարզ է, թե սա ինչ իրեցություն է: Սա նա է, վորի մասին կուսակցության համագումարի բանաձևը ասում է, թե կա վորոշ հոսետեսություն մեր ուժերի նկատմամբ: Դա մի հոսետեսություն է, վոր չի հավատում, թե մի յերկրում կարող ենք կառուցել սոցիալիզմ: Իսկ յեթե մեր կուսակցության ղեկավարող կադրերում նման հոսետեսություն լինի, պարզ է վոր այդ բանը ավելի վատ կանդրադառնա բանվորների վրա: Այն ժամանակ վերջիններս ուղղակի կարող են բացարձակապես ժխտել մեր բոլոր հնարավորությունները:

Յեթե որինակի համար «վերեում» մեզնից մեկը բարձրաձայն ասում է, — «տղերք, գիտե՛ք ինչ կա, մենք հաղիվ թե կարողանանք հաղթահարել մեր առաջ կանգնած դժվարությունները, առանց միջազգային հեղափոխության ոգնության մենք անպայման կխորտակվենք», այն ժամանակ ներքեում — բանվորական մասսաների մեջ նույն բանը ասում են տասն անգամ ավելի բարձրաձայն, և ահա թե ինչպես. — «ել ի՛նչ կարիք կա այսքան զոհողություններ տալու, ել ի՛նչ կարիք կա այսքան ջանքեր թափելու»:

Այսպես խոսել չի կարելի, վորովհետև ինչպես ինքներդ ել տեսնում եք հոսետեսությունն արդեն փոխվում է սոցիալիզմը կառուցելու հնարավորության բացարձակ ժխտմանը: Իսկ յեթե լավ քննելու լինենք այս բոլորը, բանից դուրս կգա, վոր սա մի հակա-լե-նինյան տեսակետ է, վորի դեմ մենք միշտ պայքարել ենք: Ահա թե ինչու՞մն է հարցը: Մի խոսքով այն, ինչի դեմ վոր կռվել է Լենինը՝ այժմ հանկարծ կանգնում է մեր առաջ նոր ձևով և ասում է. — «Մեր տեխնիքական-տնտեսական հետամնացության պատճառով մենք անպայման պիտի խորտակվենք»:

Կուսակցության համագումարում մենք ուժեղ վիճեցինք այս բանի դեմ: Նորից եմ կրկնում — դուք ինքներդ ել կարող եք սառու-

զել ասածներս համագումարի նյութերի մեջ — համագումարում վոչ վոք չփորձեց հերքելու և ասելու, թե մենք ընկ. ընկ. Զինովյեի և Կամենեվի խոսքերը սխալ են բերում՝ տեխնիքական-տնտեսական հետամնացության մասին: Վոչ վոք մեր դեմ չհակաձուռեց: Ըստ ելության ոպպոզիցիան այս հարցին վոչ մի պատասխան չտվավ: Դա նշանակում է, վոր նրանք վոչինչ ել չուենն ասելու: Նրանք շատ լավ իմանում են, վոր դա իրենց ամենաթույլ կողմն է: Շատ լավ իմանում են նույնպես, վոր նման սխալ տեսակետները ինչ ասես կարելի է անվ նել, բայց վոչ միայն 100 տոկոսի լենինիզմ:

Ահա սա է առաջին և ամենախոշոր խնդիրը: Յուրաքանչյուր մի կուսակցական պրակտիկ գործիչ հեշտությամբ կարող է հասկանալ այս բոլորի գործնական նշանակությունը: Ճիշտ է, նրանք իրենց ասածներից հետո վոչ մի կոնկրետ առաջարկություն չարին, բայց միաժամանակ իրենց ասածներով ցանկանում եին վորոշ ուղղություն տալ մեր ամբողջ աշխատանքին: Հապա ի՛նչ եք կարծում, ձեզ եմ հարցնում: Մի բոպե յենթադրենք, թե համագումարը այսպիսի բան է ասում ամբողջ կուսակցությանը. — «Տեխնիքական-տնտեսական հետամնացության պատճառով մենք անպայման կխորտակվենք, յեթե միջազգային հեղափոխություն չլինի»: Հապա ի՛նչ եք կարծում, ի՛նչ կլինի այն ժամանակ. սատանան դիտե, թե ինչ կլինի (ծիծաղ): Բայց չե՛ վոր, յերբ վոր քաղաքակն գործիչը վորևե բան է ասում, նա չպետք է մոռանա, վոր այդ նույն բանը պիտի կարողանա ասել ամբողջ համագումարի անունից: Դրա համար ել նախ քան վորևե բան ասելը, հարկավոր է լավ հաշիվ տալ իրեն: Այս բոլորից հետո ինձ թվում է, թե այստեղ հարցը կարելի է փակված համարել և նման ձևակերպումն տալ. կան յերկու խնդիրներ առաջինը՝ դա՛ այն է, թե արդյոք մենք համոզմամբ մենք ասում ենք, — մինչև վոր միջազգային հեղափոխություն չլինի, մենք համոզված չենք կարող լինել, վոր հինը չի վերականգնվի: Իսկ ինչ վերաբերում է յերկրորդ հարցին, մենք կարող ենք ասել, վոր տեխնիքական-տնտեսական հետամնացության պատճառով մենք չենք խորտակվի, վորովհետև որեցոր, ամսեամիս, տարեցատարի մենք այդ տեխնիքական-տնտեսական հետամնացությունը հաղթահարում ենք: Մեր տնտեսական աճումը հենց այդ տեխնիքական-տնտեսական հետամնացության անընդհատ հաղթահարումն է:

Վ. ՆԵՊԻ ՀԱՐՑԵՐԸ

Այժմ, ընկերներ, թույլ տվեք անցնել յերկրորդ կետին—ՆԵՊ-ի հարցին. Նորից պիտի ասեմ, վոր առաջին հայացքից թվում է թե ՆԵՊ-ի հարցն էլ վաղուց արդեն վճռել ենք, բայց ե այնպես ինչպես տեսնում եք, այս հարցն էլ կանգնել է մեր առաջ՝ այս անգամ արդեն կապված մի յերկրում սոցիալիզմը կառուցելու հարցի հետ: Ներկա պայմաններում շատ հեշտ կերպով կարելի է մանտվանդ վոչ վորակյալ (неквалифицированный) բանվորների մեջ կանգնել և ՆԵՊ-ը հայհոյելով, վորոշ համակրություն գրավել յուր կողմը: Յես արդեն ասացի, վոր մենք շատ թերություններ ունենք. մեզ մոտ այնպիսի հակասություններ կան, վոր ուղղակի աչք են ծակում: Վերցնենք թեկուզ հենց անխնամ յերեխաները և նեպմանների շքեղությունը: Բանը նրանումն է, վոր շատ անգամ ՆԵՊ ասելուց ի նկատի են ունենում վոչ թե մեր անտեսական քաղաքականությունը և մինչև անգամ անտեսական դրությունը, այլ իսկույն ի նկատի են ունենում նոր բուրժուական խավերը, կամ ուրիշ խոսքով՝ նոր բուրժուազիան: Յե՛վ ի՞նչ են ասում.—առաջին հերթին պետք է սանձ դնել այդ բուրժուազիայի բերնին և նոր միայն խոսել: Հենց սովորական կյանքում դուք շատ անգամ այսպիսի խոսակցություններ կլսեք.—«Մասնավոր կապիտալը շարունակ հավելումներ (надбавки) է անում—միթե չի կարելի նրան ստիպել, վոր այնպես չանի: Մեր կողմերացիայում կրկնակուշիկներ չի կարելի գտնել, մինչդեռ մասնավոր առևարականը ունի: Արդյոք, մեզավորը մեր հիմնարկությունները չեն, վոր այդ ապրանքը բաց են թողնում մասնավոր տերերին: Չի կարելի, արդյոք, վերջ տալ այդպիսի բաներին: Վերջպես, մի կողմից անխնամ յերեխաներ, իսկ մյուս կողմից շքեղ հագուստներով նեպմանների կանայք: Միթե չի կարելի վորևէ միջոց ձեռք առնել այս բոլորի դեմ»: Ահա թե ինչ ենք լսում սովորական խոսակցությունների ժամանակ:

Այստեղ պարզ յերևում է, թե վորքան մեծ է դասակարգային ատելությունը: Մենք ամենևին չենք ասում, թե նեպմանը շատ լավ մարդ է, յեկեք նրան համբուրենք: Սակայն հարցը դրանում չէ: Մենք պետք է նրա դեմ կովելու ուղիղ միջոցներ գտնենք: Ահա թե ինչումն է հարցը:

Պետք է շարունակ նոր միջոցներ փնտրենք, վորպեսզի կարողանանք մեր անտեսական որգանների դերը ուժեղացնել: Պետք է շիկացրած յերկաթով կովենք վատնումների, գողությունների, բյուրոկրատիզմի դեմ, վորպեսզի վորքան կարելի է քիչ

սխալներ անենք: Ահա թե ինչ միջոցով պիտի կովել միջնորդների, կուլակների և կապիտալիստների դեմ: Դրա հետ միաժամանակ պետք է շատ լավ տարբերենք, թե ինչն է նպատակահարմար և ինչը վոչ. այսինքն, ինչ կարելի է իսկույն և յեթ անել և վոր գեպըում մի քիչ համբերել: Կուսակցությունը պետք է ճիշտ քաղաքականություն տանի և վոչ թե տաքանա: Չպետք է աջ ու ձախ այնպիսի խոստումներ տալ, վոր հետո չես կարողանալու իրագործել: Կարիք չկա ձի խոստանալ ձի չունեցողին, վարտիկ խոստանալ վարտիկ չունեցողին, քիթը՝ քիթ չունեցողին, հարսին փեսա խոստանալ և փեսային հարս, յերբ վոր դու այդ բոլորը չես կարողանում կատարել: Նորից եմ կրկնում, վոր չի կարելի այդպես անել: Վորովհետև մեր կուսակցությունը այնպիսի մի կուսակցություն է, վորը յեթե խոստանում է, պիտի կատարի: Բոլորդ յերևի հիշում եք, թե ինչպիսի դրություն ստեղծվեց, յերբ մենք խոստացանք աշխատավարձը բարձրացնել, իսկ հետո այնքան չբարձրացրինք, վորքան խոստացել էինք: Հապա յես ձեզ հարցնում եմ—ինչպես ազդեց դա բանվոր դասակարգի վրա. ի հարկե, շատ վատ: Ավելի լավ է քիչ խոստանալ, բայց 100 տոկոսով կատարել խոստումը: Կարիք չկա խաբելու մարդկանց և խոստանալու այն, ինչ վոր չես կարող անել: Մենք այնպիսի մի կուսակցություն ենք, վոր իզուր տեղը խոստումներ չպիտի անենք: Ամեն մի դեմագոգի վոր իզուր տեղը խոստումներ չպիտի անենք, ի հարկե, այսոր խոստանալ 100 տոկոս, իսկ վաղը վոչինչ չտալ: Այդպես անել յերբեք չի կարելի: Մենք շատ լավ գիտենք, թե վորքան դժվար է, յերբ վոր ստիպված ես ասել—«ընկերներ, ինչ արած, չկա», առ այժմ դա հնարավոր չէ անել»: Դժվար է նույնպես ասել—«մի քիչ համբերեցեք»: Ավելի դժվար է ասել—«ինքներդ աշխատեցեք մի կերպ այդ դրությունից դուրս գալ»: Հապա ինչ եք կործում, այսպես հեշտ է ասել: Ի հարկե, դժվար է: Սակայն, ավելի լավ է այսպես ասել, քան թե խոստումներ անել ու հետո չկատարել: Մասնավանդ, խոստումներ տալուց հետո մարդիկ դուրս են գալիս ու ասում, թե մենք չգիտենք, թե ինչ է կատարվում կուսակցության մեջ: Վոչ, այդպես չի կարելի: Յեկեք մենք բոլորս պատասխանատու լինենք նրա համար, ինչ վոր կատարվում է մեր կուսակցության մեջ: Նախ քան ՆԵՊ-ի հարցին անցնելը, յես անհրաժեշտ գտա այս մասին յերկու խոսք ասել:

Ոպպոզիցիային պատկանող ընկերները յերեք գլխավոր կետեր են առաջ բերում: Դա յերևում է թե նրանց ճառերից, թե զեկուցումներից, թե զբերից և թե բրոշյուրներից: Ինձ թվում է, թե նոր ոպպոզիցիան յերեք սեսակ է բնորոշում նոր անտեսական քա-

դաքսականութիւնը: Առաջինը՝ նրա՝ քառուս եւ, վոր ՆԵՊ-ը միայն նահանջ է. յերկրորդը՝ նրանք ասուում են, վոր ՆԵՊ-ը դադար է կամ մի մանյովը. վոր մենք կատարում ենք միջազգային հեղափոխութիւնը ուշանալու պատճառով. և յերրորդ՝ ՆԵՊ-ը պրոլետարիատի տնտեսական մի այնպիսի քաղաքականութիւն է, վորը հետեանք է յերկրի տնտեսութեան մանք բուրժուական բնույթի: Մի քանի ուղղափոխութիւններ ել ասուում են, թե ՆԵՊ-ը պրոլետարիատի այնպիսի մի քաղաքականութիւն է, վոր տարվում է մանք գյուղացիութիւնն ունեցող յերկրում: Ահա այն յերեք բնորոշումները, վոր տալիս է նոր ուղղափոխութեան ՆԵՊ-ին: Իմ կարծիքով այս յերեք բնորոշումներն ել սխալ են: Յեւ վոչ միայն սխալ են, այլև մեզ տանում են դեպի սխալ քաղաքական յեզրակացութիւններ: Սա ել յուր հերթին դարձյալ կապիւմ է այն հարցի հետ, վոր նոր ուղղափոխութեան չի համարում, թե մի յերկրում կարելի է սոցիալիզմը կառուցել: Այժմ յես վերցնում եմ առաջին կետը: Ուղղափոխութեան կարծիքով ՆԵՊ-ը միայն նահանջ է: Ճիշտ է, արդյոք, այս: Իմ կարծիքով, վոչ Վլադիմիր Իլյիչի գրվածքներից կարելի է տեղեր ցույց տալ, մենք ինքներս ել մի քանի անգամ գրել ենք, վոր ՆԵՊ-ը նահանջ է: 1921 թվին ՆԵՊ-ի մասին խոսելուց մենք միշտ ել այդպես ասել ենք: Սակայն այժմ, Հոկտեմբերյան հեղափոխութիւնից ութ տարի հետո (չպետք է նոյնպես մոռանալ, վոր 21 թվից, այսինքն ՆԵՊ-ը մտցնելուց հետո ել բովանակելիս ժամանակ է անցել) ասել, թե ՆԵՊ-ը միայն նահանջ է, իմ կարծիքով միանգամայն սխալ է: Դա նշանակում է, չգնահատել ընդհանուր առմամբ ՆԵՊ-ը, վորպես մի մանյովը:

Դեռ ևս կուսակցական համագումարում ՆԵՊ-ի մասին խոսելուց յես այսպես եմ ձեռնարկել. — ՆԵՊ-ը, դա պրոլետարիատի ստրատեգիական մի այնպիսի մանյովը է, վորը ու՛ի յերեք ելեմենտ — առաջ նահանջում ենք, հետո մեր շարքերը վերակազմում և ապա վերակազմած շարքերով սկսում արշավել: Լենինը ՆԵՊ-ի մասին խոսելուց նոյնպես ասել է. թե մենք նահանջում ենք նրա համար, վորպեսզի նորից ավելի ուժեղ կերպով սկսենք արշավել և ավելի առաջ անցնել: Յես կարծում եմ, վոր դուք բոլորդ սա հիշում եք: Անշուշտ հիշելիս կլինեք Լենինի այն խոսքերը, վոր նա ասել է Ջենովայի կոնֆերանսի որերին մետաղագործների համագումարում. «Այսուհետև այլևս չպիտի նահանջենք»: Մի՞թե այս ասելով նա առաջ ըկել է ՆԵՊ-ը վերացնել, կամ չլինի՞ թե նա առաջարկում եր կանգնած մնալ միևնույն տեղը: Պարզ է, վոր նրա ասածներից այդ չի հետևում: Նրա ասածից պիտի յեզրակացնել,

վոր նահանջը դադարեցնելուց հետո հարկավոր է վերակազմել շարքերը ու ապա այդ շարքերով սկսել արշավել: Այժմ մեզ կարող են ասել, թե հեշտ է այդպես ծրագրել, սակայն այդ հաջողվում է անել: Չլինի՞ թե այլ կերպ է դուրս յեկել: Վոչ. այլ այնպես, ինչպես մենք յենթ դրել ենք: Այժմ յես կասեմ, թե ինչու դա իսկապես այդպես է: Յեթե մենք պետական արդյունաբերութեան մեծագույն մասը մեր սեփական ուժերով ենք վերականգնել և կոնցեսիայով չենք տվել, ապա ինչ եք կարծում, դա նահանջ է, թե ընդհակառակը, մեր հաղթանակը: Իմ կարծիքով դա խոշոր հաղթանակ է: Մի քանի տարի առաջ մեր խոշոր արդյունաբերութիւնը մինչ պատերազմյան շրջանի 10⁰/₁₀ եր կազմում, իսկ այժմ համարյա թե հասել ենք նրան: Ապա, ինչ եք կարծում, սա նահանջ է, թե առաջ գնալ: Անկասկած սա առաջ գնալ է: Իսկ յերբ մենք խոսում ենք մեր հաջողութիւնների մասին, մի՞թե դա նշանակում է, թե մենք նահանջում ենք: Յեւ յերբ վոր Ջինովայի ել ուրիշների հետ միասին խոսում է մեր սոցիալիստական շինարարութեան մասին, մի՞թե դա նշանակում է, թե մենք նահանջում ենք: Կամ չլինի՞ թե դա նշանակում է, թե մենք ՆԵՊ-ից հրաժարվում ենք: Բոլորովին վոչ. Մենք ՆԵՊ-ից չենք հրաժարվում, այլ առաջ ենք գնում ՆԵՊ-ի ուղիներով: Մենք նահանջը դադարեցրել ենք և միաժամանակ միևնույն տեղը չենք կանգնած: Առհասարակ պիտի ասել, վոր տրեւստական ձեւերը երեք դրութեան մեջ կարող են գտնվել — կամ նրանք հետ են գնում, կամ կանգնած են մի տեղում և կամ թե չե՛ առաջ են գնում: Այժմ, քանի վոր մենք չենք նահանջում, մի տեղ կանգնած չենք, պարզ է, ուրեմն, վոր մենք առաջ ենք գնում: Վոչ վոր, և վոչ մի ուղղափոխութեան խնդրում ալ բան չի կարող ասել և դրա համար ել ուրեմն մենք առաջ ենք գնում:

Հապա ի՞նչ եք կարծում — մի՞թե սա հաղթանակ չէ, յերբ խոշոր արդյունաբերութեան 95 տոկոսը մեր պետութեան ձեռքում է, յերբ մենք մասնավոր կապիտալը դուրս ենք վանել մեծաքանակ յերբ մենք մասնավոր կապիտալը դուրս ենք վանել ենք զգալի չափով նաև առևտրից, յերբ վոր մենք նրան վանել ենք զգալի չափով նաև մեծաքանակ-մանրաքանակ վաճառքի առևտրի ասպարեզից, յերբ մենք թեպետ կամաց-կամաց, բայց և այնպես սկսել ենք նրան դուրս վանել մանրաքանակ առևտրի ասպարեզից: Մի՞թե սա հաղթանակ չէ: Յեւ մի՞թե սա չի նշանակում, վոր մենք առաջ ենք գնում: Ի հարկե, հաղթանակ է: Իսկ ՆԵՊ-ը մենք վերացրել ենք: Վոչ, չենք վերացրել: Իսկ ի՞նչ է նշանակում սա. սա նշանակում է, վոր մենք առաջ ենք գնում և արշավում ենք ՆԵՊ-ի ուղիներով: Իսկ ավելի պարզ ասած, դա ի՞նչ է նշանակում: Դա նշանա-

կում է, վոր մենք ազատ առևտուրը չենք վերացնում և մանավանդ մեր նպատակը չենք դարձնում պայքարելու ամեն մեկի դեմ, վորը շուկայում մի քանի կոպեկի բան է ծախում: Մենք թույլ ենք տալիս ազատ առևտուրը, մենք չենք վերադառնում պրոգրազվյորստիային, մենք սելյոզկան քարտերով բաժանելու յեղանակին չենք վերադառնում, մենք չենք վերադառնում այն սիտեմին, յերբ ամեն մեկին արգելվում էր առևտուր անել և հենց դրա համար էլ մեշոչնիկներին թիվը շատանում էր:

Այսօր բանվորներին հետ գրուցելու ժամանակ յերբ նրանք սկսեցին խոսել ՆԵՊ-ի մասին, յես նրանց այսպիսի հարց տվի, — «Իսկ դուք ուզում եք վերադառնալ մարտական կոմունիզմին, ուզում եք վերականգնել պրոգրազվյորստիան», այդ ժամանակ բոլորը միասին պատասխանեցին. — «Ինչ է պատահել, խելագարվել եք, ինչ է»: Յես նրանց հարցրի. — «Կցանկանայի՞ք, արդյոք վորպեսզի նորից քարտային սիտեմը վերականգնենք», բոլորը միասին ասացին. — «Ձենք ուզում»: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր նոր տնտեսական քաղաքականութունը միայն նահանջ չէ, ինչպես այդ կարծում է ոպպոզիցիան: Միանգամայն հասկանելի է, յերբ մենք 1921 թվին ասում էինք, վոր ՆԵՊ-ը նահանջ է: Այն ժամանակ իսկպես վոր նահանջում էինք: Յեվ միանգամայն անմտութունը կլիներ, յեթե մենք այդ բանը թագցնեինք: Այն ժամանակ մենք ասում էինք. — «Այնպես անենք, վոր նահանջելու ժամանակ էլ կարգ պաշտպանենք»: Սա հենց Լենինի այն ժամանակվա լոզունգներից մեկն էր, վոր ասում էր, թե նահանջելու ժամանակ էլ պետք է կարգ պաշտպանել, իսկ ով վոր սկսի պանիկա տարածել, նրան հարկավոր է գնդակահարել: Մեծ անմտութունը կլիներ մեր կողմից, յեթե այն ժամանակ ասեինք, թե չենք նահանջում, հաղթանակը մեր կողմն է, ամեն բան լավ է և այլն: Իսկ հիմարութունը կլիներ: Իսկ այժմ էլ, յերբ վոր մենք այդ ծանր շրջանից անցել ենք և արդեն առաջ ենք գնում, նույնպիսի հիմարութուն է ասել, թե մենք նահանջում ենք: Յերբ վոր արշավելու ժամանակ բղավում են նահանջի մասին, դա կարելի է համեստութուն համարել, սակայն շատ գուշակ այդ մասին, արդեն այնքան էլ խելոքութուն չէ:

Հարցին այդպես մոտենալուց մենք տեսնում ենք, վոր միանգամայն սխալ է ասել, թե ՆԵՊ-ը միայն նահանջ է: Ճիշտ է, մենք նահանջել ենք, բայց և չպետք է մոռանալ, վոր սկսել ենք արշավել: Յեղել է մի ժամանակ, յերբ մենք միևնույն տեղից առաջ կամ հետ չենք շարժվել, հենց այդ ժամանակ էլ Լենինն ասել

է. — «Սովորեցեք առևտուր անել»: Յեվ, իսկպես, ինչպես էր գրութունն այն ժամանակ: Տնտեսավարներից վոչ մեկը չէր կարողանում առևտուր անել, կոմունիստի համար առևտուր անելը խելագարութուն էր թվում: Ինչպես կարող է կոմունիստը առևտուր անել, մտածում էինք մենք. սկզբում յերկար մտածեցինք, մի քիչ տատանվեցինք, բայց վերջի վերջո հասկացանք, վոր հարկավոր է «առևտուր անելը սովորել»: Թե ինչքան ժամանակ է կորել այդ սովորելու համար, բոլորս գիտենք: Բոլորս հիշում ենք նույնպես, թե այդ ժամանակ մասնավոր կապիտալը ինչպես էր մանում մեր տնտեսական օրգանիզմի բոլոր անկյունները, լավ շահվում, իսկ մենք ինքներս անգոր էինք և վոչինչ չէինք կարողանում անել: Բայց, ի հարկե, ժամանակն էլ է անցել: Ահա թե ինչու համար ենք ասում, թե մասնավոր կապիտալին մեծաքանակ առևտրի ասպարեզից վոնդելը մեծ հաղթանակ է մեզ համար, ուրեմն և մեր արշավանքն է: Իսկ վոր նրան մենք մեծաքանակ-փոքրաքանակ առևտրից էլ ենք դուրս վոնդում, դա նույնպես խոշոր հաղթանակ է:

Այժմ յերկրորդ հարցի մասին: Ընկերները ասում են, վոր ՆԵՊ-ը միայն մի գիշում է, վոր մենք արել ենք միջազգային հեղափոխութունը ուշանալու պատճառով. կամ ուրիշ խոսքով ՆԵՊ-ը մտցրել ենք նրա համար, վորպեսզի դադար առնենք: Յերանի թե այդ դադարի ժամանակ մի կերպ ապրենք, իսկ յերբ միջազգային հեղափոխութունը կլինի, այն ժամանակ ազատ շունչ կառնենք, և բոլորի հետ հաշիվներս կվերջացնենք: Վոր մենք այն ժամանանք ավելի ազատ շունչ կքաշենք և բոլորի հետ մեր հաշիվը կվերջացնենք, յես դրա հետ միանգամայն համաձայն եմ: Իսկ թե ՆԵՊ-ը մենք մտցրել ենք միայն նրա համար, վոր միջազգային հեղափոխութունը ուշացել է, այդ բանի հետ յես միանգամայն համաձայն չեմ և ուղղակի չեմ հասկանում, թե ինչու են մարդիկ այդպես մտածում: Մի բոլոր յենթադրեցեք, թե վաղը միջազգային հեղափոխութուն է յեղել. և ինչ, չլինի՞ թե դուք իսկույն վերականգնելու եք մարտական կոմունիզմը և մտցնելու եք պրոգրազվյորստիան: Ինչո՞ւ պետք է այդպես անել: Մի՞թե դուք կարծում եք, թե հենց վոր միջազգային պրոլետարիատը մեզ առաջին օգնութունը ցույց տա, մենք իսկույն և յեթ պետք է վերականգնենք մարտական կոմունիզմը: Ձե՞ վոր դա կատարյալ հիմարութուն կլիներ: Ի հարկե, մենք միջազգային պրոլետարիատից կուտանայինք տեխնիքական, տնտեսական օգնութուն, և ինչ կանեինք: ՆԵՊ-ը մենք չեինք վերացնի, այլ այդ օգնության շնորհիվ

մենք ավելի լավ ու արագ առաջ կգնայինք ՆՆՊ-ի ռեյսներով, ավելի մեծ հաջողութեամբ կպայքարեինք մասնավոր կապիտալի դեմ և ավելի շուտ կհամենեինք սոցիալիզմին: Որինակի համար, յեթե առանց միջազգային հեղափոխութեան ոգնութեան մեզ միայն հիսուսն տարվա ընթացքում կհաջողվի գյուղացիութեանը կոոպերացման յենթարկել, ինքնըստինքյան պարզ է, վոր ոգնութեան ստանալու դեպքում մենք այդ բանը կանենք 10—15—20 տարվա ընթացքում: Ինչո՞ւ: Վորովհետև այդ դեպքում մենք գյուղացուն ավելի շատ մեքենաներ կտայինք, ավելի արագ կերպով կկառուցեինք մեր ելեքտրակայանները, ապրանքները գյուղ փոխադրելը ավելի կհեշտացնեինք, ավելի լավ կմրցեինք մասնավոր կապիտալի դեմ և այլն: Կնշանակի մենք ավելի արագ կերպով կընթանանք ՆՆՊ-ի ռեյսներով, մինչև վոր նա կվերանա:

Իսկ ի՞նչ է ՆՆՊ-ը. ՆՆՊ ը նա է, յերբ դեռ գոյութեան ունի առնելը և ծախելը: Այդ առ ու ծախսը յերեկիցե կվերանա: Իհարկե, կվերանա: Բայց յերբ: Սոցիալիզմի ժամանակ: Իսկ ի՞նչ ճանապարհով: Յերբ ամբողջ գյուղացիութեանը կոոպերացման կենթարկվի, յերբ վոր նա ուժեղ կերպով կապված կլինի պետական արդյունաբերութեան հետ և յերբ այդ բոլորը հենված կլինի ելեքտրոֆիկացիայի վրա: Պարզ է, վոր այդ ժամանակ այլևս շուկա չի լինի: Ամեն ինչ բաշխվելու է: Բայց ի հարկե բաշխվելու են վոչ թե ժանգոտած սելյուղիաներ, այլ առաջնակարգ մթերքներ: Ճիշտ է, շուկան վերանալու է, բայց նա վերանալու է վոչ թե նրա համար, վոր բոլոր խանութները միանգամից փակելու ենք, այլ նրա համար, վոր այդ ժամանակ արդեն մենք մանր անտեսութեանները ամբողջապես կազմակերպած ենք լինելու: Այդ մանր անտեսութեաններն այդ ժամանակ արդեն մասնավոր սեփականութեանից դառնալու են խոշոր հասարակական արտադրութեան միավորներ: Յերբ վոր միջազգային հեղափոխութեանը լինի, այն ժամանակ այդ գործողութեանը ավելի կարագանա: Մեր խոշոր արդյունաբերութեանը ավելի ուժեղ թափով կաճի, գյուղացիական անտեսութեանը մենք ավելի շատ մեքենաներ կտանք, կոոպերացիան նույնպես ավելի արագ կսկսի աճել, յերկիրը ելեքտրոֆիկացիայի յենթարկելը ավելի շուտ կիրականանա: Մենք այս բոլոր ետապները ավելի արագ կանցնենք և վոչ մի կարիք չենք զգա մարտական կոմունիզմին վերադառնալու: Այժմ յես հարցնում եմ — մի՞թե կարելի է այս բոլորից հետո ասել, թե միջազգային հեղափոխութեանը լինելուց հետո մենք իսկույն անցնելու ենք մարտական կոմունիզմին: Դա կատարյալ հիմարութեան կլինի: Այդ-

պիսի բան յերբեք չի լինի: Այստեղից ի՞նչ է հետևում. այն, վոր սխալվում են ընկերները, վորոնք կարծում են, թե ՆՆՊ-ը մտցրել ենք միայն նրա համար, վորովհետև միջազգային հեղափոխութեանը ուշացել է: Դա միանգամայն սխալ է. հարցն այդպես դնել չի կարելի:

Վերջապես յերբորդ հարցը — թե արդյոք, ՆՆՊ-ը այնպիսի մի քաղաքականութեան է, վոր պրոլետարիատը վարում է մանր-գյուղացիութեան յերկրում, թե՞ նա մի այնպիսի քաղաքականութեան է, վորը հարկավոր կլինի վարել վոչ միայն մանր գյուղացիական յերկրում: Մենք վորոշակի ասում ենք, վոր այդ քաղաքականութեանը տարվելու է վոչ միայն մանր-գյուղացիական յերկրում, այլև ամեն մի յերկրում, թեկուզ հենց նույնիսկ Անգլիայում: Մենք յերբեք չենք արգելելու ամեն մի առևտուր, վորովհետև չկա մի վորևէ յերկիր, վորտեղ միայն խոշոր արդյունաբերութեան լինի: Ի հարկե, կան ավելի զարգացած յերկրներ, վորտեղ գյուղացիութեանը ազգաբնակչության ավելի փոքր մասն է կազմում, պարզ է, վոր նման յերկրներում ՆՆՊ-ը ավելի կարճատև կլինի և պարզ է, վոր նման յերկրներում ՆՆՊ-ը ավելի կարճատև կլինի և պարզ է, վոր նման սոցիալիզմին: Բայց այնուամենայնիվ դա չի ավելի շուտ կհամենեն սոցիալիզմին: Բայց այնուամենայնիվ դա չի կոմունիզմին մեթոդներն ենք գործադրելու: Յես կարծում եմ, վոր մենք ամենևին չենք սխալվել, յերբ ոտարյերկրյա կոմունիստական մենք ամենևին չենք սխալվել, յերբ ոտարյերկրյա կոմունիստական կան կուսակցութեաններին միշտ հիշեցրել ենք, վոր ՆՆՊ-ը ըստ Լենինի խոսքերի «պրոլետարիատի միակ ուղիղ անտեսական քաղաքականութեանն է»: Այդ քաղաքականութեանը անպայման անհրաժեշտ է լինելու ամեն մի յերկրում, վորտեղ բանվոր դասակարգը իշխանութեանը վերցնելու լինի յուր ձեռքը: Իմ կարծիքով սա մեր ամենախոշոր նվաճումներից մեկը պիտի համարել վոչ սա մեր ամենախոշոր նվաճումներից մեկը պիտի համարել վոչ միայն թեորիայի, այլև պրակտիկայի ասպարեզում: Մենք լենինի միջոցով կոմունիստների բոլոր յան այս ճշմարտութեանն անց ենք կացրել կոմինտերնի բոլոր կոնգրեսներում: Այսպիսով, ուրեմն, ըստ Լենինի՝ ՆՆՊ-ը «պրոլետարիատի միակ ուղիղ անտեսական քաղաքականութեանն է»: Թաքիտի միակ ուղիղ անտեսական քաղաքականութեանն է»: Այստեղ յես պիտի ասեմ, վոր մեզ հակաճառող ընկերները շարունակ ասում են, թե մենք իբր թե ՆՆՊ-ը սոցիալիզմ ենք համարում: Ի միջի այլոց նույ՞ը ասում են նաև մենչևիկները «Սո-

Սոցիալիզմը այնպիսի մի քաղաքականութեան է, վոր մեզ հակաճառող ընկերները շարունակ ասում են, թե մենք իբր թե ՆՆՊ-ը սոցիալիզմ ենք համարում: Ի միջի այլոց նույ՞ը ասում են նաև մենչևիկները «Սո-

ցիալիստիչեսկի Վեստնիկ» թերթի վերջին համարում: Սակայն յետ պիտի ասեմ, վոր հազիվ թե կարելի լինի գտնել մի այնպիսի հիմար մարդ, վոր ՆեՊ-ը նմանեցներ սոցիալիզմին: Ասում ել են, թե իբր մեզնից մեկը յերբեիցե ասել ե, թե իբր վոր կողմ նայում ես, սոցիալիզմ ե: Դա նույնպես հիմարությունն ե, ի հարկե: Նման բան ասողը մի այնպիսի ապուշ պիտի լինի, վորին մեր կուսակցության շարքերում պահելը միանգամայն անկարելի ե: Ասել, թե ՆեՊ-ը սոցիալիզմ ե, դա ուղղակի հիմարությունն ե և անգրագիտությունն ե: Վերջապես, չե՞ վոր սոցիալիզմը—դա մի վորոշ տնտեսական կացությունն ե, իսկ ՆեՊ-ը—դա մի քաղաքականությունն ե, այդ մեկ: Յերկրորդը՝ յեթե ՆեՊ ասելով մենք հասկանալու լինենք մեզ մտա գոյությունն ունեցող տնտեսական գրությունը, դրա մեջ առնելով նաև թե կուլակին, թե մանր ու միջակ գյուղացուն, թե նահապետական կյանքով ապրող մարդուն և թե մեր պետական արդյունաբերությունը և յեթե այս բոլորը մենք անվանենք սոցիալիզմ, դա ել կատարյալ հիմարությունն կլիներ: Մի՞թե մեր մեջ կարող են գտնվել մարդիկ, վորոնք ասեն, թե անխնամ յերեխաները—դա իսկական սոցիալիզմ ե: Չե՞ վոր միանգամայն ծիծաղելի կլինեն նման բաներ ասելն ու հերքելը: Սակայն պետք ե ասեմ, վոր այստեղից ամենևին չի ել կարելի յենթադրել, վոր ՆեՊ ը միմիայն նահանջ ե սոցիալիզմից: Մենք պետք ե առանց թաղցնելու ասենք, վոր ՆեՊ-ը ինչպես և ամեն մի քաղաքականություն, մեծ վտանգների հետ ե կապված: Բայց դա վոչինչ չի նշանակում, ի հարկե: Այս աշխարհում դուք կարող եք գտնել մի յերկիր, վորտեղ քաղաքականություն վարելը վտանգների հետ կապված չլիներ: Վոչ այդպիսի յերկիր կարելի ե գտնել և վոչ ել այդպիսի քաղաքականություն: Ի հարկ ե, ՆեՊ-ն ունի չափազանց վտանգավոր կողմեր, թեկուզ հենց այն, վոր ՆեՊ-ի պայմաններում գարգանում ե կապիտալիզմը: Այժմ ամեն մի հիմար մարդ ել գիտե, վոր կապիտալիստը մեր թշնամին ե և վոր մենք պետք ե նրա դեմ պայքարենք: Այս մասին մենք պետք ե խոսենք, պետք ե շեշտենք, յերբեմն ավելի ուժեղ, յերբեմն ավելի թույլ: Ի հարկ ե, մենք չենք հերքում, վոր կապիտալիստական շրջապատում աշխատող մեր տնտեսավարները իրենց հոգեբանությամբ շատ անգամ հանդես են բերում վոչ պրոլետարական կողմեր—այդ բոլորը մենք լավ գիտենք: Յեվ մի՞թե մենք քսան հարար անգամ չենք խոսել այդ մասին: Ի հարկե, խոսել ենք: Մի՞թե մենք այդ վտանգը չենք տեսնում: Ի հարկե, տեսնում ենք: Իսկ ի՞նչ ե պահանջվում մեզնից այս վտանգի դեմ պայքարելու

գործում: Շատ բան ե պահանջվում: Բայց դրա համար ի՞նչ պետք ե անել: Դրա համար հարկավոր ե կոնկրետ միջոցներ առաջարկել բյուրոկրատիզմի դեմ կռվելու, գների ուղիղ քաղաքականություն սահմանելու, ներքին առևտուրը կանոնավորելու, կուսակցական ուղիղ քաղաքական գիծ տանելու համար և այլն: Սակայն բոլոր լուրջ վտանգները, մեր տնտեսության հակասություններով լի բնույթը ամենևին չեն կարող հիմք ծառայել, վորպեսզի մենք իրավունք ունենանք ասելու, թե ՆեՊ-ը միայն նահանջ ե: Կամ թե չե ասենք, ՆեՊ-ը մի գաղտնի հիվանդությունն ե, վորը հարկավոր ե թագցնել, կամ վորից պիտի ամաչել: Ի՞նչպես կարելի ե ամաչել մի քաղաքականությունից, վորը Վլադիմիր Իլյիչը անվանել ե «պրոլետարիատի միակ ուղիղ տնտեսական քաղաքականություն»: Պետք ե ամաչել վոչ թե նրանից, վոր մեզ մտա ՆեՊ կա, այլ պետք ե ամաչել նրանից, վոր այդ ՆեՊ-ի պայմաններում մենք հաճախ այնպես չենք անում, վոր տնտեսապես ավելի լավ ու արագ կերպով հաղթենք մասնավոր կապիտալին, ավելի լավ վարենք մեր տնտեսությունը, ավելի հաջող կերպով պայքարենք ազատ առևտրի բոլոր բացասական կողմերի դեմ և մասնավանդ այն բյուրոկրատիզմի դեմ, վոր մեզ մտա դեռ ևս շատ կա: Սա ի հարկե, միանգամայն այլ հարց ե: Այս մասին հարկավոր ե միանգամայն բարձրաձայն խոսել: Իսկ ի՞նչ վերաբերում ե ՆեՊ-ին, յես քսան հարար անգամ պիտի ասեմ, վոր մենք չենք կարող նրա սկզբունքներից նահանջել և հաստատուն գիծ պիտի տանենք: Միակզբունքներից հասկանալի ե, յերբ մենք այժմ ՆեՊ-ի ենք սեխաներով արշավում: Բայց դրա հետ միաժամանակ մենք պետք ե բզավենք.—բարի յեղեք այնպես անելու, վորպեսզի ավելի արագ առջ շարժվենք, այնպես արեք, վորպեսզի ավելի լավ աշխատենք, թող ավելի արագ աճեն մեր տնտեսության սոցիալիստական ելքմենտները, մասնավոր կապիտալին հարկավոր ե ավելի լավ հարված տալ. բարի յեղեք բյուրոկրատիզմը վունդելու մեր հիմնարկություններից. աշխատեցեք այնպես անելու, վորպեսզի մասնավոր առևտրականների մտա ապրանքները չկուտակվեն, իսկ կոոպերատիվները դատարկ մնան. այնպես արեք, վորպեսզի կոոպերատիվը ավելի եժան ծախի ապրանքները, այնպես արեք վոր վառնողներն ու գողերը չնստեն մեր կոոպերատիվներում, ամեն տեսակի միջոցներ ձեռք առեք, վորպեսզի մեր տնտեսությունը գերազանցի մասնավորին:

Այդ բոլորը ճիշտ ե. այս բանը յես հասկանում եմ. սա արդեն գնահատելի գործնական խոսակցությունն ե: Իսկ յեթե դու

գնալու ես բանվորները մոտ և ասելու ես, թե ՆեՊ-ը միայն նահանջ ե և մենք միայն նահանջում ենք, այդ դեպքում նշանակում ե, վոր դու չես հասկանում, թե ՆեՊ-ը «պրոլետարիատի միակ ուղիղ անտեսական քաղաքականութիւնն ե»: Դու դրանով միայն նպաստում ես այն բանին, վոր բանվոր դասակարգի անգլիտակից խավերը, մանավանդ նրա նոր կազմերը (մասամբ նաև գյուղի չքավորութիւնը) սկսում են արդեն բողոքի ձայն բարձրացնել ընդհանրապես նոր անտեսական քաղաքականութիւն դեմ: Յեվ դուք միանգամայն մոռանում եք, վոր նման դեպքում միայն մի յելք ե մնում, այն ե—հետ դառնալ դեպի մարտական կոմունիզմ: Ել ուրիշ տեղ չկա գնալու: Մինչդեռ մենք վոչ մի դեպքում ել չախտի նահանջներ ՆեՊ-ից, այլ ՆեՊ-ի դժով, ՆեՊ-ի սեղանների վրայով ավելի արագ կերպով պիտի առաջ գնանք, ավելի պիտի ուժեղացնենք անտեսութիւն սոցիալիստական տարրերը և աշխատենք ավելի շուտ հաղթել մասնավոր կապիտալին: Մա արդեն ուրիշ հարց ե: Այստեղ արդեն մեր առաջ պետք ե զննել բոլոր դժվարութիւնները հաղթահարելու խնդիրը: Դրա համար հարկավոր ե յերկար աշխատանք: Մակայն մի բոսի անգամ չպիտի մոռանանք, վոր յեթե մենք շարունակ խոսենք այն մասին, թե նահանջում ենք, այն ժամանակ վոչ միայն չենք կարող մեր թերութիւնները վերացնել, այլ թերութիւնները ավելի կխորացնենք: Մենք այդ թերութիւնների դեմ կկռուենք ավելի հաջողութիւնամբ, յեթե հավատանք մեր գործին և բանվոր դասակարգի առաջապահ գնդերը տանենք մեր հետևից: Մասնավոր կապիտալին հաղթելու ամենագլխավոր պայմաններից մեկը հենց դա ե: Յեթե այդ բանը չլինի, այն ժամանակ վոչ մի ուղիղ հեռանկար չենք ունենա: Իսկ առանց դրան չի կարելի դեկավարել պրոլետարիատին, պետութիւնը և յերկիրը:

VI. ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ. առաջ յես խոսեցի ընդհանուր հարցի մասին, ինչպես որինակ սոցիալիզմը մի յերկրում կառուցելը, հետո անցա ավելի նեղ հարցի—ՆեՊ-ի մասին խոսեցի: Այժմ կանցնեմ մի ուրիշ հարցի, այն ե կխոսեմ մեր անտեսութիւն և մասնավորապես պետական արդյունաբերութիւնն ու պետական կապիտալիզմի մասին:

Այս մասին յես մի անգամ ել ասիթ եմ ունեցել խոսելու Մոս-

կվայի կազմակերպութիւնն նահանգական կոնֆերանսում. այնպես վոր հավանորեն յես ստիպված կլինեմ վորոշ բաներ կրկնելու:

Այժմ յես ամենից առաջ կխոսեմ նրա մասին, թե ինչու այս հարցը կանգնում ե մեր առաջ: Յեվ կասեմ, վոր այս հարցն ել մեր առաջ կանգնում ե ճիշտ նույն պատճառով, ինչ պատճառով վոր սոցիալիզմը մի յերկրում կառուցելու և նոր տնտեսական քաղաքականութիւնն հարցերը:

Իսկ դրա պատճառը կարճ կերպով կարելի ե այսպես ձևակերպել.— բանվոր դասակարգի մեջ նոր խավեր են մտնում, գյուղից շարունակ նորանոր բանվորական կազմեր են գալիս: Բայց չե՞ վոր դա մի մարդկային «հում նյութ» ե, վորը քաղաքի կյանքում դեռ չի մշակվել: Պրոլետարիատի այդ նոր կազմերը մեր պրոֆմիտութիւնների դպրոցը դեռ չեն անցել, զանազան բանվորական կազմակերպութիւններում դեռ չեն յեղել: Ահա հենց դրանք են, վոր առաջին հերթին դնում են այդ հարցերը—ինչ բան ե ՆեՊ-ը, ո՞ւր ենք գնում, գնում ենք արդո՞ք մենք դեպի սոցիալիզմ, թե՞ դեպի կապիտալիզմ: Գյուղից յեկած այդ նոր բանվորներն ել զարձայլ դնում են մեր պետական արդյունաբերութիւնն, մեր գործարանների, ընդհանրապես մեր անտեսութիւնն հարցերը: Իսկ ամենից առաջ նրանց հետաքրքրում ե մեր պետական արդյունաբերութիւնն հարցը, վորտեղ իրենք անմիջապես աշխատում են:

Այժմ, յեթե վորձենք ասել, թե մեր պետական արդյունաբերութիւնը սոցիալիստական ե, և աշխատենք դրան ճիշտ ձևակերպումն տալ, դա այնքան ել ճիշտ չի լինի, վորովհետև սոցիալիզմը այնպիսի մի կարգ ե, յորը ամբողջ անտեսութիւնը կազմակերպված ե:—Ահա թե ինչ ե սոցիալիզմը: Դրա համար ել ի հարկե, սխալ կլինի ասել, թե անտեսութիւնն մի վորեւե մասը սոցիալիզմ ե: Յեթե մեր պետական արդյունաբերութիւնը համարում ենք սոցիալիստական, դա դեռ ևս չի նշանակում, թե մեր ամբողջ անտեսութիւնը սոցիալիստական ե: Վորովհետև պետական արդյունաբերութիւնը մեր ամբողջ անտեսութիւնն մի մասնիկն ե կազմում: Սոցիալիզմը, դա մի հասկացողութիւնն ե, վորը վերաբերում ե ամբողջ անտեսութիւնը: Յեթե մեր անտեսութիւնը յուր ամբողջութիւնամբ կազմակերպված լիներ հասարակական սեփականութիւնն հիմունքներով, այն ժամանակ դա սոցիալիզմ կլիներ: Ուրեմն, յորը խոսում ենք մեր պետական արդյունաբերութիւնն մասին, այն դեպքում սոցիալիզմ բառը գործ ենք ածում վորոշ չափով պայմանական իմաստով, այսինքն, վոր վերաբերում ե մեր անտեսութիւնն միայն մի մասին: Իսկ վե՞ր ենք ինչե՞

մասին ե, ինչպես ե գրված հարցը: Յես այդ հարցին ել ճիշտ այնպես կմոտենամ, ինչպես վոր սոցիալիզմը մի յերկրում կառուցելու ե ՆեՊ-ի հարցերին:

Ամենից առաջ յես մի քանի խոսք կասեմ այն մասին, թե այդ հարցին ինչպես են մոտենում մեր բացարձակ թշնամիները: Մենք գիտենք, վոր մենչևիկները, եսերները ե մեր մյուս թշնամիները սոցիալիզմը մի յերկրում կառուցելը միանգամայն անհնարին են համարում իսկ ՆեՊ-ի մասին նրանք ասում են, վոր դա ուղղակի կապիտալիզմ ե ե ուրիշ վոչինչ: Իսկ ինչ են ասում մեր բացարձակ թշնամիները պետական արդյունաբերութեան մասին: Նրանք, ի հարկե, ասում են, թե այստեղ սոցիալիզմի մասին խոսք ել չի կարող լինել: Դուք շատ լավ գիտեք, թե ինչ են ասում մենչևիկները: Նրանք ուղղակի ասում են, վոր այժմ բանվոր դասակարգին շահագործում ե պետութունը. իսկ այդ պետութունը վոչ թե պրոլետարական ե, այլ ՆեՊ-ի գիկտատուրան ե: Մենչևիկները կարծիքով պետութունը բանվորական ուժ վարձող ե, ուրեմն ե շահագործող ե, իսկ պետական ձեռնարկութունները զուտ պետական-կապիտալիստական կամ ուղղակի կապիտալիստական են: Այնպես վոր սոցիալիզմի մասին այստեղ վոչ մի խոսք չի կարող լինել: Ահա թե ինչ են ասում մեր բացարձակ թշնամիները:

Մենք գիտենք նույնպես, թե ինչ ե ասել Լենինը մեր պետական արդյունաբերութեան մասին: Լենինի կարծիքով մեր պետական արդյունաբերութունը «հետևողական-սոցիալիստական» ե: Այժմ տեսնենք, թե ինչ զիրք ե բռնել այս խնդրում նոր ուղղության: Նրանք կամ այս են ասում, կամ այն ե վերջ ի վերջո նույնիսկ քիչ ե մնում, վոր մեր պետական արդյունաբերութունը համարեն պետական-կապիտալիստական: Այդ ուղղութեան մի քանի ընկերներ ել միջին դիրքն են բռնում ե մանավանդ մեր ուժեղ հակահարձակումից հետո, նրանք հայտարարում են, վոր իրանք ել «Լենինի հետ միասին» մեր պետական արդյունաբերութունը համարում են «հետևողական-սոցիալիստական»:

Յես այստեղ մտադիր չեմ ցիտատներ բերելու ընկ. ընկ, Զալուցկուց, Յեվզովիմովից. չեմ խոսի նաև այն մասին, թե ինչ ե ասել ընկ. Զինովյեվը յուր «Լենինիզմ» գրքում: Այդ բոլորի մասին մենք խոսել ենք համագումարում ե Մոսկվայի այն պատասխանի մեջ, վոր ուղղված ե յեղել Լենինգրադի կոնֆերանսին: Սակայն յես անհրաժեշտ եմ համարում այստեղ բերելու ընկ. Կամենի ճառից այն կտորը, վոր արտասանել ե նա կուսակցական համագումարում: Յես այդ բանն անում եմ յերկու պատճառով. մեկ

նրա համար, վոր Կամենը, շատ զգույշ կերպով ե ձևակերպում այդ հարցը, իսկ մյուս կողմից ել նա միանգամայն հակասում ե այն վորոշմանը, վոր տվել ե ընկ. Լենինը մեր պետական արդյունաբերութեան մասին: Ընկ. Կամենը բառացի կերպով այսպես ե ասում.—«Մեր պետական ձեռնարկութունները (предприятия) վորպես բանվորական պետութեան սեփականութուն—սոցիալիստական են, իսկ մարդկանց նկատմամբ, դեռ վոչ»: Ի՞նչ ե նշանակում սա: Իմ կարծիքով Կամենի այս խոսքերը մարքսիստական չեն: Դրանք միանգամայն իրականութեանը չեն համապատասխանում, ուրեմն ե սխալ են: Յես այս բանի վրա պետք ե կանգ առնեմ, վորովհետև ուղղութեաններն ասածներից սա ամենազգույշն ե, բայց ե չնայած դրան, սխալ: Ինչ ե ուզում ասել ընկ. Կամենը յուր այդ ձևակերպումով: Նա դրանով ուզում ե ասել հետևյալը.— մեր պետական արդյունաբերութունը սոցիալիստական ե նրա համար, վորովհետև արդյունաբերութեան միջոցները, Ֆաբրիկաների շենքերը, մեքենաները պատկանում են պրոլետարական պետութեանը: Այս բոլորը, մի խոսքով պրոլետարական պետութեան սեփականութուն են կազմում: Միաժամանակ նա ասում ե, թե ինչ վերաբերում ե մարդկանց մեջ յեղած փոխհարաբերութուններին, դրանք սոցիալիստական չեն:

Յես ամենից առաջ պիտի ասեմ, վոր միանգամայն սխալ ե նման բացատրութունը: Այժմ յես հարց եմ տալիս— ի՞նչ բան ե հենց ինքը սեփականութունը: Գոնե մեր, մարքսիստներիս կարծիքով, սեփականութունը դա հենց մարդկանց մեջ յեղած փոխհարաբերութունն ե. միթե դա նորութուն ե մեզ համար: Դեռ ես Մարքսը բուրժուական զիտնականների հետ վիճելու ժամանակ դա ապացուցել ե: Ինչ ե նշանակում, յերբ վոր ասում ենք, թե սեփականութունը պատկանում ե պրոլետարիատին դա նշանակում ե, վոր պրոլետարիատը վորպես դասակարգ, վորոշ փոխհարաբերութուններին մեջ ե գտնվում ուրիշ դասակարգերի նկատմամբ: Յեվ յեթե մենք այժմ ասում ենք, թե Ֆաբրիկաներն ու գործարանները ե արտադրութեան այլ միջոցները պատկանում են բանվոր դասակարգին, դա նշանակում ե, վոր վորոշ փոխհարաբերութուններ կան պրոլետարիատի ե բուրժուազիայի մեջ: Ուրիշ խոսքով դա նշանակում ե, վոր բուրժուազիան այլևս այդ Ֆաբրիկաների ու գործարանների տերը չե, ե հետևաբար վորոշ փոխհարաբերութեան մեջ գտնվում ե պրոլետարիատի նկատմամբ: Միթե սեփականութունը վորոշվում ե նրանով, թե ինչ կա մի մարդու ձեռքում: Որինակի համար, վերցնենք մի մարդ, վորը գտնվում ե

անապատում և վորոշ չափով իրեր ունի, միթե կարելի են րա մասին ասել, վոր նա սեփականատեր է. չե՞ վոր այդտեղ մարդկանց փոխհարաբերություններ չկան, պարզ է, վոր այդտեղ սեփականության մասին վոշ մի խոսք չի կարող լինել: Ուրեմն, յեթե սեփականության հարցը պայմանավորված է մարդկանց փոխհարաբերություններով, նշանակում է, ընկ. կամենի տեսակետը միանգամայն սխալ է, յերբ նա սեփականության և մարդկանց փոխհարաբերությունների հարցը իրարից տարբերում է: Քիչ թե շատ գրագետ մարքսիստի համար դա պարզ պետք է լինի: Սա իմ առաջին նկատողությունն է: Այժմ՝ յերկրորդը:

Տեսնենք, թե կարլ Մարքսը, վորին, համոզված եմ, վոշ վոք «ուկլոնիստ» չի համարի՝ ինչպես է վորոշում արտադրության ձևվերը: Նա արտադրության ձևերը իրարից տարբերում է նրանով, թե վոր դասակարգի ձեռքին են գտնվում արտադրության միջոցները: Յե՛վ միթե դա այդպես չէ: Ի հարկե, այդպես է: Արտադրության կապիտալիստական ձևը ինչո՞վ է տարբերվում ֆեոդոլականից. ինչո՞վ է տարբերվում ֆեոդոլականը կապիտալիստականից և ինչո՞վ կապիտալիստականը՝ սոցիալիստականից: Մրանք բոլորը իրարից տարբերվում են նրանով, թե ինչպես են մարդկանց փոխհարաբերությունները, յեթե ի նկատի ունենանք, թե ում սեփականությունն են կազմում արտադրության միջոցները: Սա միակ ճիշտ վորոշումն է, վորի մեջ վոշ մի կասկած չի կարող լինել: Այս բոլորից հետևում է, վոր յերբ խոսում ենք այն մասին, թե մեր պետական արդյունաբերությունը կապիտալիստական է թե սոցիալիստական, այն զեպքում չպետք է մոռանալ, վոր արտադրության միջոցների սեփականության հարցը վճռական նշանակություն է ստանում: Այժմ, քանի վոր ինքներդ հաստատում եք, վոր Փարբրիկներն ու գործարանները գտնվում են պրոլետարիատի ձեռքում, նշանակում է, վոր դուք պետք է համաձայն լինեք նաև, վոր մեր արդյունաբերությունը սոցիալիստական է: Ահա իմ յերկրորդ նկատողությունը: Այժմ՝ յերրորդ:

Ոպպոզիցիային հարող ընկերները մի ուրիշ հարց ել են դնում. — իսկ Փարբրիկում, ասում են նրանք, մարդ անց փոխհարաբերությունները սոցիալիստական են և առհասարակ. այնպես են, ինչպես կլինեք սոցիալիզմի ժամանակ: Այս հարցի մասին ևս հարկավոր է խոսել: Յես կասեմ, վոր ամբողջովին սոցիալիստական չեն: Ինչո՞ւ. վորովհետև կատարյալ սոցիալիստական կարգերում, մասնավոր կոմունիզմի ժամանակ վոշ կառավարիչներ են լինելու և վոշ ել նրանց յեթարկվողներ: Այն ժամանակ, ինչպես ենզեյսն է ա-

սել, վոշ թե մարդկանց վրա պիտի կառավարեն, այլ իրե՛ր, այսինքն, տարբերություն չի լինելու դիրեկտորի, տնտեսավարի և հասարակ բանվորի մեջ. տարբերություն չի լինելու նաև մտավոր և ֆիզիքական աշխատանքի, վորակյալ և վոշ վորակյալ բանվորների մեջ: Շատ լավ, այս բոլորը հասկանալի է: Բայց թույլ տվեք այդ ժամանակ մի հարց տալ: Յեթե վերցնելու լինենք պրոլետարական դիկտատուրան կամ կուսակցությունը, ապա ի՞նչ եք կարծում, չի՞ լինի, արդյոք, նույն հարցերն ել այստեղ դնել:

Յես ամենից առաջ կվերցնեմ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Մենք գիտենք, վոր մեզ մոտ կա պետական իշխանություն, պրոլետարական դիկտատուրա, պետական ապարատ: Այժմ յես ձեզ հարցնում եմ — բոլոր բանվորներն են արդյոք մասնակցում այդ պետական ապարատում. ի հարկե վոշ բոլոր բանվորները: Բայց և այնպես չնայած դրան, մեր պետական իշխանությունը պրոլետարական դիկտատուրա է, թե՛ չէ: Ի հարկե, այն: Իսկ ի՞նչ է յերևում այստեղից: Այն, վոր մեզ մոտ դեռ ամեն ինչ այնպես չէ, ինչպես կցանկանայինք: Ի հարկե, մեզ մոտ բոլոր բանվորները չեն մասնակցում արտադրությունը վարելու գործում. դա ճիշտ է: Բայց միթե հենց դրա համար ել կարելի է ասել, թե մեզ մոտ պետական կապիտալիզմ է: Կամ միթե դրա համար պետք է ասել, թե մեզ մոտ կապիտալիստական իշխանության տարրերը ավելի շատ են. ի հարկե վոշ: Յերբ վոր բանվորներից շատերը մասնակցում են կառավարող ապարատներում, իսկ շատերն ել դեռ ևս այնքան մոտ չեն կանգնած այդ գործին ու շատ անգամ կարծես թե դգում են, թե իրանք այն դասակարգի մասը չեն կազմում, վորը կանգնած է իշխանության զրուխը — կարելի՞ է, արդյոք, այդ իշխանությունը համարել պրոլետարիատի դիկտատուրա: Իմ կարծիքով կարելի է անվանել: Ի հարկե, դա մե՞ր աշխատանքի բացասական կողմը պետք է համարել, յերբ վոր բոլոր բանվորները չեն մասնակցում:

Պետք է պայքարել, վորպեսզի այդ թերությունը վերանա: Յե՛վ դա անպայման մեզ կհաջողվի անել:

Սակայն այս բոլորը մեզ իրավունք չեն տալիս ասելու, թե մեզ մոտ պրոլետարական դիկտատուրա չէ: Իսկ չլինի՞ թե մեզ ասեն, թե մեզ մոտ յերկուսն ել կա — պրոլետարիատի դիկտատուրան բուրժուազիայի դիկտատուրայի հետ միասին: Նման կարծիքը անշուշտ սխալ է, վորովհետև յերկու դասակարգերի դիկտատուրա յերբեք չի կարող լինել: Նորից կրկնում եմ, վոր լայն մասսաները դեռ բավականաչափ չեն մասնակցում պետությունը կառավարելու

գործում: Դեռ ամեն մի «խոհարարուհի», ինչպես ասել է ընկ. Լենինը, չի սովորել պետութիւնը կառավարել: Դա միանգամայն ճիշտ է: Մենք դեռ շատ պայքար պիտի մղենք բյուրոկրատիզմի դեմ՝ ամենալայն բանվորական մասսաներին ավելի շատ զբաղելու համար: Մենք ամենավատ տեսակի լավատեսները կլինենք, յեթե ասեինք թե այս տեսակետից ամեն բան արված է: Սակայն սրանից ամենևին չի հետեւում, վոր մենք իրավունք ունինք ասելու— թե պետական իշխանութիւն տեսակետից մեզ մոտ պրոլետարական դիկտատուրա է, իսկ մարդկանց փոխհարաբերութիւն տեսակետից պրոլետարական դիկտատուրա չէ, այլ կեսը պրոլետարական է, կեսը կապիտալիստական:

Մեր պետութիւնը նոր ձևի է: Լենինը նրա մասին ասել է հետևյալը.—Մեր պետութիւնը պրոլետարական խորհրդային պետութիւն է, թեկուզ և բյուրոկրատիզմի մնացորդներով: Բայց այդ պրոլետարական դիկտատուրան յուր մեխանիզմով կարող էր ունենալ և լավ և վատ կողմեր: Ի հարկէ, սխալ կլինի ասել, թե նա չափազանց լավ է. նա շատ թերութիւններ ունի, վորոնց դեմ մենք շարունակ պայքարում ենք: Բայց և այնպես նա մնում է վորպէս պրոլետարական դիկտատուրա: Նույնը կարելի է ասել նաև մեր պետական արդյունաբերութիւն մասին: Նա անշուշտ սոցիալիստական է, վորովհետև պրոլետարիատի սեփականութիւնն է կազմում: Դա անվիճելի է: Իսկ յեթե մեզ մոտ ամբողջ բանվոր դասակարգը դեռ չի մասնակցում արդյունաբերութիւնը վարելու գործում և դեռ առայժմ կան «անտեսավարներ» և «վոչ անտեսավարներ», դրա պատճառը նա է, վոր հենց ինքը բանվոր դասակարգն էլ ունի զանազան խավեր— ավելի առաջադեմ և հետամնաց տարրեր: Ահա թե ինչն է պատճառը և վոչ թե նա, վոր իբր թե այդ գործում կապիտալիստական փոխհարաբերութիւնները տարրեր էլ կան:

Այժմ յես ձեզ մի ուրիշ որինակ կբերեմ: Մեզ մոտ կան պրոֆմիութիւններ, անտեսավարներ. կուսակցութիւն, կուսակցութիւն մեջ էլ կան զանազան խավեր:

Կա և Կենտրոնական Կոմիտե, վորի մասին ի միջի այլոց ասում են.— «Կենտրոնական Կոմիտեն խաղում է մարդկանց հետ, նա խարդախ և ամենից ուժեղն է» (ծիծաղ): Ապա մենք գիտենք, վոր կա նաև միջակ կուսակցական, կուսակցութիւն այսպէս կոչված ստորին շերտեր և այլն: Ի՞նչն է այս բոլորի պատճառը. դրա պատճառը նա է, վոր մեզ մոտ ամբողջ բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակը նույնը չէ: Կան ավելի առաջադեմ ու հետամնաց խավեր:

Այժմ յեթե ընկ. Կամենևի պատճառաբանութիւնը հետևողականորեն զարգացնելու լինենք, այն ժամանակ դուրս կգա հետևյալը.— ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մեր կուսակցութիւն մեջ էլ կուսակցական զանազան խավեր կան, գոյութիւն ունեն այսպէս ասած կուսակցական «չիններ ու որդեններ», ուրեմն նշանակում է, թե մեր կուսակցութիւն մեջ էլ անկասկած կան կուսակցական կամ պետական կապիտալիզմի տարրեր (ծիծաղ):

Բանվոր դասակարգը բաղկացած է զանազան խավերից: Մենք ունենք մի կողմից պրոֆմիութենական գործիչներ, մյուս կողմից էլ անտեսավարներ: Բանվոր դասակարգի միջից դուրս են գալիս թե պրոֆմիութենական գործիչներ և թե անտեսավարներ: Գործարանում կամ ֆաբրիկայում մեկը մյուսից վեր է կանգնած: Դա նշանակում է, վոր բանվոր դասակարգի մեջ էլ վորոշ բաժանումն է կա: Չէ վոր բանվոր դասակարգը միատեսակ չէ: Նրա առաջ չափազանց բարդ խնդիրներ կան դրված: Տնտեսավարը պիտի հետևի, վոր արտադրութիւնը շարունակ բարձրանա: Յերբ վոր նա չափազանցութիւն է հասնում ու սխալներ է գործում, այն ժամանակ պրոֆմիութենական գործիչը հիշեցնում, ուղղում է նրան: Սխալ է ասել, թե այստեղ մարդկանց փոխհարաբերութիւնները այնպէս են, ինչպէս լինելու է սոցիալիզմի ժամանակ: Կատարյալ սոցիալիստական կարգերի ժամանակ պարզ է, վոր չեն լինելու վոչ կուսակցութիւնը և վոչ էլ պրոֆմիութիւնները՝ այն ժամանակ կատարելիք դերերի մեջ հավասարութիւն է լինելու. կուլտուրական աստիճանի տարբերութիւն ընդհանուր առմամբ չի լինելու: Կոմունիզմի ժամանակ բոլորի աչքում «հեղինակութիւն» ունեցող ընկերների խոսքին լսելու են ճիշտ այնպէս, ինչպէս որինակ այժմ մենք լսում ենք բժշկի տված խորհուրդներին: Յեթե այժմ բժիշկը հիվանդին քննելուց հետո ասում է, թե հարկավոր է վորևէ դեղ ընդունել՝ միթե այդ հարցը դրվում է ձայնատվութիւն: Ի հարկ է չէ: Կամ թե բոլորը Պուշկինին համարում են մեծ բանաստեղծ և ամենևին ձայնատվութիւն չեն դնում, թե ով է կողմնակից այդ բանին և ով է դեմ: Այժմ ի հարկ է այդպէս չէ, բայց մենք դրան շարունակ ձգտում ենք:

Հիմա յես հարցնում եմ. միթե կարելի է կարծել, թե վորովհետև հիմա այս բոլորը դեռ չկա, ուրեմն և մեր կուսակցութիւն մեջ էլ նույնպէս կապիտալիստական փոխհարաբերութիւններ են: Միթե կարելի է ասել, թե անտեսավարների և պրոֆմիութենական գործիչների փոխհարաբերութիւնները կապիտալիստական են. պարզ է, վոր այդ բոլորը կլինեն կատարյալ հիմարութիւններ: Յե-

Թե այժմ մեզ մոտ, պրոլետարական դիկտատուրայի 8-րդ տարում պետական արդյունաբերութեան մեջ մարդկանց փոխհարաբերությունները միանգամայն սոցիալիստական չեն՝ դա դեռ ամենևին չի նշանակում, թե այդ փոխհարաբերությունը կապիտալիստական են։ Միթե այն, ինչ վոր սոցիալիզմ չէ, անպայման կապիտալիզմ է։ Դա միանգամայն սխալ է։ Հարկավոր է վերջ ի վերջո հասկանալ, վոր կան այնպիսի գրություններ, վորոնք վոչ ամբողջովին սոցիալիզմ են և վոչ ել կապիտալիզմ։ Իսկ ինչ վերաբերում է մեր պետական արդյունաբերութեանը, պետք է ասել, վոր վոչ մի հիմք չկա յենթադրելու, թե նա պետական կապիտալիզմ է։ Նոր ուղղուղիցիան այս հարցում միանգամայն սխալվում է։

Այժմ յես կցանկանայի մի քանի խոսք ասել այն մասին, թե համագումարում ընկ. Տոմսկու գեկուցումից հետո վիճաբանությունների ժամանակ ինչ է ասել ընկ. Գլեբով-Ավիլովը։ Ահա նրա խոսքերը. — «Մեր կուսակցութեան 11-րդ համագումարից հետո, յերբ մենք ընդունեցինք Լենինի գրած բանաձևը՝ ձեր ամբողջ գործունեյությունը (ինչպես յերևում է կարելի է նույնիսկ ասել «ձեր» և «մեր») ամբողջապես տարվել է այն ուղղութեամբ, վոր նպատակն էր վոչ թե մեր սոցիալիստական, այլ պետական-կապիտալիստական Ֆաբրիկայի հաշտութեանը։ Տեսնում եք թե մարդիկ ինչքան հետևողական են։ Մեկ հայտարարում են, վոր մեր ձեռնարկությունները հետևողական-սոցիալիստական տիպի են, իսկ մյուս կողմից ել ասում են, թե 11-րդ համագումարից հետո մեր քաղաքականութեան այնպես է տարվել, վոր շարունակ շուր ենք ածել կապիտալիստական Ֆաբրիկայի շրաղացի վրա։ Այժմ յես ձեզ հարցնում եմ. վորոնք են մեր կապիտալիստական Ֆաբրիկաները. նրանց մի մասը կոնցեսսիայով տված ձեռնարկություններ են, մի մասը կապալով տված, մյուս մասն ել մասնավոր ձեռնարկություններ։ Այս բոլորը միասին վերցրած կազմում են մեր արդյունաբերութեան միայն 5 տոկոսը։ Յեվ միթե 11-րդ համագումարից սկսած մինչև այսօր մենք չենք ածում միայն այս 5 տոկոսի շրաղացի վրա։ Միթե կգտնվեն այնպիսի հիմար մարդիկ, վորոնք հավատան նման խոսքերին։ Ընկ. Գլեբով-Ավիլովի «սաճից դուրս է գալիս, վոր մենք մեր պետական Ֆաբրիկաները դարձրել ենք պետական կապիտալիստական։ Ահա հենց այստեղ է, վոր պարզվում է, թե ինչքան է սխալվում նոր ուղղուղիցիան։ Չե՞ վոր հենց 11-րդ համագումարից հետո է, վոր մեր պետական արդյունաբերությունը սկսել է ուժեղ կերպով զարգանալ։ Ապա հետաքրքիրն այն է, վոր Գլեբով-Ավիլովն այս բոլորից հետո միտամանակ ասում է. — «Մենք

միանգամայն համաձայն ենք, վոր մեր նացիոնալիզացիայի յենթարկված ձեռնարկությունները հետևողական սոցիալիստական են»։ Միթե սա և տուալին ասածը իրար համապատասխանում են։ Ի հարկ է չեն համապատասխանում։ Իսկ դրանից հետո տեսնենք, թե նորից ինչ է ասում ընկ. Ավիլովը. — «Ինչպիսի՞ փոխհարաբերություններ կան Ֆաբրիկայի և բանվորների մեջ. հավաքական պայմանագրերը կնքում են պրոֆմիությունները ազմինիստրացիայի կամ տնտեսավարի հետ»։ Յեվ ընկ. Ավիլովն այստեղից յեզրակացնում է, վոր բանվորները չեն մասնակցում այդ գործում, ուրեմն և բանվորների ու տնտեսավարների փոխհարաբերությունները սոցիալիստական չեն։

Յես ձեզ արդեն ասել եմ, թե ինչ մտքով սա պիտի հասկանալ։ Այժմ համեմատենք նրա ասածները։ Առաջ նա ասում էր. — «Դուք պետական կապիտալիզմի շրաղացի վրա շուր եք ածում»։ Կոլլեկտիվ պայմանագրերը բանվորները պրոֆմիությունների միջոցով կնքում են տնտեսավարների և ազմինիստրացիայի հետ։ Յեվ ընկ. Ավիլովի կարծիքով դրանց փոխհարաբերություններն այնպես են, վոր հենց դրանով ել «շուր է ածվում» պետական կապիտալիստական Ֆաբրիկայի շրաղացի վրա։ Իսկ ինչ է դուրս գալիս այստեղից։ Այն, վոր տնտեսավարների և բանվորների փոխհարաբերությունները զուտ կապիտալիստական են։ Իսկ այստեղից ինչ է ստացվում. այն, վոր մեր տնտեսավարները վոչ թե բանվոր դասակարգի ներկայացուցիչներն են, այլ վոր նրանք մի նոր շահագործող, կապիտալիստական դասակարգ են։ Յեվ դեռ ավելին։ Այստեղից դուրս է գալիս, վոր տնտեսավարները փաստորեն մեր ձեռնարկությունների տերն են, իսկ բանվորներին պաշտպանող որգանները միայն պրոֆմիություններն են. ուրիշ խոսքով մեզ մոտ բացարձակ կապիտալիստական կարգեր են։

Իսկ ինչպես ենք մենք նայում այն փոխհարաբերությունների վրա, վոր կան տնտեսավարների ու պրոֆմիությունների և կամ կարմիր դիրեկտորների ու բանվորների մեջ։ Մենք ասում ենք, վոր բանվոր դասակարգը դեռ այնքան ուժեղ չունի, վոր բոլորը մասնակցեն կառավարելու մեջ։ Ո՞վ չգիտե, վոր բոլորն ել միտեսակ զարգացած չեն, վոր ամեն մի բանվոր չի կարող դիրեկտոր լինել. միթե կարող են գտնվել այնպիսի մարդիկ, վորոնք ասեին. — «Ընկերներ. յեկեք այդ բոլոր կարմիր դիրեկտորներին հեռացնենք և բոլոր տեխնիքական ու առևտրական հարցերը վճռենք Ֆաբրիկայի բանվորների ընդհանուր ժողովների միջոցով»։ Միթե կարիք կա ապացուցելու, վոր այդ դեպքում մենք միանգամայն

կըստ յայնք մեր արդյունաբերութիւնը: Դրա համար ել ասում ենք,—մենք ունենք ավելի առաջագեմ ու փորձված բանվորներ, վորոնք ինտելիգենցիայի վորոշ խավերի, այսպես կոչված սպեցներր հետ միասին կարող են կառավարել մեր արդյունաբերութիւնը: Մեր կուսակցութիւնն ել բանվոր դասակարգի անունից ասում է դրանց — ահա դուք պիտի տանք գործը: Մենք գիտենք նույնպես, վոր այդ աշխատանք տանող ընկերները կանգնած են մեծ վտանգի առաջ, վորովհետեւ նրանք աշխատում են այնպիսի պայմաններում, վոր միշտ կարող են յենթարկվել ոտար ազդեցութիւններր: Դա մի վտանգ է, վորը մենք նախատեսում ենք և վորի դեմ բոլոր ուժերով պայքարում ենք: Դրա հետ միաժամանակ մենք ասում ել ենք, վոր մեր պրոֆմիութենական գործիչներն ել շնիկներր նման չպետք է անտեսավարներր առաջ հետևի վտտքերր վրա կանգնեն ու հարցնեն՝ ինչ եք հրամայում, վոր անենք: Ընդհակառակը, պրոֆմիութենական կազմակերպութիւնը դերը կայանում է հենց նրա մեջ, վորպեսզի տրեստեսավարին կարգի հրավիրի և թույլ չտա, վոր նա ծայրահեղութիւններր հասնի: Ընդհանուր առմամբ դրանք միասին պրոլետարական որգանիզմի յերկու մասն են կազմում. յեթե աջ ձեռքը սխալ է գործում, ձախն իսկույն ուղղում է նրան: Ահա թե ինչպես ենք մենք նայում խնդրին: Մեր դասակարգի մեջ աշխատանքի վորոշ բաժանումն կա: Այդ բաժանումից մի շարք վտանգներ են առաջ գալիս, վորոնց դեմ մենք միշտ պայքարում ենք: Բայց միաժամանակ չպետք է մոռանանք, վոր այդ բոլոր խմբակներն ել մեր դասակարգի անդամներն են, մեր ներկայացուցիչներն են, վոր կանգնած են մեր որգաններր գլխին: Իսկ ինչպես է այդ հարցին նայում ընկ. Գլեբով-Ավիլովը: Միթե նա խնդրին այսպես է նայում. ի հարկե, չէ: Նա բանվորների և անտեսավարների մեջ յեղած փոխհարաբերութիւնները համարում է զուտ կապիտալիստական: Այդ տեսակետից յեղեկով, պարզ է, վոր նա միանգամայն սխալ յեզրակացութիւններ պիտի անի: Այժմ մի ուրիշ հարց: Քանի վոր բանվոր դասակարգի մեջ կան ավելի հետամնաց խավեր և ավելի պակաս վորակյալ աշխատանք են տանում, պարզ է, վոր քիչ են ոռճիկ ստանում: Հենց այդ բանվորներն են, վորոնց մեծ մասը մանավանդ գյուղից գործարան գալով ու վատ ապրելով, սկսում է հայնուել.—«Ի՞նչ է սա, համարյա թե նույնն է, ինչ վոր առաջ եր. հինգ հոգուց բաղկացած ընտանիք ունիմ, 30—40 բուրլի ոռճիկ եմ ստանում և շան նման եմ ապրում»: Իսկ ինչ ենք պատասխանում այդ բանվորին: Մենք նրան ասում ենք.

«Ամեն կերպ աշխատում ենք քո ոռճիկը բարձրացնել վորքան հնարավոր է, բայց շատ բարձրացնել չենք կարող, վորովհետեւ ներկա դրութիւնը մեզ թույլ չի տալիս այդ անելու: Հարկավոր է ամեն կերպ աշխատել, արդյունաբերութիւնը շուտ բարձրացնել, վորպեսզի ոռճիկներն ել ավելի շուտ ավելացնենք: Մի քանի տարի առաջ մեր դրութիւնը շատ վատ եր, իսկ այժմ, համեմատաբար, բավականին լավացել է: Դու սխալվում ես, յեթե կարծում ես, թե քեզ առաջվա նման շահագործում են: Յեթե դու այդպես ես մտածում, նշանակում է դու չես իմանում, թե ինչ է վատ ապրելը և ինչ է շահագործելը: Շահագործելը այն է, ինչ վոր արել են նախկին կապիտալիստները: Նրանք քո կաշին մաշկելով, քեֆեր են արել, իրենց համար նոր գործարաններ են կառուցել, մի խոսքով քեզինց վերցրածները անցել են քո թշնամի դասակարգի ձեռքը: Իսկ ներկայումս յեթե դու վատ ես ապրում, դա չի նշանակում, թե դու շահագործվում ես, այլ դրա պատճառը նա է, վոր մենք զեռ աղքատ ենք»:

Միշտ ել, յերբ վոր նման հարցեր են շոշափվում, յես հիշում եմ 1918 թիվը, յերբ յես այսպիսի մի որինակ եի բերում.—Ասենք թե մենք ունենք մի պարտիզանական խումբ, վորը կռվում է հակահեղափոխութիւնը դեմ. նա և՛ քաղցած է, և՛ մերկ է և՛ վտարուրիկ: Այդ խմբի հրամանատարը պարտիզաններին ուղարկում է կռվի, նրանք չնայած վոր ամբողջովին կորած են վոշիւների մեջ, սոված ու ծարավ են, այնուամենայնիվ գնում են կռվելու, նրանք յենթարկվում են իրենց հրամանատարին և չնայած իրենց դրութիւնը, այնուամենայնիվ շարունակում են կռվել: Հապա ի՞նչ եք կարծում, յեթե նրանցից մեկը կանգներ ու ասեր.—«Այս ի՞նչ բան է, հին բանակի մեջ մենք նույնպես կռվում եինք և այժմ ել նույնն է. ել ի՞նչ տարբերութիւն կա հնի և նորի մեջ. զեռ այն ժամանակ մեր դրութիւնը ավելի լավ եր»: Ի՞նչ եք կարծում, սա ուղիղ կլիներ: Իսկ մենք գիտենք, վոր այն ժամանակ նման տրեստուներ լավում եին, իսկ հակահեղափոխականները ամեն կերպ աշխատում եին ոգտագործել նման զժգոհութիւնները, բայց պետք է ասեմ, վոր նման զժգոհութիւններ լավել են վոչ բոլորի, այլ առանձին անգիտակից պարտիզանների կողմից, վորոնք լավ չեին կարողանում հասկանալ, թե ինչ նպատակներ է ունեցել ցարական բանակը և ինչու համար են կռվում մեր պարտիզանական խմբերը: Ներկայումս նույնը կարելի է ասել մեր արդունաբերութիւնն նկատմամբ: Ամեն մի բանվոր գիտե, վոր այժմ կատաղի կռիվ ենք մղում կապիտալիստական աշխարհի դեմ: Ինչ խոսք, վոր

այժմ չենք կարող այնպես անել, վոր բոլոր բանվորները լավ ապրեն, վոր նրանք բոլորը սովորեն դպրոցներում, համալսարաններում: Ներկայումս հնարավոր չէ այնպես անել, վոր բոլորը հավասար ուժիկ ստանան: Մենք կամաց-կամաց ենք մոտենում այդ բանին. մեր բոլոր աշխատանքները տարվում են այդ ուղղութիւնով: Մի խումբ բանվորների ուղարկում ենք համալսարան սովորելու, մի ուրիշ խմբի արտադրական խորհրդակցութիւնների միջոցով դաստիարակելով, նրանցից այսպես կոչված առաջ քաշվածներ (վիզվիժենեց) ենք պատրաստում և այդ բոլորը անում աստիճանաբար: Յեւ վիճեք կ'ործում. ներկա պայմաններում մենք դրանից ավելի կարող ենք անել. ի հարկէ, չէ: Իսկ յեթե մենք քիչ ուժիկ ստացող ու իր կյանքի պայմաններից դժգոհ բանվորին, — վորն ասում ե, թե մեզ մոտ ամեն ինչ հնի նման ե — յեթե այսպես մտածող բանվորին ասենք թե, այո, մեզ մոտ ամեն ինչ հնի նման ե, մենք դրանով նրան սոցիալիստական դաստիարակութիւն տված և սոցիալիզմի գործին դրանով նպաստած կլինենք: Ի հարկէ, չէ: Մի անգամ ընդմիջտ պիտի իմանալ, վոր միայն դեպի սոցիալիզմ գնալով մենք կարող ենք բանվորների դրութիւնը բարելավել: Ուրիշ ճանապարհ չկա: Նման տրամադրութիւնները խրախուսելով միայն փաստում ենք պրոլետարիատի դիկտատուրայի գործին: Ի հարկէ, մենք գիտենք, վոր քաղցած մարդուն «չէ», ասելը դժվար ե և ավելի ճիշտ ե ասել «այո»: Բայց միթե հեշտ բաներն ե միայն հարկավոր բացատրել: Յերբեմն պարտավոր ենք և շատ դժվար բաներն ել բացատրել. ի հարկ է, դա շատ դժվար ե անել, բայց և այնպես պիտի անել: Շահագործման հարցը անմիջապես կապված ե պետական կապիտալիզմի հարցի հետ, վորը ներկայումս չափազանց շատ ե հետաքրքրում բանվորներին: Ամբողջ դժբախտութիւնը նրա մեջ ե, վոր սոցիալիստներն չդաստիարակված բանվորին առաջին իսկ հայացքից թվում ե, թե քանի վոր ինքը վատ ե ապրում, ուրեմն և շահագործվում ե: Բայց չէ վոր դա այդպես չէ. և մեր պարտականութիւնն ե բացատրել նման հետաքրքրանք բանվորին, թե նա շահագործվում ե միայն այն ժամանակ, յերբ հավելյալ արժեքը մտնում ե իրեն թշնամի դասակարգի դրպանը: Իսկ քանի վոր այդ հավելյալ արժեքը մտնում ե պրոլետարական պետութիւն գանձարանը, նշանակում ե, բանվորը մեզ մոտ չի շահագործվում: Ինչի համար ե գործադրվում մեզ մոտ այդ հավելյալ արժեքը: Նրա ոգնութիւնը բաց ենք անում դպրոցներ, հիվանդանոցներ, կերակրում ենք կարմիր Բանակին, չքավոր գյուղացիներին վարկ (կրեդիտ) ենք տալիս, վո-

րոնք իրենց հերթին քիչ չեն նպաստում մեր պետական արդյունաբերութիւնը բարձրացնելու գործին: Այժմ յես հարցնում եմ — ել ո՞ւր ե այստեղ շահագործումը: Ամբողջ ցավը նրանումն ե և այդ բանից ոգտվում են շատ դեմագոգներ, վոր մենք շատ անգամ վախենում ենք ճշմարտութիւնը ասելուց և կարծում ենք, թե բանվորը մեզ կասի. — «Ել ի՞նչ սոցիալիզմ ե սա, յերբ Ամերիկայում բանվորը ստանում ե ավելի շատ, քան մեզ մոտ»: Շատերը վախենում են բանվորներին ուղղակի ասել, վոր մեզ մոտ սոցիալիզմը դեռ շատ աղքատ ե: Իսկ դրանից չպիտի վախենալ և պետք ե պարզ ասել: Ո՞վ չգիտե, վոր մեր պետական ապարատը տասն անգամ ավելի վատ ե աշխատում, քան բուրժուականը: Բայց միթե դա կնշանակի, թե մեր դիրքերը պիտի հանձնենք բուրժուազիային կամ թե չէ նրան անվանենք կապիտալիստական. վոչ յերբեք: Մենք գիտենք, վոր մեր արդյունաբերութիւնը ավելի աղքատ ե, քան կապիտալիստականը: Սակայն և այնպես նա սոցիալիստական ե և առանց կատաղի կռիւ յերբեք մեր արդյունաբերութիւնը չենք հանձնի թշնամուն: Բոլորը գիտեն, վոր մեր բռնած ճանապարհը գնում ե դեպի սոցիալիզմ, ուրեմն և ավելի հարուստ կյանքի: Կապիտալիզմը յուր վերջին որերն ե ապրում և նույնիսկ քավթառել ե, իսկ մեզ մոտ սոցիալիզմը նոր ե ծնվել և կամաց-կամաց աճում ե: Կմեծանա մեր մանուկը և ուժեղ բուռնցքներ ցույց կտա: Ահա թե ինչպես պիտի բացատրենք մեր դրութիւնը հետաքրքրանք բանվորներին: Իսկ յեթե նրան այսպես չբացատրենք, նշանակում ե վոր մենք նրան վոչ միայն չենք դաստիարակում, այլ և կործանում ենք նրա հավատը՝ սոցիալիզմը կառուցելու հնարավորութիւն նկատմամբ: Այն ժամանակ բանվորն այլևս չի հավատում Խորհրդային իշխանութիւնը, նա սկսում ե մտածել, վոր մեր արդյունաբերութիւնը սոցիալիստական չէ, մեր հարաբերութիւնները կապիտալիստական են:

Ել ո՞ւր են մեր հույսերը: Այդպես, ի հարկ է, չի կարելի:
 Ահա թե ինչպես ե դրվում և հասկացվում պետական արդյունաբերութիւն հարցը:

VII ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅԲԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ի հարկէ, այս բոլորից չի հետևում, վոր մեր ամբողջ տնտեսութիւնը սոցիալիստական ե: Յես արդեն ասացի, վոր ոպպոզիցիայի կողմնակիցները հաճախ մեզ մեղադրելուց ասում են, վոր իբր թե մեր կարծիքով ուր նայում ես, ամեն տեղ սոցիալիզմ ե:

Դա, ի հարկե, սխալ եւ Վոչ վոք այդպիսի հիմարութիւնն չի ասի։ Ուրիշ եւ մեր պետական արդյունաբերութիւնը և այլ եւ մեր ամբողջ տնտեսութիւնը։ Յեթե վերցնենք մեր ամբողջ պետական արդյունաբերութիւնը, մասնավոր ձեռնարկները և գյուղացիական տնտեսութիւնը ածենք մի ամանի մեջ, այն ժամանակ ել ինչ կստացվի և ինչպես կարելի կլինի անվանել այդ։ Ընկ. Կրուպսկայայի կարծիքով այդ բոլորը պիտի անվանել կապիտալիզմ, վորի սանձը մեր ձեռքին եւ նա ասում ե—ՆեՊ-ը կապիտալիզմ ե, իսկ քանի վոր Ռուսաստանը ՆեՊ-յան ե, իսկ ՆեՊ-ն ել կապիտալիզմ ե, ուրեմն Ռուսաստանն ել կապիտալիստական ե և մեր կարգերն ել ամբողջապես կապիտալիստական են։ Մենք, ի հարկե, այս բանի հետ ել համաձայն չենք։ Մեր կարծիքով միանգամայն սխալ ե ասել, թե մեր ամբողջ տնտեսութիւնը կապիտալիստական ե, թեկուզ նրա սանձն ել մեր ձեռքում լինի։ Մեր տնտեսութիւնը անցողական շրջանի մի տնտեսութիւնն ե, վոր բաղկացած ե զանազան մասերից։ Լենինը հինգ տեսակի ե բաժանել մեր տնտեսութիւնը.— նախապետական-տոհմային տնտեսութիւն, մանր-բուրժուական, մասնավոր-կապիտալիստական, պետական-կապիտալիստական և սոցիալիստական։ Տնտեսութիւնն այդ տեսակների մեջ յեղած փոխհարաբերութիւնները այլ կերպ են յեղել 1920—21 թվին և ուրիշ այժմ։ Առաջ մեր սոցիալիստական արդյունաբերութիւնը մեր ընդհանուր տնտեսութիւնն մեջ ամենաչնչին տեղն ե զբաղել։ Նա վոչ միայն այն ժամանակ մեր տնտեսութիւնն զուլի չի յեղել կանգնած, այլ ընդհակառակը, քայքայված գյուղը ել ավելի ե քայքայել մեր արդյունաբերութիւնը։ Ո՞վ չի հիշում այն ժամանակվա մեր գրութիւնը։ Արդյունաբերութիւնն հիմնական կապիտալը արդեն կերել եինք, բանվորները Փարբիկաներից տանում եին այն ամենը, ինչ վոր կարելի եր, իսկ հետո նույնիսկ նրանք ստիպված յեղան ծախելու այն, ինչ վոր իրենց տանը կա, վորպեսզի կարողանան միայն մի մեշոկ կարտոֆել կամ մի կտոր հաց գնելու։ Այս բանը շատ լավ հիշում ենք։ Տնտեսութիւնն այդ հինգ տեսակների մեջ յեղած փոխհարաբերութիւնները այնպես եին, վոր մեր արդյունաբերութիւնը որեցոր քայքայվում, կորցնում եր յուր դիրքերը իրար յետևից, զեպի յետ եր դնում և համարյա թե չնչին չափի եր հասել։ Մեր սոցիալիստական տնտեսութիւնն այն ժամանակ իսկապես վոր ընդհանուր տնտեսութիւնն մեջ մի աննշան տեղ եր բռնում և իրենից մի տնտեսական մեծութիւնն չեր ներկայացնում։ Յեղած հին պաշարները ուտում և պաշտպանում եինք մեր

գոյութիւնը։ Իսկ այժմ ինչ փոխհարաբերութիւնն կա մեր արդյունաբերութիւնն այդ հինգ տեսակների մեջ։ Իմ կարծիքով միանգամայն այլ փոխհարաբերութիւններ և յես համոզված եմ, վոր բոլորդ ել համաձայն կլինեք ինձ հետ։ Արդյունաբերութիւնն քայքայման շրջանը միանգամայն անցած պետք ե համարել. այժմ նա կամաց-կամաց, բայց համառ կերպով առաջ ե գնում։ Ամբողջ ժողովրդական տնտեսութիւնն մեջ նա արդեն զեկավարող ուժ ե դառել։ Տնտեսութիւնն այդ հինգ տեսակների փոխհարաբերութիւնները միանգամայն փոխվել են։ Մեր արդյունաբերութիւնն տեսակարար կշիռը բավական աճել ե։ Գոսպլանի թվերը այստեղ յես չեմ ուզում բերել, վորովհետեւ դուք բոլորդ ծանոթ եք նրա հետ։ Յեղ վերջապես ամեն մի բանվոր արդեն զգում ե, թե ինչպես ե աճում մեր արդյունաբերութիւնը։ Այժմ մեր տնտեսութիւնն մեջ յերկու տեսակներ են գլխավոր տեղը բռնում — սոցիալիստական-պետական արդյունաբերութիւնը և մանր-բուրժուական գյուղացիական տնտեսութիւնը։ Այժմ մի քանի խոսք առաջին հերթին ապրանքային տնտեսութիւնն մասին։ Յես ձեր ուշադրութիւնը ուզում եմ գրավել այս խնդրի վրա նրա համար, վորովհետեւ վոմանք շատ անգամ այն, ինչ սոցիալիստական չե, համարում են կապիտալիստական։ Որինակի համար, գյուղացիական տնտեսութիւնը ընդհանուր առմամբ համարում են կապիտալիստական։ Բայց իսկապես դա այդպես չե։ Բոլոր մարքսիստները — Մարքսը, Ենգելսը և Լենինը միշտ սարբերել են իրարից յերկու տեսակի ապրանքային տնտեսութիւնները։ Կա մի տեսակի ապրանքային տնտեսութիւն, վորը միայն առևտուր ե անում, բայց չի շահագործում վարձու աշխատանքը։ Բայց կա նաև կապիտալիստական ապրանքային տնտեսութիւն, վորը վոչ միայն առևտուր ե անում, այլև վարձու աշխատանքն ե շահագործում։ Այժմ յեթե խոսելու լինենք զասակարգերի մասին, կարող ենք ասել, վոր հասարակ ապրանքային տնտեսութիւնը պարապում ե մանր-բուրժուազիան, իսկ կապիտալիստական տնտեսութիւնը զբաղվում ե բուրժուազիան, վորպես կապիտալիզմի հիմնական զասակարգ*։ Մրանք միանգամայն տարբեր բաներ են և հարկավոր ե վերջիվերջո յուրացնել այս տարրական ճշմարտութիւնը։ Ի հարկե, մի բոպե անգամ չպիտի մոռանալ, վոր ազատ առևտրի և ապրանքային տնտեսութիւնն ժամանակ միշտ կա-

*) Այդ բանը չի հասկանում ընկ. Կամենսը, վորովհետեւ համագումարում արտասանած յուր ճառում մեղադրում ե «Պրավդա»-ին, թե իբր նա գյուղացիական տնտեսութիւնը մանր բուրժուական չի համարում։ «Մանր» խոսքը ընկ. Կամենսը ինքն իրենից ե ավելացրել։

պիտալիստական փոխհարաբերութիւններ ծնվելու համար պարարտ հող ե ստեղծվում: Չպետք է նաև մոռանալ, վոր ամեն մի ապրանքային տնտեսութիւն, յերբ սկսում է աճել, նոր գործիքներ ու նյութեր ձեռք բերել և նույնիսկ բանվորներ վարձել՝ արդեն դառնում է կապիտալիստական: Ուրեմն, այստեղից պարզ է, վոր ազատ առևտրի միջոցով գյուղացիական հասարակ ապրանքային տնտեսութիւնն էլ և առաջին հերթին միջակ գյուղացու տնտեսութիւնը ձգտումներ են ցույց տալիս կապիտալիստական տնտեսութիւն, կամ ուրիշ խոսքով՝ մանր-կապիտալիստական կուլակներ գառնալու: Սակայն այստեղ մի հարց պետք է պարզել, վորը կանգնած է մեր առաջ և վորը լուծելուց միայն կարող ենք վորոշել մեր քաղաքականութիւնը գյուղացիութեան նկատմամբ: Ի՞նչ էք կարծում, պրոլետարական զիկտատուրայի պայմաններում հասարակ ապրանքային տնտեսութիւնը զարգանալուց անպայման կապիտալիստական կգառնա, թե չէ: Իմ կարծիքով ահա այսպես պիտի դնել հարցը: Անպայման բոլոր հասարակ ապրանքային տնտեսութեամբ զբաղվողները և առաջին հերթին միջակ գյուղացիութեան մասսաները, վորոնք առևտուր են անում՝ բայց չեն շահագործում—մեր պայմաններում կամ բանվորներ են դառնալու կամ կուլակներ: Միթե՞ մեր պայմաններում—պրոլետարիատի զիկտատուրայի ժամանակ այլ կերպ լինել չի կարող: Ահա իմ կարծիքով ներկայումս հարցը այսպես պիտի դնել, վորպես զի հնարավոր լինի ուղիղ պատասխան տալ: Այն ընկերները, վորոնք ծուլանում են մի քիչ հետ նայել ու տեսնել թե մեզ մոտ վերջին տարիներում ինչ փոփոխութիւններ են կատարվել՝ չեն հավատում, վոր կարող է զարգացման մի այլ ուղի ել լինել, դա կապիտալիստական է: Նրանք ուղղակի ասում են.—«քանի վոր ազատ առևտուր կա, ուրեմն կապիտալիզմ է, ուրիշ վոչինչ»: Քանիցս ընկ. Ջինովյեվը և ուրիշները ասել են, թե ազատ առևտուրը կապիտալիզմ է: Մինչդեռ դա այնքան էլ ճիշտ չէ: Միանգամայն ճիշտ է, վոր ազատ առևտրի ժամանակ կապիտալիզմը շարունակ աճում է: Բայց սխալ է ասել, թե ազատ առևտուրը հենց ինքը կապիտալիզմ է: Համագումարում յես մի քանի օրինակներ եմ բերել, այժմ ել կցանկանայի կրկնել: Յերբ վոր մեր «հետևողական-սոցիալիստական» հիմնարկութիւններից մեկը մյուսից մեքենաներ է գնում, ուրիշ խոսքով առևտուր է անում, միթե դա կապիտալիզմ է: Իմ կարծիքով դա կապիտալիզմ չէ: Դա ապրանքային հարաբերութիւնները մի յուրահատուկ, առանձին ձև է, վոր կա մեր սոցիալիստական հիմնարկութիւնները մեջ: Ճիշտ է, այդ մասին վոչ մի գրքում գրված չէ, բայց և

այնպես դա այդպես է: Յեթե ուրիշի աշխատանքը չշահագործող գյուղացին մեր պետական արդյունաբերութիւնից—ազատ առևտրի հիման վրա—վորեք բան է գնում՝ միթե դա կապիտալիզմ է: Միթե դա կապիտալիզմ է հենց նրա համար, վոր ապրանքային հարաբերութիւնները ազատ առևտրի միջոցով են կատարվում: Ի հարկե, դա դեռ ևս կապիտալիզմ չէ: Իսկ յեթե շնորհիվ այդ իսկ ազատ առևտրի մեկը սկսում է հարստանալ, իսկ մյուսը քայքայվել և յեթե այդ հարստացողը արդեն սկսում է ոգտվել վարձու աշխատանքից՝ ուրեմն և շահագործել—դա արդեն կապիտալիզմ է: Ուրեմն, ինչպես տեսնում եք, հարցը ավելի բարդ ու դժվարին է, քան շատերին թվում է:

Ինձ թվում է, թե մեր տնտեսական քաղաքականութեան հիմնական խնդիրը այժմ այսպես է դրված մեր առաջ. մենք ասում ենք, վոր պայքարում ենք գյուղացիութիւնը մեր կողմը դրավելու համար: Իսկ ի՞նչ է նշանակում դա մեր տնտեսական քաղաքականութեան տեսակետից: Դա նշանակում է, վոր պետական արդյունաբերութեան միջոցով ամեն կերպ պիտի աշխատենք հասարակ ապրանք արտադրողների հիմնական մասսաները վոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական ուղիով տանել: Դա նշանակում է, վոր պետական արդյունաբերութեան ոգնութեամբ պիտի աշխատենք այնպես անել, վոր դրանց զարգացումը կապիտալիստական ուղիով չգնա: Կուլակը ամեն կերպ աշխատում է միջակ գյուղացուն յուր ազդեցութեան տակ գցել, վորպես զի նրա տնտեսութեան զարգացումը մտնի կապիտալիստական հունի մեջ: Մենք ել աշխատում ենք այժպես անել, վոր նույն այդ միջակ գյուղացուն իլենք կուլակի ձեռքից և հնարավորութիւն ասանք նրան խուսափելու զարգացման կապիտալիստական ճանապարհից: Ահա թե ինչպես է դրված հարցը ներկայումս: Ի հարկե, կապիտալիզմի, բուրժուազիայի զիկտատուրայի ժամանակ դա միանգամայն անհնար կլիներ անել, վորովհետև բուրժուական հարաբերութիւնները ամբողջ սիստեման միանգամայն այլ է: Որենքները, գլխավոր տնտեսական հրամանատարական զիրքերը բոլորը գտնվել են բուրժուազիայի ձեռքում, վորն ինքնըստինքյան շահագրգռված է յեղել, վորպես զի կապիտալիստական փոխհարաբերութիւնները զարգանան: Իսկ այժմ: Այժմ մեր արդյունաբերութիւնը, տնտեսական պետական օրգանները, որենքները և այլն աշխատում են այնպես անել, վոր միջակ գյուղացուն իլեն կուլակի ձեռքից և տանեն նրան զարգացման սոցիալիստական ուղիով:

Ավելորդ չէր լինի հիշել այն մասին, թե ինչ է ասել Լենինը այս հարցի առթիվ: Նա գաղութային յերկրների մասին ասել է, թե բանվոր դասակարգի հաղթանակից հետո դրանք ոգնութուն ստանալով հենց բանվոր դասակարգից կարող են խուսափել զարգացման կապիտալիստական ուղուց և մտնել սոցիալիստական զարգացման հունը: Լենինը այս ասել է, թե չէ: Ասել է: Նույն իսկ թեզիսների մեջ ել է գրել ու ձեվակերպել: Այժմ յեթե վերցնելու լինենք մեր գյուղացիութունը, կտեսնենք, վոր նա ել մեր պետական արդյունաբերության նկատմամբ հանդիսանում է վորպես մի այդպիսի «յերկիր»: Մեր ամբողջ ջանքը, միջոցները, մեր կամքըն ու յեռանդը պետք է տանենք այն ուղղությամբ, քաղաքականութունը այնպես պիտի վարենք, վոր պետական արդյունաբերության միջոցով ու կոոպերացիայի ոգնությամբ միջակ գյուղացուն խլենք կուլակի ձեռքից ու տանենք նրան սոցիալիստական ուղիով: Դրա համար մի շարք միջոցներ կան—կոոպերացիան, մեքենաների ընկերութուն կազմակերպելը, ելեքտրոֆիկացիան և այլն: Ահա վորոնք են մեր անելիքները: Ահա թե ինչ է նշանակում պայքար մղել միջակ գյուղացուն մեր կողմը գրավելու համար: Այս ուղղությամբ ամենախիստ դասակարգային կռիվ պիտի մղենք կուլակի դեմ, վորպես զի կարողանանք մանր, հասարակ ապրանք արդյունաբերողներին զարգացման սոցիալիստական ուղիով տանելու: Ահա թե ինչպիսի փոխհարաբերություններ կան մեզ մոտ դասակարգերի մեջ: Մեզ մոտ պրոլետարիատը մի այնպիսի դասակարգ է, վորը տնտեսության հատուկ ձև է ստեղծում, ձեռնարկությունների սոցիալիստական տեսակին է վարում. այստեղ խոսքը վերաբերում է մեր պետական արդյունաբերությանը և բոլոր հրամանատարական գիրքերին: Մեր ամենագլխավոր աշխատակիցը գյուղացիութունն է—միջակ գյուղացիութունը վորպես դաշնակից, իսկ չքավոր գյուղացիութունը վորպես մեր հենարանը: Մեր ամենագլխավոր թշնամին քաղաքում մասնավոր կապիտալիստըն է, վորը կապ ունի գյուղի կուլակի հետ: Մենք հիմնվելով չքավոր գյուղացիության վրա կռվում ենք կուլակի և բուրժուայի դեմ՝ գյուղացիության հիմնական մասսաները—միջակ գյուղացիութունը մեր կողմը գրավելու համար: Այդ կռիվը մղում ենք մեր պետական արդյունաբերության միջոցով և կոոպերացիայի ոգնությամբ: Բուրժուան ել պայքարում է մեր դեմ յուր մասնավոր հիմնարկությունների միջոցով և աշխատում է հաղթել յուր եժան ապրանքներով, ավելի եժան վարձով և այլն: Մենք ել ի հարկե ունենալով մեր ձեռքում հիշած բոլոր տնտեսական գլխավոր գիր-

քերը՝ արշավում ենք նրա դեմ: Ահա դասակարգերի այն փոխհարաբերությունները և դասակարգային կռիվի այն հիմնական ձևերը, վոր գոյութուն ունեն ներկայումս մեզ մոտ:

Մի բոլոր անգամ չպիտի մոռանալ, վոր միջակ գյուղացուն մեր կողմը գրավելու համար տարվող պայքարի իմաստը կայանում է հետեվյալում. այնպես պիտի անել, վոր հենց ազատ առևտրի միջոցով ու նրա ոգնությամբ միջակ գյուղացու տնտեսությունը զարգանա վոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական ուղիով: Ահա այդ բարդ ու գժվարին խնդիրը լավ պիտի պարզենք մեզ համար: Սա մեր քաղաքականության ամբողջ հիմքն է կազմում:

VIII ՄԵՐ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ յես գյուղացիական հարցի մասին կխոսեմ ավելի մանրամասն, դրա համար ել թերևս ստիպված լինեմ կրկնելու այն, ինչ վոր ասել են ուրիշները իրենց ճառերում:

Մենք միշտ կարող ենք յերկու տեսակի սխալ անել, կամ կարող ենք չտեսնել, թե ինչպես կուլակը ուժեղանում է, կամ թե կարող ենք մոռանալ միջակ գյուղացուն ու չգնահատել նրա դերը: Այս յերկուսն ել սխալ կլինի և դրանցից պիտի հեռու մնալ:

Ոպպոզիցիան մեզ մեղադրում է նրանում, վոր մենք իբր թե կուլակային վտանգը չենք տեսնում. իսկ մենք, ընդհակառակը, մեղադրում ենք ոպպոզիցիային նրանում, վոր նա միջակ գյուղացուն մոռանում է: Միաժամանակ մենք բոլորս խոստովանում ենք, վոր դեպքեր են յեղել, յերբ իսկապես կուլակային վտանգին քիչ ենք ուշադրութուն դարձրել: Սակայն յերբ քննության ենք առնում մեր քաղաքականության գլխավոր հարցերը, ամենից առաջ մեր ուշադրութունը պիտի դարձնենք ամենագլխավոր, հիմնական կամ վճռական նշանակութուն ունեցող կողմերի վրա: Յեթե սխալվելու լինենք յերկրորդական հարցում, դա այնքան ել վտանգավոր չէ: Իսկ յեթե սխալվում ենք գլխավորի մեջ, այն ժամանակ, իսկապես, վտանգավոր կլինի, վորովհետև այդ դեպքում այնպիսի մի սխալ գործած կլինենք, վորի ուղղելը անկարելի կլինի: Դրա համար ել գյուղացիական քաղաքականության հարցում յեթե աշխատելու լինենք վորոշելու, թե վորն է այդ ամենագլխավոր կողմը, պարզ է, վոր պիտի ասենք—միջակ գյուղացին է: Չէ վոր Լենինը քանիցս ասել է, վոր մեր ամբողջ

եկոնոմիկան պիտի հարմարեցնել միջակ գյուղացու տնտեսութեանը: Ինչո՞ւ անպայման միջակ գյուղացին ե կանգնում մեր առաջ և ինչո՞ւ հենց միայն նա: Վորովհետև գյուղացիական քաղաքականութեան հարցում գլխավոր տեղը նա ե բռնում: Մի քանի ընկերներ հին գրքերի մեջ ինչ վոր վորոնումներ են կատարում, ինչ վոր թվեր են գտնում և դուրս գալիս ասում, վոր մեր գյուղում այսքան բատրակ կա, այսքան չքավոր գյուղացի, այսքան կուլակ, և այլն և այլն: Սակայն նրանք մոռանում են ամենագլխավոր հանգամանքը—այն, վոր այդ հին թվերը ներկայումս մեզ համար անպետք ու անարժեք են:

Յեթե ասում ենք, վոր ներկայումս գյուղում միջակ գյուղացին ե ամենամեծ դեր կատարողը, այդ նրա համար ե, վոր մեզ մոտ հողային (ագրարային) մեծ հեղափոխություն ե յեղել: Միջակ գյուղացին յերկնքից չի իջել, այլ հետևանքն ե այն մեծ հեղափոխության, վոր կատարվել ե սրանից ութ տարի առաջ: Միթե կարելի ե մոռանալ, վոր կալվածատերերի ամբողջ հողը (բոլոր հողերի 82 տոկոսը) փաստորեն բաժանվել ե բոլոր գյուղացիների մեջ: Ճիշտ ե այդ, թե չե: Ի հարկե, ճիշտ ե: Բացի դրանից, մենք քիչ չենք հույս տվել նաև կուլակներին—խել ենք նրա ինվենտարը, անասունները, հողը: Էն վոր այդ բանը յեղել ե. բոլորն այդ գիտեն: Կալվածատերերի և կուլակների հետ այսպես վարվելը, անշուշտ, փոխել ե մեր գյուղի պատկերը և ավելացրել միջակ գյուղացիների թիվը: Ահա թե ինչու ենք ասում, թե միջակ գյուղացին մեր գյուղի հիմնական մասսան ե կազմում: Իսկ այժմ. վրանք կարող են ասել, թե այդ միջակ գյուղացիներից շատերը դառնում են կուլակներ, իսկ շատերն ել չքավորներ, կամ ուրիշ խոսքով՝ գյուղում նորից շերտավորում ե կատարվում: Այդ շերտավորումը այժմ կարող ե արագ կերպով կատարվել և արդյոք մենք արգելքներ չենք ստեղծում դրա համար: Այս հարցին պետք ե պատասխանել—այո: Ինչո՞վ ենք մենք խանգարում այդ բանին: Այստեղ յերկու գլխավոր հանգամանք կա: Առաջինը—այդ շերտավորմանը խանգարում ենք նրանով, վոր հող անեն ու ծախելը արգելել ենք: Յեթե այդպես չլիներ, այն դեպքում անելու և ծախելու շնորհիվ հողն իսկույն կընկներ հարուստ գյուղացիների ձեռքը: Բայց հենց հարցն ել նրանումն ե, վոր թույլ չենք տալիս հողը վոչ ծախել և վոչ ել առնել: Ահա այն գլխավոր հանգամանքներից առաջինը, վոր խանգարում ե կուլակի ուժեղանալուն, միջակ գյուղացու կուլակ կամ չքավոր դառնալուն, կամ ուրիշ խոսքով՝ գյուղում շերտավորում առ շանալուն:

Մեր սրենքները պաշտպանում են հենց չքավոր ու միջակ գյուղացիներին և դեմ են գյուղի ունեւորներին: Այս հանգամանքը պակաս կարևոր դեր չի խաղում: Հենց մեր այս քաղաքականութեան շնորհիվ ե, վոր գյուղի հիմնական մասսաները կազմում են միջակ գյուղացիները: Գյուղի ազգաբնակչության ամենամեծ մասը միջակ գյուղացիներն են. մեր գյուղատնտեսութեան մեջ միջակ գյուղացու տնտեսությունը ամենագլխավոր մասն ե կազմում: Ահա թե ինչու յերբ գյուղի հարցը դնում ենք մեր առաջ և ցանկանում գտնել, թե վորն ե ամենագլխավորը, այդ դեպքում, պարզ ե, վոր միջակ գյուղացու հետ կապը ամրացնելը ամենահիմնականն ե դառնում: Այս բոլորից հետո, յերբ ոպպոզիցիայի շարքերում գտնվում են Վարդինի նման ճղրտացող ընկերներ, վորոնք խոսում են «սերեզնյացկի բոլշևիզմի» մասին, և հիշում Մարիա Սպիրիդոնովան, և այլն և այլն, դա արդեն նշանակում ե, վոր մարդիկ վոչինչ չեն հասկանում մեր քաղաքականությունից:

Շատ անգամ հիշեցնում են, թե մեզ մոտ ինչ ե յեղել առաջ —մարտական կոմունիզմի ժամանակ: Ով չգիտե, վոր այն ժամանակ մենք միանգամայն արգելել էինք ազատ առևտուրը և ուժեղ կռիվ էինք մղում այն բոլորի դեմ, ովքեր խանգարում էին: Կովում էինք թե սպեկուլյանտի և թե առհասարակ ամեն մեկի դեմ, վորք առևտրով եր զբաղվում: Այսպես էինք անում, վորովհետև դա այն ժամանակ անհրաժեշտ եր: Քաղաքացիական կռվի շահերը այդ էին պահանջում: Բայց դուք հիշո՞ւմ եք, թե ինչ ե ասել Լենինը, յերբ մենք անցանք նոր տնտեսական քաղաքականությունը: Ահա թե ինչ ե ասել նա. «Այժմ արդեն ամեն տեսակի առևտուր սպեկուլյացիա չի կարելի համարել, վորովհետև մենք ենք թույլ տվել այդ առևտուրը և հենց ինքներս ել առևտուր ենք անում»: Իրա համար ել այն ընկերները, վորոնք ասում են, թե միջակ գյուղացին սպեկուլյանտ ե, վորովհետև հաց ե ծախում, նշանակում ե մեք քաղաքականությունից վոչինչ չեն հասկանում: Չե վոր ինքներս ենք խրախուսում այդ առևտուրը: Մենք չպետք ե հայհոյենք միջակ գյուղացուն, վոր նա հացը ծախում ե, այլ ի նկատի ունենալով նրա առևտրական գործողություններն ու շահերը, զրավենք նրան կոոպերացիայի մեջ: Կոոպերացիայի միջոցով նրան ավելի լավ կարող ենք կապել մեր պետական արդյունաբերությունից հետ և այսպիսով կամաց-կամաց զրավել նրան մեր սոցիալիստական շինարարությունից: Այդ բոլորն այնպես ե կատարվելու, վոր միջակ գյուղացին ինքն ել չի նկատելու: Ի հարկ ե, դա ավելի դժվար ե անել, քան սպեկուլյացիայի մասին հարայ-հրոց բարձրացնել: Բայց և

այնպես դա պիտի անենք, վորովհետև առանց դրան վոչինչ չի լինի: Կապիտալիզմի ժամանակ միջակ գյուղացիները շարունակ կամ հարստանալով կուլակներ են դառել և կամ ել քայքայվելով բաւրակներ դառել: Մեզ մոտ այժմ այդ բանը կատարվում է, թե չե. այն, կատարվում է: Բայց արդոք, այնպես ուժեղ, ինչպես կապիտալիզմի ժամանակ: Վոչ: Կապիտալիզմի ժամանակ ել հենց միջակ գյուղացին վորոշ կայունութուն է ունեցել, իսկ այժմ, Սորհրդային իշխանության ժամանակ նա ավելի քան ամրապնդվել է: Ի՞նչն է դրա պատճառը: Այն, վոր մենք պայքարում ենք կուլակի դեմ, պաշտպանում չքավոր գյուղացուն և ամրապնդում մեր կապը միջակ գյուղացու հետ: Յե՛վ մանավանդ թույլ չենք տալիս, վոր հողի առևտուր լինի: Այդ բոլորը նպաստում են միջակ գյուղացու ամրապնդելուն: Ահա թե ինչու ենք ասում, թե միջակ գյուղացու հարցը դեռ յերկար ժամանակ մեր առաջ կանգնելու է, վորպես հիմնական խնդիր:

Այստեղ յես հետևյալը կասի: Շատ ընկերների կարծիքով յերբ ավելի շատ ենք խոսում միջակ գյուղացու մասին և իբր թե ավելի քիչ՝ կուլակային վտանգի մասին, դա նշանակում է, վոր մեր ուշադրութունը չենք դարձնում այն կողմը, ուր հարկավոր է: Ուրիշ խոսքով ամբողջ քաղաքականութունը սխալ ենք տանում: Իսկ դրան պատասխանում ենք.—մենք չենք ասում թե կուլակային վտանգ չկա: Բայց յերբ դուք հարկավոր ուշադրութուն չեք դարձնում միջակ գյուղացուն, հենց դրանով ել ավելի եք ոգնում կուլակի ուժեղանալուն: Կուլակի ուժեղանալուն ամենաշատը նպաստում է այն, վոր միջակ գյուղացուն մեր ազդեցության տակ չենք գցում: Յես այս բանը չափազանց կարևոր եմ համարում և իմ կարծիքով կուլակի, միջակ և չքավոր գյուղացու մասին յեղած այս դիսկուսիայում ամենագլխավոր հարցը հենց սա է: Չպետք է մոռանալ, վոր ամեն «աստված-աստված» կանչող չի մտնում արքայութուն: Բավական չե միայն բղավել կուլակային վտանգի մասին, այլ և պետք է չմոռանալ միջակ գյուղացուն: Դու կարող ես կուլակի դեմ կռվել միայն այն ժամանակ, յերբ չես մոռանում միջակ գյուղացուն: Ահա թե ինչպես պետք է հարցին մոտենալ:

Ինչո՞վ է ուժեղ կուլակը: Կուլակը ուժեղ է վոչ միայն նրանով, վոր շահագործում է չքավոր գյուղացուն, այլ և նրանով, վոր միջակին իրենից կախման մեջ է պահում թե տնտեսապես և թե քաղաքականապես: Յեթե մեզ հաջողվի կուլակին չեզոքացնել, միթե այն ժամանակ նա մեզ համար վտանգավոր կլինի: Ի հարկ է,

չե: Այն ժամանակ նա վոչ մի մեծ վտանգ չի ներկայացնի մեզ համար: Վտանգ կլինի այն ժամանակ, յերբ կուլակը կարողանա հաղար ու մի միջոցներով միջակ գյուղացուն գցել յուր ցանցը, տնտեսապես յենթարկել իրեն և դրա հետ միասին յուր քաղաքական ազդեցությանը յենթարկել:

Մենք գիտենք, վոր կուլակների թիվը քիչ է. բայց չնայած դրան, նրանք վորոշ տեղերում ընտրվել են խորհուրդների մեջ: Ի՞նչն է դրա պատճառը: Ո՞վ է նրանց ընտրում խորհրդի մեջ: Ի հարկե, միջակ գյուղացիները: Իսկ ինչո՞ւ են միջակ գյուղացիները նրանց ընտրում: Վորովհետև շատ անգամ կուլակի և միջակի մեջ տնտեսական կապը ավելի լավ է լինում. կուլակը ավելի լավ է առևտուր անում, քան մեր կոոպերացիան: Այն ընկերները, վորոնք ասում են, թե շատ ենք խոսում կուլակային վտանգի մասին, նշանակում է այդ հարցում վոչինչ չեն հասկանում: Յե՛վ իսկապես, չե՞ վոր կուլակի դեմ պիտի կռվենք միջակ գյուղացուն մեր կողմը քաշելով: Ել ինչպես կարող ես կռվել կուլակի դեմ, յեթե միջակ գյուղացուն քո կողմը չես քաշել. ահա սա է ամենագլխավորը:

Իսկ յեթե այժմ սկսենք խոսել այն մասին, վոր միջակ գյուղացին սպեկուլյանտ է, այն գեպքում, պարզ է, վոր հենց դրանով ել մեծ ոգնութուն ցույց տված կլինենք կուլակին: Յեթե հաճախ չհիշենք ու չխոսենք միջակ գյուղացու մասին, նշանակում է, հենց դրանով ել պատճառ կդառնանք, վոր նա անցնի կուլակի կողմը: Յեթե մեր տնտեսական քաղաքականությամբ ել ընդառաջ չգնանք միջակ գյուղացուն, նշանակում է, դարձյալ նրան դեպի կուլակն ենք քշում: Յեթե կոոպերացիան չուժեղացնենք, և միջակ գյուղացին տեսնի, թե վորքան վատ է առևտուր անում այդ կոոպերացիան—պարզ է, վոր նա նորից գնալու է կուլակի մոտ ու նրա հետ է առևտուր անելու: Յեթե մեր գյուղական խորհուրդները վատ աշխատեն, պարզ է, վոր դրանով ևս նրան կուլակի կողմն ենք քշում, և այլն, և այլն: Այդ ժամանակ կուլակը միջակ գյուղացիների ձայների շնորհիվ ընտրվելու է թե խորհրդի և թե կոոպերացիայի մեջ. այդ ժամանակ իսկապես վոր կուլակային վտանգ կարող է լինել:

Այդ բոլորից ինչ է դուրս գալիս: Կարելի է կուլակի հարցը դնել և չխոսել միջակի մասին: Հարցը այդպես դնելը միանգամայն սխալ և մեծ հիմարութուն է: Կուլակի դեմ կռվելու ամենաուժեղ միջոցը նա է, վոր կարողանանք միջակ գյուղացուն մեր կողմը գրավել ու թույլ չտալ, վոր նա դեպի կուլակը գնա:

Պրոլետարիատը միջակ գյուղացուն իր կողմը քաշելու կոպում հաջողութիւն կունենա միայն այն դեպքում, յետեւ բաւարակները և գյուղական չքավորները կպաշտպանեն բանվոր դասակարգին: Մեր կուսակցութիւնը պարտավոր է գյուղական չքավորութիւնը տնտեսական և քաղաքական ոգնութիւն ցույց տալ և պաշտպանել բաւարակների շահերը, դա կուսակցութեան ամենագլխավոր պարտականութիւնն է:

Այժմ անցնենք XIV կուսկոնֆերանսի վորոշումներին: Դուք գիտեք, թե կուսակցութեան համագումարում տարածայնութիւնները վորտեղից են առաջացել: Ընկ. Կամենսկը, իսկ նրանից առաջ ընկ. Զինովկը իր «Լենինիզմ» գրքում այսպես է արտահայտվել. — XIV կուսկոնֆերանսը յուր վորոշումներով գիշումներ է արել հատկապես գյուղի ունևոր խավերին: Կնշանակի, մեր կուսակցութիւնը դեռ XIV կոնֆերանսում, ոպպողիցիայի կարծիքով, գիշումներ է արել կուլակին: Մարդիկ կուլակից այնքան են վախեցել, վոր ուր նայում են, կուլակ են տեսնում: Սակայն մենք այդպես չենք նայում խնդրին և գանում ենք, վոր կուսակցութեան վորոշումները այդպես չպետք է հասկանալ: Միթե կարելի է ասել, թե այդ վորոշումները գիշում են միայն գյուղի կուլակային ելեմենտներին: Ի հարկե, չե: Ապա տեսնենք, թե ինչպես եր գրութիւնը XIV կոնֆերանսից առաջ: XIV կոնֆերանսից առաջ գյուղում մի քանի տեղ վորոշ գոգոնութիւն եր նկատվում մեր քաղաքականութեան նկատմամբ և այն ել բոլոր խավերի կողմից: Թույլ տվեք մի որինակ բերել հողը կապալով (արենդա) տալու և վարձու աշխատանքի մասին: Մենք գիտենք, վոր մեր որենքները այդ հարցերի նկատմամբ շատ խիստ են յեղել: Չեզնից շատերը գուցե գյուղում չեն յեղել, բայց և լսած կլինեն կապալի մասին: Առաջ հողը այսպես եր կապալով արվում: Գյուղացին կալվածատիրոջից հողը վերցնում եր և դրա համար մեծ վճար եր տալիս, վոր, այսպես ասած «սոված արենդա» եր կոչվում: Շատերին թվում է, թե այժմ ել գյուղում նույնն է կատարվում: Մինչդեռ դա այդպես չե: Այժմ հողը միանգամայն այլ ձևով է կապալով արվում: Այժմ հողը կապալով վերցնում է ավելի ունևոր գյուղացին իրենից ավելի չքավոր գյուղացուց: Մեկը ունի վորոշ չափ հող, բայց ինվենտար չունի, ձի չունի, մի խոտքով հնարավորութիւն չունի հողը մշակելու: Կուլակները ցանկանում են հողը չքավոր գյուղացուց կապալով վերցնել, բայց որենքը արգելում է: Յեվ ինչ է ստացվում այս բոլորից: Չքավոր գյուղացին տեսնելով, վոր որենքը արգելում է այդ բանը, իսկ ինքն ել սեփական ուժերով չի կարողա-

նում հողը մշակել, գնում է կուլակի մոտ և թագուն ձանապարհով հողը կապալով տալիս. իսկ կուլակն ել ոգավելով այդ դրութիւնից, հողը ավելի եթան վճարով է վերցնում: Մինչդեռ յետեւ այդ բանը որենքով թոյլատրված լինի, չքավոր գյուղացին ավելի շատ հնարավորութիւն կունենա դիմադրելու կուլակին, իսկ կուլակն ել չի համարձակվի իր ցանկացածն անել: Յես հարցնում եմ — վորն է լավ. միթե հողը մենք պետութեան սեփականութիւն ենք դարձրել նրա համար, վորպեսզի հետո չքավոր գյուղացին համարյա թե ձրի տա կուլակին ոգտագործելու: Միթե ավելի լավ չեր լինի բացարձակ թույլատրել այդ արենդան, բայց և միևնույն ժամանակ խստիվ հետևել, վոր կուլակները իրենց ուզածը չանեն: Ահա թե ինչպես է դրված յեղել հարցը XIV կոնֆերանսի առաջ: Գյուղում բանվորներ վարձելու հարցը ավելի խիստ է արգելված յեղել: Այդ հարցն ել դարձյալ — ուրիշ կերպ է դրված յեղել XIV կոնֆերանսում: Մինչև կոնֆերանսը գյուղում վարձու աշխատանքը խիստ արգելված է յեղել: Յեվ բոլորովին մոռացել ենք, վոր գյուղում շատ-շատերը չեն կարողացել բանվորական ուժից ոգտվել հողագործութեան մեջ: Մենք վոչ միայն խոսել, այլ և գեղեցիկ դեկրետներ ել ենք գրել այդ մասին — վարձու աշխատանքը արգելվում է, մենք քեզ շահագործումից պաշտպանում ենք: Իսկ ինչ է մտածում չքավոր գյուղացին, նա ասում է. — Դուք արգելում եք, վոր յես հողը արենդայով տամ կուլակին և միևնույն ժամանակ չեք ել կարողանում մի կտոր հաց տալ ինձ, այն ժամանակ գոնե ինձ թույլ տվեք աշխատել կուլակի մոտ գոյութիւնս պաշտպանելու համար: Բայց վորովհետև կուլակը գիտե, վոր դա որոնքով չի թույլատրվում և միևնույն ժամանակ տեսնում է, վոր չքավոր գյուղացին այնուամենայնիվ ստիպված է գնալ նրա մոտ, վարձում է նրան ու ավելի քիչ վճար տալիս: Յեվ վորովհետև կուլակը չքավոր գյուղացուն վարձում եր ծածուկ կերպով, վոչ մի կազմակերպութիւն վարձվողին չեր կարողանում պաշտպանել: Ահա թե այն ժամանակ ինչպիսի դրութիւն եր: Այդ ժամանակ մեզնից դժգոհ եր վոչ միայն կուլակը, այլև չքավոր գյուղացին, վորին մենք թույլ չեինք տալիս վոչ հողը արենդայով տալ և վոչ ել վարձով աշխատել կուլակի մոտ: Բացի դրանից դժգոհ է յեղել նաև միջակ գյուղացին: Ինչո՞ւ է նա դժգոհ յեղել: Մենք գիտենք, վոր միջակ գյուղացին մի կողմից ձգտում ունի կուլակ դառնալու, մյուս կողմից ել բաւարակ դառնալու վտանգի առաջ է կանգնած: Բայց հարմիր մեծակ դրա մեջ չե: Ընդհանրապես գյուղական և մասնավորապես միջակ գյուղացու տնտեսութեան զարգանալու հետ միասին աճում է նաև միջակի տնտեսութեան ասլրանք արտադրելու ըն-

դունակութիւնը: Միջակ գյուղացին ավելի է ուզում, վոր ապրանքային առևտուրը լայնանաւ նա ինքը սկսում է ավելի առևտուր անել—ավելի շատ է ծախում և ցանկանում ավելի շատ առնել: Մարտական կոմունիզմի մնացորդները միանգամայն անտանելի են միջակ գյուղացու համար. նա չի սիրում, յերբ մանավանդ, առևտրի նկատմամբ արգելքներ են լինում. ապրանքային շրջանառութիւնը մեծանալուն (товарооборот) խանգարող ամեն մի հանգամանք վնասում է միջակ գյուղացու անտեսութեանը: Ահա թե ինչու նա վճռականապէս դեմ է մարտական կոմունիզմի մնացորդներին: Այս բոլորից դուրս է գալիս, վոր ամեն միջոց պետք է ձեռք առնել գյուղական և առաջին հերթին միջակ գյուղացու անտեսութիւնը զարգացնելու համար: Իսկ դրա համար ել հարկավոր է, վորպեսզի իշխանութիւնը համապատասխան միջոցներ ձեռք առնի—ամրապնդի հեղափոխական որինականութիւնը (революционная законность): Մի ուրիշ խնդիր ևս. միջակ գյուղացու անտեսութեան աճումը նրա մեջ ձգտում է առաջացնում դեպի կոոպերացիան: Պետք է ասել, վոր կոոպերացիան չի կարող լավ զարգանալ, յեթե նախկին կարգերը միանգամայն չվերանան: Կոոպերացիան չի կարող զարգանալ, յեթե ընտրութիւնների, հաշվետվութիւնների, կամավոր կերպով անդամագրվելու հարցերը չկանոնավորվեն: Ուրեմն հարկավոր է մի շարք միջոցներ ձեռք առնել, վորպեսզի խորհուրդների, կոոպերացիայի աշխատանքները աշխուժանան, հեղափոխական որինականութիւնը ամրապնդվի և այլն: XIV կուսկոնֆերանսի այս բոլոր վորոշումները ամենից առաջ համապատասխան են յեղել միջակ գյուղացու շահերին:

Այգպիսով XIV կոնֆերանսում մենք ասացինք,—այժմ վոչ թե թղթի դեկրետներ, այլ գործ է հարկավոր: Մենք տեսնում ենք, վոր արգելող միջոցները արդեն ցույց են տալիս իրենց վատ կողմերը և, վոր զլխավորն է, այդ վատ կողմերը ուղղված են վոչ թե կուլակի դեմ, վորի մասին մենք ամենևին չենք մտածում, այլ չքավորութեան և սակավաուժ միջակ գյուղացիների դեմ: Մենք ցանկանում ենք բատրակին պաշտպանել և չքավոր գյուղացուն օգնել, բայց իսկապէս դուրս է գալիս, վոր նրանց խանգարում ենք: Դրա համար ել ասում ենք—յեկեք ավելի լավ է, ուրիշ կերպ անենք—յեկեք թույլ տանք հողի արենդան, բայց այնպէս անենք, վոր կուլակը չհամարձակվի չքավոր գյուղացուն չափից դուրս շահագործել: Յեկեք ավելի լայն կերպով թույլ տանք վարձու աշխատանքը, բայց դրա հետ միաժամանակ բոլոր միջոցները ձեռք առնենք պրոֆմիութիւնների, խորհրդային ուրիշ կազմակերպութիւն-

ների միջոցով պաշտպանելու այդ բանվորին (բատրակին) շահագործողի դեմ: Դրա համար ել հարկավոր է բատրակներին ու չքավոր գյուղացիներին կազմակերպել վորպէս դասակարգային ուժ:

Ի հարկէ, այս բոլորից շահվել է նաև կուլակը: Դա ճիշտ է: Բայց դա վոչինչ չի նշանակում: Իսկ յերբ սկսեցինք մերնոր տնտեսական քաղաքականութիւնը, միթե բուրժուական ելեմենտները չոգավեցին դրանից: Իհարկէ ոգտվեցին և շահվեցին: Յեվ ինչ եք կարծում, միթե մենք չգիտեինք, վոր այդպէս ել լինելու է: Ի հարկէ գիտեինք: Յեվ միթե նոր անտեսական քաղաքականութիւնը մտքել ենք, վոր բուրժուական ելեմենտներն ոգտվեն դրանից: Յեվ ինչ եք կարծում, միթե նոր անտեսական քաղաքականութիւնը ամբողջապէս զիջում է յեղել հենց կապիտալիստներին համար: Դա միանգամայն հիմարութիւն է: Նոր անտեսական քաղաքականութիւնը առաջին հերթին զիջում է յեղել գյուղի մանր ապրանք արտադրողներին, այսինքն՝ գյուղացիներին: Դրա հետ միաժամանակ դա մի ստրատեգիքական մանյովը է յեղել, վորի մասին յես արդեն խոսել եմ, այն է՝ առաջ նահանջ, ապա շարքերը վերակազմել, իսկ հետո հարձակվել միանգամայն նոր միջոցներով: Սա միակ ուղիղ միջոցն է, վորի շնորհիվ կարող ենք պրոպետարիատի կապը միջակ գյուղացու հետ ամրացնել: Հիշում եք, յերբ ՆեՊ-ը մտքըինք, միայն մեր ամենավոխերիմ թշնամիներն էին, վոր ասում էին, թե ՆեՊ-ը մի զիջումն է կապիտալիստներին: Հենց դրանք էին, վոր ասում էին.—«Կոմունիզմը անանկացավ, կոմունիզմից վոչինչ չմնաց, ուր նայում ես կապիտալիզմ է, բոլշևիկները ծունկ են չոքում կապիտալիստների առաջ, դադարել են սոցիալիստներ լինելուց»: Միթե այսպէս չեին ասում մեր թրշնամիները: Իսկ մենք միթե կարող էինք ուշք դարձնել այդ դատարկախոսութիւններին, վորոնց նպատակն էր միայն պանիկա առաջ բերել մեր շարքերում: Ի հարկէ չէ: Յեվ միթե նման խոսակցութիւններից ազդվելով մենք սկսեցինք հետ նահանջել նոր անտեսական քաղաքականութիւնից: Ի հարկէ, չէ: Մենք շարունակեցինք այդ ուղիով առաջ գնալ, շատ շատերի բերանը ջարդեցինք, շարունակում ենք ջարդել և ելի շարունակելու ենք ջարդել: Իսկ այժմ մարտական կոմունիզմի մնացորդները գյուղում ուզում ենք վոչնչացնել այնպիսի պայմաններում, յերբ մենք բավական ուժեղ ենք: Այժմ ինքնախարեյութեամբ չենք զբաղվում, այլ ամենից առաջ ի նկատի ենք ունենում ուսալ իրականութիւնը: Այժմ այսպէս ենք ասում,—ապրանքային շրջանառութիւնը զարգացնում ենք, մեր սոցիալիստական արդյունաբերութեան շրջանառու-

թյունն ել գրա հետ միաժամանակ կարագանա, և վոր գլխավորն է, ավելի արագ կաճի, պետական գանձարանում ավելի շատ փող կլինի և կկարողանանք ավելի շատ տուրքեր հավաքել: Այդ ժամանակ իսկապես կարող ենք վոչ թե խոսքով, այլ գործով ոգնել չքավոր գյուղացուն: Այժմ չենք կարող ասել—յեկեք կուլակի ունեցածը վերցնենք, խլենք նրա ձեռքից ինչ վոր ունի: Յե՛վ գրա հետ միաժամանակ չքավորներին ել ասում ենք—ինքներդ կազմակերպավեցեք, միջակ գյուղացիներին ել կազմակերպեցեք ձեր շուրջը, վարժվեցեք սեփական ուժերով փողի կանգնելու և վոչ թե սպասեցեք, վոր ձեզ ուրիշները ոգնեն, վորովհետև այդ ձևով կուլակներէ դեմ պայքարել չի լինի: Սովորեցեք կազմակերպված ճանապարհով կառուցել ձեր անտեսությունը, իսկ մենք ել ձեզ կողմենք: Ձեր շարքերը կազմակերպեցեք վոչ թե կոմբեզների ձևերով, այլ նոր պայմանների համաձայն: Անդամազրվեցեք կոոպերացիային, կուլակին խփեցեք անտեսական ֆրոնտում, ճնշեցեք նրան կոոպերացիայի միջոցով, արշավեցեք նրա վրա քաղաքական և անտեսական ֆրոնտներում, գրոհ տվեք նրա դեմ:

Նոր ոպպոզիցիայի կողմնակիցներն ասում են, թե XIV կուսկոնֆերանսը կուլակին զիջումներ ե արել: Դուք տեսնում եք, վոր դա ամենևին այդպես չէ: Դյուղի հիմնական մասսաների—միջակ և չքավոր գյուղացիների շարքերը կազմակերպելիս մի առ ժամանակ ոգտվում ե նաև կուլակը: Այդ բանը մենք չենք ժխտում: Բայց այս բոլորը անում ենք վոչ թե կուլակների գեղեցիկ աչքերի համար. ինչպես և նոր անտեսական քաղաքականությունն ել սկսել ենք վոչ թե կապիտալիստների գեղեցիկ աչքերի համար:

Ուրեմն, ոպպոզիցիայի կարծիքով XIV կուսկոնֆերանսի վորոշումները զիջումն են կուլակին. այժմ յես հարցնում եմ—արդյոք ոպպոզիցիայի այս տեսակետը կապ ունի նրա այն հայացքների հետ, վոր վերաբերում են ուրիշ խնդիրների և վորի մասին յես արդեն խոսել եմ: Ի հարկե, ունի: Վորովհետև յեթե ՆեՊ-ը միայն նահանջ ե, նշանակում ե ՆեՊ-ի գարգացումը գյուղում ավելի մեծ նահանջ պիտի համարել. իսկ շարունակ նահանջել, դա արդեն նշանակում ե մեր դասակարգային թշնամուն զիջումներ անել: Իսկ սվքեր են մեր դասակարգային թշնամիները—կուլակը և կապիտալիստը: Ոպպոզիցիան բոլոր հարցերում մի ուղղությամբ ե մտածում,—թե սոցիալիզմը մի յերկրում կառուցելու հնարավորության հարցում, թե ՆեՊ-ի հարցում, թե մեր պետական արդյունաբերության տիպը վորոշելու հարցում և թե XIV կուսկոնֆերանսի վորոշումները բացատրելու խնդրում: Այս բոլոր հարցե-

րում նա միևնույն ուղղությամբ ե մտածում: Պարզ ե, վոր յեթե կուլակներին դեմ կուվելու ամենապլխավոր միջոցը համարում ենք միջակներին հետ կապ ունենալը, դա արդեն նշանակում ե, վոր պետք ե կազմակերպել նաև չքավորությունը: Չքավորությունը մեր միակ հենարանն ե գյուղում. միթե պարզ չէ, վոր առանց այդ հենարանի մենք գյուղում վոչինչ չենք կարող անել: Չքավորությունը մեր ամենահուսալի հենարանն ե գյուղում. այդ տեսակետի վրա միշտ կանգնած ենք յեղել և այժմ ել կանգնած ենք. մենք միշտ չքավորին ոգնել ենք և ոգնելու ենք: Դրա համար ել հիմարություն ե կարծել, թե կենտրոնական կոմիտեյի հոկտեմբերյան պլենումի վորոշումները տարբերվում են XIV կոնֆերանսի վորոշումներից. յե՛վ վոչ միայն տարբերվում, այլև իբր թե ուղղում են նրա վորոշումները: Այդ մասին առաջին անգամ չէ, վոր խոսում ենք. և այժմ ել ասում ենք, վոր հոկտեմբերյան պլենումի վորոշումները միայն լրացումն են XIV կոնֆերանսի վորոշումների:

Կուլակի դեմ կուվելու ամենապլխավոր միջոցը համարում ենք միջակ գյուղացուն նրա ազդեցության տակից հանելը նրա համար. վորովհետև սա ավելի դժվար ե անել: Սակայն գյուղում մեր հենարանը, անշուշտ, չքավոր գյուղացիությունն ե: Շատ հաճախ կուլակների և չքավոր գյուղացիների մեջ այնպիսի պայմաններ են կնքվում, վոր չափազանց ծանր են լինում չքավորության համար: Շատ անգամ ել դա աշխատանքը վարձելու միջոցով չի լինում: Որինակի համար կուլակը թեպետ և վարձու աշխատանքից չի ոգտվում, բայց միաժամանակ անուղղակի կերպով ավելի շատ ե շահագործում: Բերենք մի շատ հասարակ որինակ: Յենթադրենք կուլակը ունի կալսոց մեքենա. նա այդ մեքենայից ոգտվելու համար մեծ քրեհ ե վերցնում կամ թե չէ մեծ տոկոսներով սերմի փոխառություն ե տալիս: Շահագործման նման ձևի որինակներ վորբան ուզեք կարելի ե բերել: Դրանից տուժում ե թե չքավորը և թե միջակ գյուղացին: Դրա համար ել, պարզ ե, վոր կուլակի դեմ կուվելիս ամենից առաջ պիտի աշխատենք նրա ազդեցությունից միջակ գյուղացուն ազատել, հենվելով չքավորության վրա: Յերբ վոր միջակ գյուղացին կուլակի կողմն ե, այն ժամանակ նա ավելի ուժեղ ե լինում:

Այժմ պետք ե պարզ պատկերացնենք մեր քաղաքականությունը գյուղում: Այնտեղ մեր հենարանը չքավոր գյուղացին ե և բառակալ Ամենից առաջ դրանց միջոցով պիտի տարածենք մեր ազդեցությունը գյուղում: Միջակ գյուղացին մեր դաշնակիցն ե,

վորին մեր կողմը պետք է քաշենք չքավորի ոգնութեամբ: Մեր թշնամին կուլակն է: Ահա այն գլխավոր յերեք խնդիրները, վոր շատերը չեն կարողանում հասկանալ: Մեկը մյուսից անջատել յերեք չի կարելի: Մեր անելիքները չքավորի և միջակ գյուղացու նկատմամբ չի կարելի իրարից բաժանել: Վոչ չքավոր գյուղացին կարող է կուլակի դեմ կռվել և վոչ էլ միջակ գյուղացին, առանց չքավորի ոգնութեան: Կուլակի դեմ տարվող պայքարի հարցը չի կարելի անջատել միջակ գյուղացուն մեր կողմը քաշելու հարցից: Իսկ մեր պրոլետարական քաղաքականութեան նույն հարցի այս կամ այն ձևն է: Ահա թե ինչպես է դրվում գյուղացիութեան հարցը: Դրանով էլ հենց վճռվում է թեքումները (УКЛОМ) հարցը: Համագումարը յերկու թեքումներն էլ դատապարտեց. — յեվ այն թեքումը, վորը չի տեսնում կուլակային վտանգը, և մյուս թեքումը, վորը միջակ գյուղացու հետ կապ ունենալու անհրաժեշտութիւնը չի ըմբռնում: Կուսակցութիւնը պիտի կուլակի շահագործող ձրգատումներին մեծ դիմադրութիւն ցույց տա: Դրա հետ միաժամանակ կուսակցութիւնը արթուն կերպով պիտի հսկի, վոր մեր ամուր կապը միջակ գյուղացու հետ չխզվի: Միայն հենվելով գյուղի չքավորութեան վրա և ամուր կապ ունենալով միջակ գյուղացու հետ, մենք կարող կլինենք կուլակին տնտեսապես և քաղաքականապես շեղոքացման յենթարկել:

IX ԴԻՍԿՈՒՍՍԻԱՅԻ ՄՅՈՒՍ ՀԱՐՑԵՐԸ

Այժմ կանցնենք ուղղորդիչի այն հարցերին, վորոնք մյուս հարցերի հետ ախքան էլ կապ չունեն: Առաջինը, դա հավասարութեան հարցն է, վորը շատ կարևոր է: Ինչպես ձեզ հայտնի է հավասարութեան այդ լոգունը դրել է Չինովյանը: Սովորաբար ուղղորդիչին պատկանող ընկերները մեզ այսպես են ասում—ի՞նչ է, չլինի՞ թե դուք հավասարութեան դեմ եք. մի՞թե կոմունիստական կուսակցութիւնը «այն որին է հասել», վոր «հավասարութեան դեմ է»:

Յեթե իսկապես մենք ասելնք, թե մեր կուսակցութիւնը հավասարութեան դեմ է, այն ժամանակ հարկավոր եր մեզ յերկաթե ցախավելով ուղղակի դուրս վոնդել թորհրդային Միութեան սահմաններից և կախել մի հոտած փոստում: Բայց չէ՞ վոր հարցը այդպես չէ դրված. ի հարկե, մենք հավասարութիւն ենք ուզում: Ի՞նչ է նշանակում, յերբ ասում ենք, թե պետք է կառուցենք սոցիալիզմ. մի՞թե դա հենց չի նշանակում, վոր հավասարութիւն ենք ուզում:

Վորովհետև սոցիալիզմն էլ հենց տնտեսական դրութեան հավասարութիւնն է: Սակայն մեր կարծիքով ավելի լավ է հարցը դնել ավելի կոնկրետ, և վոչ թե «ընդհանուր» ձևով: Պարզ է, վոր մենք աստիճանաբար դնում ենք դեպի սոցիալիստական հավասարութիւն, վորովհետև պայքարում ենք սոցիալիզմի համար: Մեր կուսակցութեան առաջ դրված ամենագլխավոր խնդիրը հենց նա է, վոր այդ հավասարութիւնն իրականացնի: Յեթե հաջողվի սոցիալիզմ կառուցել, դա էլ հենց նշանակում է, վոր հավասարութիւնը իրականացրել ենք: Յեվ ընդհակառակը, յեթե չհաջողվի այդ անել, կնշանակի՞ վոչ միայն չենք իրականացնի հավասարութիւնը, այլ նրա դեմ կգնանք: Ահա թե ինչպես պիտի դնել հարցը: Մենք միանգամայն դեմ ենք նրան, յերբ այդ հավասարութեան լոգունը դարձնում են վորպես հերթական անելիք: Մենք միանգամայն դեմ ենք այն բանին, յերբ ասում են, թե այդ հավասարութիւնը հենց հիմա, այսօր պիտի իրականացնել: Չի կարելի հավասարութեան լոգունը հերթական անելիք դարձնել, վորովհետև այն ժամանակ լոգունը իսկույն չի կարելի իրականացնել. իսկ այդպիսի պայմաններում յեկեք այս ու այն տեղ սկսենք միայն բլբլալ հավասարութեան մասին և միայն խոսել, այն ժամանակ վերջի վերջ ի՞նչ դուրս կգա դրանից: Յեկեք խոստովանենք, վոր այժմ մեր առաջ դրված ամենացափոտ խնդիրներից մեկը բանվոր դասակարգի և գյուղացիութեան մեջ գոյութիւն ունեցող անհամաձայնութիւններն են: Հապա, ի՞նչ են պատմել XIV կոնֆերանսից առաջ գյուղից վերադարձած մեր ընկերները: Նրանք պատմում են, թե գյուղացին ուղղակի ասում է բանվորին.—«Սա ի՞նչ բան է. դու կառավարում ես, իսկ յես վոչ. դու սանատորիս, սոցիալական ապահովագրութիւն (СОЦСТРАХ) ունես, իսկ յես վոչ. բո վորդիները դպրոցներում սովորում են, իսկ իմը վոչ. դու այլ տեսակ ընտրական իրավունք ունես, իսկ յես այլ»,—ահա թե ինչ են ասում գյուղացիները:

Այժմ յես հարցնում եմ—կարելի՞ է հենց այժմ և յեթ գյուղացուն հավասարեցնել բանվորը հետ: Այդ հավասարութիւնը կա, արդյոք, մեզ մոտ: Վոչ կա և վոչ էլ մեր ներկա պայմաններում այդ հավասարութիւնը կարող է լինել: Մի՞թե մենք չգիտենք, վոր բանվոր դասակարգը մեզ մոտ համեմատաբար ավելի արտոնյալ դրութեան մեջ է, քան գյուղացիութիւնը: Այդ բանը չենք թաղցնում. այդ մասին գրված է նույնիսկ մեր ծրագրում և ասված էլ է, թե ինչու է այդպես: Մենք գյուղացիներին ասում ենք.—

Յեթե ուզում ես լիովին հավասարութիւն լինի, այն ժամանակ իմացիր, վոր հարկավոր ե կառուցել սոցիալիզմ. իսկ սոցիալիզմին կարելի ե հասնել միայն պրոլետարիատի զիկտատուրայի միջոցով: Հարկավոր ե այդ զիկտատուրան պաշտպանել ու ամրացնել: Իսկ յեթե դու այդ զիկտատուրան չամրացնես, այլ ընդհակառակը, ձեռքից տաս, այն դեպքում դու վոչինչ չես ստանա: Այն ժամանակ ել հին կապիտալիստական կարգերը նորից կվերականգնվեն: Այժմ այդ զիկտատուրան ամրապնդված ե, բայց վոչ այն չափով, վոր կարողանայինք բոլորին ընտրելու իրավունք տալ: Մեր զիկտատուրան դեռ այնքան չի ամրացած, վոր կարողանայինք բանավոր դասակարգի բոլոր արտոնութիւնները վերացնել: Ի հարկե, բանվոր դասակարգը մեզ մոտ ավելի լավ դրութեան մեջ ե. դա մեր սահմանադրութեան մեջ ել հաստատված ե: Մեզ մոտ ձայնատուրայի իրավունքով բոլորը հավասար կերպով չեն ոգտվում. և դա մեր կարծիքով այդպես ել պետք ե լինի: Հավանորեն մի քանի տարուց հետո վորոշ փոփոխութիւններ կմտցնենք, բայց առ այժմ այդ անել անկարելի ե: Յերը մեր թշնամիները գրգռում են գյուղացիներին բանվորների դեմ, գրանով նրանք ցանկանում են այդ յերկու դասակարգերին իրար դեմ հանել: Յեւ յերը սպառնալիցիան մեզ մեղադրում ե, թե մենք իբր թե գյուղացիական, նույնիսկ կուլակային թեքումն ունենք, դա նշանակում ե նա դնում ե հավասարութեան մի այնպիսի լոգունգ, վորը ներկայումս չենք կարող իրագործել, յեթե չենք ուզում, վոր պրոլետարիատի զիկտատուրան խոր տակվի: Ճիշտ ե, արդյոք, դա: Ի հարկե, ձիշտ ե: Բացի դրանից քաղաքում ես կան բուրժուական և կիսաբուրժուական խավեր և յեթե դուք հավասարութեան լոգունգ դնելու լինենք, այն ժամանակ այս տարրերին ել իրավունք եք տալիս զանազան պահանջներ ներկայացնելու, դրանցից ամեն մեկն ել կարող ե ընտրական իրավունք պահանջել իրեն համար. այդ ժամանակ ել ինչ դուրս կգա: Միթե պարզ չե, վոր բուրժուական դեմոկրատիան հենց այդ լոգունգով ե դուրս գալիս մեր դեմ: Պարզ ե, վոր այնպիսի լոգունգ չենք կարող դնել: Մենք այժմ անպատասխանատու դեմագոգներ կլինենք յեթե այնպիսի լոգունգներ առաջ քաշենք:

Այժմ վերցնենք հարցի մի ուրիշ կողմը: Աշխատանքը վարձատրելու համար մեզ մոտ գոյութիւն ունեն մի շարք բազրյադներ: Ո՞վ չգիտե, վոր սպեցները անհամեմատ ավելի շատ են ստանում, քան վորակյալ բանվորները, իսկ վորակյալ բանվորներն ել իրենց հերթին ավելի շատ են ստանում, քան վոչ վորակյալ (неквали-

фицированные) բանվորները: Հապա ի՞նչ եք կարծում. կարելի ե արդյոք այս բոլոր բազրյադները միանգամից վերացնել, վոր բոլորը հավասար ստանան: Ի հարկե չի կարելի: Անշուշտ հարկավոր ե մի քանի տեղ հարթել, վերացնել տարբերութիւնը, կովել զեղծութիւններ դեմ: Սակայն հավասարեցումը լիովին և իսկույն իրագործել. անհնար ե: Ի հարկե, վորակյալ բանվորը կցանկանա, վոր իրեն հավասարեցնեն սպեցի հետ. իսկ յեթե դուք վորձեք նրան հավասարեցնել վոչ վորակյալ բանվորի հետ, պարզ ե, վոր նա չի համաձայնվի և կասի, «մի քիչ կամաց, սպասիր»: Այստեղ հարցը պարզ պետք ե դնել. կարելի ե, արդյոք, ներկա պայմաններում բոլորին հավասար ուժիկ տալ. ի հարկե, չի լինի: Այս խնդրում կարգ եք այժմ և յեթ լիովին իրագործել հավասարութիւնը: Վո՞չ, չենք կարող: Բայց չե՞ վոր հետամնաց բանվորները իսկույն կարող են այդ լոգունգի պոչից բռնել, վորովհետե նրանց դրութիւնը շատ ծանր ե: Նրանք ուզում են յերկու-յերեք անգամ ավելի ստանալ, քան այժմ ե: Դա բնական ե և նույնիսկ արդարացի: Յեւ յերը մենք այժմ և յեթ այնպիսի լոգունգ ենք դնում և միևնույն ժամանակ վոչինչ չենք կարողանում տալ, հենց դրանով ել կեղծ մտերհակ ենք տալիս նրանց ձեռքը և իրավունք դրանով ել կեղծ մտերհակ ենք տալիս նրանց ձեռքը և իրավունք տալիս, վոր մեզնից պահանջներ անեն: Դրա համար ել ավելի լավ ե մի քիչ զգուշ լինել, լոգունգները չշուայել, կեղծ մուրհակներ չտալ, վորովհետե իշխանութեան գլուխ կանգնած քաղաքական կուսակցութեան համար շատ վտանգավոր ե, յերը նա խոստումներ ե տալիս և չի կատարում: Դուրս ե գալիս, վոր նա ուղղակի խաբում ե: Մի մոռանաք, վոր մեր նկատմամբ այժմ ավելի պահանջկոտ են, քան 1918 թվին եր: 1918 թվին յերը ստում եինք, թե շուտով վագոններով հաց կգա, բաց հետո մեզնից անկախ պատճառներով հացը չեք ստացվում, այն ժամանակ դա այնքան ել վտանգավոր չեք, վորովհետե բոլորը գիտեին, վոր յերկիրը ծանր վտանգավոր չեք, իսկ ներկայումս նույնը չե: Այժմ պահանջները ավելի են շատացել և չի կարելի ասել, թե դա վատ ե: Այժմ մարդիկ ավելի պահանջկոտ են դարձել: Ահա թե ինչու ենք ասում — յերը մի բան խոստանում ես, բարի յեղիր կատարելու: Չի կարելի այնպիսի լոգունգներ շուայել, վոր չես կարողանալու իրագործել:

Չի չունեցող գյուղացիների հարցը քննելուց ավելի լավ ե նստել ու հաշվել, թե վորքան փող ե հարկավոր, վորպեսզի ամեն մի ձի չունեցող գյուղացու ձի տաս: Իսկ առանց այդ հաշիվը անելու դնել «ձի չունեցողին ձի պիտի տալ» լոգունգը և ասել, թե

խսկույն հարկավոր է իրագործել, չի կարելի: Մի՞թե դա կարելի է ներկայումս իրագործել: Ինչ կա վոր, հեշտ է ասել, թե «ձի չունեցողին ձի պիտի տալ»: այն ժամանակ բոլորը կասեն՝ այ տեսնում եք, սա չքավորութիւնը պաշտպանում է, սա լավ մարդ է: Դա հեշտ է: Բայց այդպես չի կարելի անել: Պետք է նստել և հաշվել, թե մեզ ժողովրդի պահանջը կա ձի չունեցող, ինչքան արժեք մի ձին, ինչքան փող է հարկավոր, վորպեսզի բոլոր ձի չունեցողներին ձի տանք, ապա վճարեցից մենք այդ փողը իսկույն ձարենք: Ահա թե ինչպես պիտի դնել հարցը, յեթե միայն չես ուզում դատարկախոսութիւններով զբաղված լինել: Ի հարկե, յերր ասում են, թե պետք է աշխատենք գյուղացուն գործիքներ տալ, ձի չունեցողներին ձի տալ, տրակտորներ ուղարկել գյուղը և այլն, այդ ժամանակ մենք ասում ենք, վոր կանենք այն բոլորը, ինչ վոր հնարավոր է: Սակայն դա չի նշանակում, թե պետք է այնպիսի խոստումներ շուայել, վորոնց իրագործելը այժմ անհնար է: Ահա թե ինչու մե ե գործը. ահա թե ինչու մե է կայանում այդ լուրջագի կեղծ լինելը: Վերջապես այդ լուրջագի կեղծ է յերկու պատճառով. առաջինը՝ վոր բուրժուազիան և մանր-բուրժուազիան ոգտագործում են այդ լուրջագի մեր դեմ, և յերկրորդը՝ կեղծ է նրա համար, վոր չքավոր գյուղացիներին ու պրոլետարիատին այնպիսի խոստումներ ենք տալիս, վորոնց իրագործելը միանգամայն անհնար է:

Յես կանգ չեմ առնի մյուս հարցերի վրա: Չեմ խոսի կուսակցութիւնը ուղեցնելու, Սարգսի առաջարկութիւններին և այն մասին, վոր հարկավոր է կուսակցութիւն մեջ 5 միլիոն նոր բանվորներ ընդունել:

«Դինամո» գործարանի բանվորներից մեկը լավ եր ասում, թե յեթե մենք կուսակցութիւն մեջ ընդունելու լինենք 5 միլիոն նոր բանվորներ, այն ժամանակ ընդ կատարի և ավելացնում է— յեթե դուք, սիրելի առաջնորդներ, այժմ կուզում եք կուսակցութիւն մեջ, ապա ինչ կլինի այն ժամանակ, յերբ կուզեն 5 միլիոն հոգի: Սա թեպետ կուպիտ ձեռով է ասված, բայց միանգամայն ճիշտ է: Յեզ իսկապես մենք, վոր յերկար ժամանակ միասին կուսակցական դաստիարակութիւն ենք ստացել, հասկանում ենք ֆրակցիոն կուլի ամբողջ փաստակարութիւնը, հասկանում ենք, թե վորքան վտանգավոր է բոլորի աչքի առաջ դիսկուսիայով զբաղվել և ելի չենք կարողանում զսպել մեզ, ապա ինչ կլինի այն ժամանակ, յերբ այդ բանն անեին 5 միլիոն մարդիկ և յերբ ամեն մեկը աներ այն, ինչ ցանկանում է: Այն ժամանակ մի անտանելի դրու-

թիւն կստեղծվեր: Պետք է վերջի վերջո հասկանալ, թե ինչ է դասակարգը և ինչ կուսակցութիւնը և թե դրանց մեջ ինչ տարբերութիւն կա: Ի հարկե, մենք շարունակ պիտի աշխատենք այնպես անել, վոր դասակարգի և կուսակցութիւն մեջ յեղած տարբերութիւնը քանի գնա, վերանա: Սակայն այդ անելուց, մի բուպե անգամ չպիտի մոռանանք, վոր դա միանգամից չի լինիլ և ամեն մի տվյալ մոմենտում վորոշ չափ կա:

Գյուղում կոմյերիտիութիւն շուրջը անկուսակցական պատվիրակային ժողովներ կազմակերպելու մասին յես չեմ խոսի, ժամանակ չունենալու պատճառով:

Ճ. ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՊՊՈՋԻՑԻԱՅԻ ՄԵՋ

Պետք է ասեմ, վոր իմ ընդգծած բոլոր կետերը քիչ թե շատ ընդհանուր են ամբողջ ոպպոզիցիայի համար. այդ են ցույց տալիս նրանց բոլորի ասածները: Բայց միաժամանակ պիտի ասել, վոր յեթե լավ անալիզի յենթարկելու լինենք նրանց ասածները, կտեսնենք, վոր ոպպոզիցիայի մեջ մի քանի հարցերի շուրջը միակարծիք չեն յեղել: Յես կբերեմ մի որինակ, վորը նրանց ամենագլխավոր գենքն է յեղել մեր դեմ: Ի միջի այլոց, ինձ թվում է, վոր դուք թույլ կտաք ինձ «հարստացեք» լուրջագի մասին այլևս չխոսել, վորովհետև դրա մասին այնքան եմ խոսել, վոր արդեն լեզուս հոգնել է (ծափահարութիւններ):

Յես կբերեմ մի ուրիշ որինակ, վորը պակաս գենք չի յեղել ոպպոզիցիայի ձեռքում, մեր դեմ պայքարելու համար: Մեր յերիտասարդ ընկերներից մեկին, ընկ. Սլեպկովին ի միջի այլոց ոպպոզիցիան մեղադրում է նրանում, վոր նա փոխանակ ասելու «ՆԵՊ-ի զարգացում», ասել է «ՆԵՊ-ի ընդլայնում»: Դրա համար ընկ. Սլեպկովը անվերջ հարձակումների է յենթարկվել Լենինգրադի թե առաջնական ու նահանգական կուսկոնֆերանսներում և թե կուսակցական համագումարում: Մի խոսքով կուսակցական մի անկյուն չի մնացել, վորտեղ նրան այդ սխալի համար չդատապարտեին: Ոպպոզիցիան նրա սխալը լիովին ոգտագործել և ամեն մի քայլափոխում սկսել է բղավել այդ մասին: Այժմ յես վերցնում եմ «Կոմունիստական Ինտերնացիոնալ» ժուրնալի № 5-ը, վորը հրատարակվում է Ձինովյեի խմբագրութիւնը: Այդտեղ լույս է տեսել ընկ. Մարտինովի մի հոդվածը. ընկ. Ձինովյեը այդ հոդվածը ման-

բամասն խմբագրել եւ և թույլատրել տպագրելու: Յեւ ինչ ենք տեսնում: Հենց նույն այդ հոգւածում ընկ. Մարտինովը խոսում եւ «ՆեՊ-ը ընդլայնելու» մասին: Թերևս ասեն, թե դա պատահամբ եւ յեղել, Մարտինովը դե՛ նախկին մենշեիկ եւ, կարող եւ այդպիսի սխալ թույլ տալ, չնայած մենք գիտենք, վոր նա այժմ մեր կուսակցութեան առաջին շարքերում եւ գտնվում: Շատ լավ. այն ժամանակ կբերեմ մի ուրիշ որինակ Նադեժդա Կոնստանտինովնայի ճառից: Այդ ճառում նա ի միջի այլոց ասում եւ. «Յես դեմ չեմ, վոր ՆեՊ-ը գյուղում ընդլայնվի»: Ուրեմն ինչ ենք տեսնում: Նադեժդա Կոնստանտինովնայն ասում եւ, վոր ինքը ՆեՊ-ը գյուղում ընդլայնելու կողմնակից եւ, իսկ մյուսները բռնելով մի սխալի պոչից բղավում են. «Տեսնում եք, դա նոր շկոլա եւ, դա կուլակային թեքումն եւ»: Իսկ ոպպողիցիայի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկը, վորը իրեն համարում եւ 100 տոկոսով լենինեց—համագումարում խոսելու ժամանակ նույնն եւ ասում «ՆեՊ-ը ընդլայնելու» մասին և յուր ճառի ստենոգրամման նայելուց հետո ել, այդ բառերը չի ջնջել: Ճիշտ եւ, դա սխալ արտահայտութիւնն եւ, մենք բոլորս խոսել ենք այդ մասին: Սլեպկովն ել յուր այդ արտահայտութիւնից հրաժարվել եւ, բայց ամբողջ բանը նրանումն եւ, վոր դրա համար ոպպողիցիան սկսել եւ հարձակումներ գործել Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեան բոլոր կողմնակիցների վրա: Սլեպկովի վրա նրանք հարձակվել են նրա խոսքերի համար. ինձ վրա հարձակվել են նրա համար, վոր իբր թե յես Սլեպկովի ասածները «թագցրել» եմ. Ստալինի վրա հարձակվել են նրա համար, վոր իբր թե նա Սլեպկովին «թագցրել» եւ յերրորդ հարկում և Կենտրոնական Կոմիտեի վրա ել սկսել են հարձակվել նրա համար, վոր իբր թե նա Սլեպկովին թագցրել եւ չորրորդ հարկում: Յեւ ինչ եք կարծում, այսպիսի ուժեղ ուժակոծութիւնից հետո մարդիկ անմեղ դեմքով ամբիոն են բարձրանում և ասում նույնը, ինչ վոր Սլեպկովն եւ ասել: Դա մի կողմ թողած: Դուրս եւ գալիս, վոր Զինովյեւը և Կամենսկը ՆեՊ-ը կրճատելու կողմնակից են, իսկ Նադեժդա Կոնստանտինովնայն պահանջում եւ ՆեՊ-ը գյուղում ընդլայնել—չես հասկանում, թե ինչ են ուզում ասել: Մեկն այսպես եւ ասում, մյուսն այնպես:

Այժմ մի քանի խոսք այսպես կոչված «ձախ» ուղղութեան մասին: Մեզ քննադատում են նրա համար, վոր մենք իբր թե պրոլետարիատին հարկավոր չափով առաջ չենք քաշում, չքավոր գյուղացիութեանը չենք ոգնում և կուլակային վտանգին քիչ ուշադրութիւն ենք դարձնում: Այդ ասույներից մեկն ել հենց ընկ. Սա-

կոնիկովն եւ Յեւ ինչ եք կարծում: Վերցնենք հենց այդ նույն Սակոնիկովին: Նրա ասածներից դուրս եւ գալիս, վոր մեր տրեսները կիսով չափ հարկավոր եւ դենացիոնալիզացիայի յենթարկել, նա չափազանց հոռետես եւ (վատատես եւ) մեր արտաքին առևտրի վերաբերմամբ, մեր կոոպերատիվ կազմակերպութիւնների դեմ եւ խոսում, չի համաձայնում, վորպեսզի գյուղի չունևոր խավերի հարկերը վորոշ չափով թեթեւացրվեն:

Մի կողմից մեզ մեղադրում են, վոր իբր թե մենք չենք նկատում կուլակային վտանգը, ավելի քիչ ուշադրութիւն ենք դարձնում պրոլետարիատին, քիչ ենք ոգնում չունևոր գյուղացիներին. այսպես նրանք խոսում են: Իսկ յերբ վոր բանը գործին եւ հասնում և յերբ վոր հարկավոր եւ գործով այդ ցուց տալ, այն ժամանակ մենք ուրիշ բան ենք տեսնում: Մեկը մյուսի հետ բոլորովին չի կապվում—գործը բոլորովին չի համապատասխանում խոսքին: Ընկ. Զինովյեւի ասածներն ել իրար չեն բռնում—որինակի համար կուսակցութեան 100 տոկոսային միասնակութեան խնդրում: Բացի դրանից նա Կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեանը մեղադրում եւ նրա համար, վոր իբր թե մենք մեծ զիջումներ ենք անում գյուղացիութեանը, իսկ մյուս կողմից ել ասում եւ, վոր հարկավոր եւ գյուղացիութեան առաջ գլուխ խոնարհել, նույն ընկ. Զինովյեւը մեկ ասում եւ, թե իբր մենք չենք տեսնում, թե ինչպես մանր-բուրժուական հորձանքները մեզ վրա են արշավում, իսկ մյուս կողմից հենց նույն ինքը Զինովյեւը առաջարկում եւ տեղեւորում և կենտրոնում ստեղծել անկուսակցական գյուղացիական Ֆրակցիաներ: Ինչպես տեսնում եք, կարծիքների տարբերութիւններ կան վոչ միայն ոպպողիցիայի առանձին անդամների մեջ, այլ և նրա յուրաքանչյուր անդամի ասածներն ել իրար չեն բռնում: Սա արդեն մի մեծ յերաշխիք եւ, վոր իսկապես մեր կուսակցութեանը միասնական եւ և այդպես ել կմնա:

XI. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՊՊՈԶԻՑԻԱՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Այժմ մի քանի խոսք ասեմ, թե ինչու այդ ոպպողիցիան վրտանգավոր եւ, ավելի վտանգավոր, քան մինչև այժմ յեղած ոպպողիցիաները: Դրա պատճառը նա եւ, վոր անհամաձայնութիւնները լենինյան գվարդիայի մեջ են յեղել: Դա քիչ բան չեւ: Յերկրորդը՝

վտանգավոր ե նրա համար, վոր նոր ոպպողիցիան սարսափելի դեմագոգիական միջոցների ե գիմում: Բանը նրանումն ե, վոր այժմ դա դժվար չե անել: Վորովհետև գյուղից նոր բանվորներ են գալիս մեզ մոտ, վորոնք քիչ ոռճիկ են ստանում, միշտ կարիքի մեջ են, ի հարկե, շատ հեշտ ե նման բանվորներին այդպիսի խոսքեր ասել նրանց դուր գալու համար: Հավասարության լողունգն ել հենց այդպիսի դեմագոգիական լողունգներից մեկն ե: Արդյունաբերությունից ստացվող շահը (прибыль) բանվորների մեջ բաժանելու լողունգը նույնպես մի դեմագոգիական լողունգ ե: Յերբ ասում են, թե մեր Կարմիր Բանակի կարմիր հրամանատարները «զալատապագոննիկներ» են, դա ամենավատ տեսակի դեմագոգիական լողունգ ե: Նույնպիսի մի դեմագոգիական լողունգ ե, յերբ ասում են, թե մեր տնտեսավարները համարյա թե շահագործողներ են: Ապա ի՞նչ եք կարծում: Յեթե այս բոլոր ասածները իրար կողքի դնենք, այն ժամանակ ել ի՞նչ կստացվի: Մեր արդյունաբերությունը պետական կապիտալիստական ե, Կարմիր Բանակում «զալատապագոննիկներ» կան, մեր տնտեսավարները շահագործողներ են, ՆեՊ-ը միայն և միմիայն նահանջ ե—յեթե այդ բոլորն իսկապես այդպես ե, նշանակում ե, վոր մենք իսկապես նահանջում ենք կոմունիզմից: Մեր բոլոր թշնամիներն ել հենց նույնն են ասում: Մանավանդ յեթե դրանից հետո ել ասենք այդ բանվորներին, թե կուսակցությունն ե մեղավոր, վոր դուք քիչ ոռճիկ եք ստանում, վոր մեզ մոտ հավասարություն չկա, վոր ձի չունեցող գյուղացուն ձի չի տրվում, այն ժամանակ պարզ ե, վոր այդ բանվորները դուրս կգան մեր դեմ: Բայց միթե այդպես հնարավոր կլինի սոցիալիստական ղեկավարությունը շարունակել. ընդհակառակը հենց այդ բանվորներին պիտի հասկացնել, վոր այնքան ել ճիշտ չե միանգամից ոռճիկներն ավելացնել:

Իմ կարծիքով, նոր ոպպողիցիան հետևանք ե այն դժվարությունների, վոր ներկայումս կան մեր շինարարության մեջ: Ոպպողիցիան արտահայտում ե բանվորական այն նոր խավերի տրամադրությունները, վորոնք դեռ կազմակերպչական դպրոց չեն անցել, վորոնց համար դեռ այնքան ել պարզ չե մեր դրությունը, վորոնք պահանջում են անմիջապես բարելավել իրենց դրությունը և վորոնց առայժմ մենք դեռ հնարավորություն չունենք բավարարելու: Այդ մեկ, Իսկ մյուս կողմից նոր ոպպողիցիան արտահայտում ե բանվոր դասակարգի այսպես կոչված վորոշ արիստոկրատական խավերի այն տրամադրությունները, վորոնք իբր թե իսկական «պրոլետարական» տեսակետից են նայում գյուղացիության

վրա, մինչդեռ իսկապես մոռանում են գյուղացիությանը և բանվոր դասակարգի առաջ զբված խնդիրները այդ հարցում: Մյուս կողմից ել ոպպողիցիան արտահայտում ե գյուղի չքավորության տրամադրությունները, վորը դեռ մեզնից նյութական ոգնություն չի ստացել և դրա համար ել տատանվում ե: Նման տրամադրություններ կան նույնիսկ մեր կուսակցության վորոշ խավերի մեջ ել: Փոխանակ բաց ճակատով դուրս գալու և ասելու, թե այս ինչը կարելի ե անել, և այն ինչը հնարավոր չե, կամ թե սա իսկույն կարող ենք անել, իսկ այս մյուսը առ այժմ չե,—փոխանակ այսպես անելու, մարդիկ դուրս են գալիս և միանգամայն իզուր տեղը ձի խոստանում ձի չունեցողին, հավասարություն խոստանում, մի խոսքով աջ ու ձախ խոստումներ տալիս: Դա միանգամայն անթույլատրելի ե, քանի վոր հնարավոր չե խոստումները կատարել:

Սոստումներ տալիս են, բայց կատարել չեն կարողանում: Այդ բոլորի հետևանքը այն ե լինում, վոր սկսում են կասկածով վերաբերվել դեպի մեր արդյունաբերությանը և խորհրդային իշխանությանը: Դրանով մենք վոչ թե դատարարակում ենք բանվոր դասակարգի նոր խավերին, այլ, ընդհակառակը, նրանց լարում ենք խորհրդային իշխանության դեմ: Դրա հետևանքը այն ե լինում, վոր բանվոր դասակարգի մեջ բաժանումներ են առաջանում, նրա վորակյալ և վոչ վորակյալ խավերի մեջ առելություն ե առաջ գալիս: Բացի դրանից այս բոլորի հետեվանքը այն կլինի, վոր մենք գյուղացիական մասսաներից կկտրվենք և այն ժամանակ իսկապես վոր կուլակը կուժեղանա և վոչ թե կթուլանա. կուլակը կուժեղանա նրա համար, վոր մենք մենակ գյուղացուն մեզնից վանելով՝ նրա գիրկը կզցենք: Ահա թե ինչ դրություն կստեղծվեք յեթե մեր կուսակցության համագումարի մեծամասնությունը նոր ոպպողիցիայի կողմը լինեք:

Բացի դրանից Լենինգրադի պատվիրակության գլուխ կանգնած ընկերների խոսելու ձևը մեծ վտանգներ առաջ կբերեր: Այդ ձևը արդեն ստեղծել և շարունակում ե ստեղծել մեծ դժվարություններ: Վորոնք են այդ դժվարությունները: Առաջինն այն, վոր մեր յերկրում կոմունիստական կուսակցությունը կառավարող կուսակցություն ե և չի կարող ավելորդ դիսկուսիա թույլ տալ: Չե վոր այդ բոլորը փաստում ե մեր ամբողջ աշխատանքին, ազդում ե խորհրդային ապարատի վրա, մեծ ուրախություն ե պատճառում մեր թշնամիներին և ուղղակի ոգնում նրանց՝ մեր դեմ պայքարելու: Չպետք ե նաև մոռանալ, վոր վորոշ չափով տատա-

նուսններ են սկսում նաև Կոմունիստական Ինտերնացիոնալի շարքերում: Դուք կարծում եք մեր բոլոր թշնամիները չգիտե՞ն այս ամենը: Նրանք սկսում են ծաղրել ոտարերկրյա կոմունիստներին և ասում. — «Դուք շարունակ «լենինիզմի» մասին եք խոսում, բայց դուրս ե գալիս, վոր յերկու լենինիզմ կա. ավելի լավ ե նախ վրձուեցեք, թե դրանցից վորն ե իսկականը և նոր միայն յեկեք մեզ սովորեցրեք».

ահա թե ինչ են ասում մեր թշնամիները: Սոցիալ-դեմոկրատները, զանազան տեսակի մենշևիկները ուղղակի հրձվում են. պետք ե ասեմ, վոր ռուսական մենշևիկներն ու ոտարերկրացիներին շատերն ել ուղղակի պաշտպանում են մեր ոպպոզիցիային: Յես մի փոքրիկ հողված արդեն գրել եմ այն մասին, թե ինչ են ասում մենշևիկները: Ահա թե ինչ են գրում նրանք. — «Վերջապես Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Լենինգրադի կազմակերպության մեջ մարդիկ գտնվեցին, վորոնք խոստովանեցին, վոր վոչ մի սոցիալիզմ չկա: Պետական կապիտալիզմի հարցում ոպպոզիցիան միանգամայն իրավացի ե»: Պարզ ե, վոր նրանք այդպես ել պիտի ասեն: Ռուսական մենշևիկները առանձնապես աղմուկ են բարձրացրել և ամեն կերպ աշխատում են ոգտագործել ոպպոզիցիայի ասածները մեր դեմ ոտարերկրյա մենշևիկներն ել մեր դեմ են և նույնն են ասում: Փրանսիական սոցիալ-ազգասերների «Պեպլ» (Ժողովուրդ) թերթում ուղղակի այսպես են գրում. — «Ընդ, փառք աստծո, շնորհակալություն պիտի հայտնել ոպպոզիցիային, վոր նա վերջապես բաց արավ մեր աչքերը և պարզեց մեզ համար, թե Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի մեծամասնությունը ինչ տեսակի «մարքսիզմ» ե հրամցնում մեզ ու բարոգում»: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության որգան «Փորվերտս»-ը մեծ հրձվանքի մեջ ե և նույնպես ասում ե. — «Մենք վաղուղ ենք ասել, վոր նրանց մոտ սոցիալիզմ չկա»: Իսկ մեր մենշևիկները «Սոցիալիստիչեսկի Վեստնիկ»-ի վերջին համարում գրում են. — «Վերջապես բոլշևիկյան բանվոր դասակարգի մեջ ել մարդիկ գտնվեցին, վորոնք խելքի յեկան և հասկացան, վոր բոլշևիկները մինչև այժմ ասածները սխալ են»:

Բայց չե՞ վոր մենք լենինիզմ քարոզել ենք. ուրեմն այլ խելքի գալը լենինիզմից հեռանալն ե, — այդպես են ասում մեր թըշնամիները: Ահա թե ինչպես են գնահատում նրանք:

Դա շատ վտանգավոր ե, մանավանդ յերբ մեր թշնամիները կրկնում են մեր ոպպոզիցիայի ասածները և ուրախանում. չենց ոպպոզիցիայի ասածներն ել կրկնելով, նրանք ավելացնում են. —

«վերջապես մարդիկ խելքի յեկան և հրաժարվում են այն բոլորից, ինչ ասել են կոմունիստները»: «Սոցիալիստիչեսկի Վեստնիկ»-ում լույս տեսած հողվածը հենց այդպես ել սկսվում ե: Ահա թե ինչ ե ասում նա. — «Սմբողջ ժամանակ խոսում են սոցիալիզմը կառուցելու հաջողությունների մասին, ութ տարի դրա մասին բղավում են — սոցիալիզմի կառուցում, սոցիալիզմի կառուցում, իսկ այսոր հենց իրենք դուրս են գալիս և ասում — «ել ուր ե մեզ մոտ սոցիալիզմը. մեզ մոտ միայն պետական կապիտալիզմ ե և մեր Ֆաբրիկաներն ել պետական-կապիտալիստական են»:

Ինքնըստինքյան պարզ ե, վոր դուք ինքներդ արդեն տեսնում եք կամ շուտով կտեսնեք, թե ինչպես բոլոր այդ մենշևիկական, կիսամենշևիկական և նման տարրերը Ֆաբրիկաներում ու գործարաններում ճիշտ նույն բանն են ասելու. — ընդ, այ ձեր պետական արդյունաբերությունն ել տեսանք. ընդ, վերջապես հասկացանք թե բանն ինչու՞ն ե. այժմ արդեն բավական ե ինչքան խաբել եք բանվոր դասակարգին» — այդպես նրանք կասեն և այդպես ել արդեն ասում են: Այս բոլորից պարզ ե, վոր անհրաժեշտ ե ամենից առաջ հարցը լուծել մեր կուսակցության համար: Սուաջին հերթին պիտի պարզել, թե ինչպես ե մեր կուսակցությունը նայում այս բոլոր խնդիրներին: Մեր համագումարն այս բոլոր խնդիրների համար ասաց իր վորոշակի խոսքը, հանեց յուր բանաձևը, վորն այլ ևս վոչ մի մութ կետ չի թողնում: Սակայն դժբախտաբար պետք ե ասել, վոր համագումարի վորոշումներից հետո այժմ ել շարունակվում ե նույն պայքարը, փաստորեն ուղղված կուսակցական համագումարի վորոշումների դեմ: Մեր տարաձայնությունները կարող են վերացվել և ըստ եյության համարյա թե վերացվում են: Որինակի համար, ոպպոզիցիային պատկանող ընկերները այժմ մեր պետական արդյունաբերության մասին նույնը չեն ասել, ինչ վոր առաջ եին ասում: Նրանք այժմ համաձայնվում են, վոր մեր պետական արդյունաբերությունը վոչ թե պետական-կապիտալիստական արդյունաբերությունն սոցիալիստական: Աստված տա, այդպես ել լինի. մենք շատ ուրախ կլինենք, յեթե վերջիվերջո նրանք բոլոր հարցերի նկատմամբ այդպես խոստովանեն իրենց սխալները: Իսկ անկախ այն բանից, թե նրանք կխոստովանեն իրենց սխալները թե չե, մենք այնուամենայնիվ պետք ե լենինիզմի կազմակերպչական ավանդները կատարենք. մենք պետք ե նրանց կամ համոզենք, կամ ստիպենք յենթարկվել մեր կուսակցության համագումարի բոլոր վորոշումներին (ծափահարություններ):

Յեթե նրանք միանգամայն կամավոր կերպով յենթարկվեն, ավելի լավ, մենք չափազանց ուրախ կլինենք. իսկ յեթե իրանց կամքով չջանկանան անել այդ, այն ժամանակ հարկավոր կլինի ստիպել: Յեթե անհրաժեշտ կլինի այս կամ այն ընկերոջ նկատմամբ այս կամ այն միջոցը (կազմակերպչական քայլեր) ձեռք առնել, պետք է անել (ծափահարություններ): Վորովհետև միանգամայն սխալ կլինեն ներկուսակցական դեմոկրատիան հասկանալ այն մտքով, թե ով ինչ ուզում է, կարող է անել, կամ թե ամեն մեկը կարող է անել այն, ինչ վոր ինքը ճիշտ է համարում: Ինչ ուզում ես քեզ համար մտածիր, դա քո գործն է, բայց չպիտի մոռանաս, վոր կան նաև կուսակցութայն վորոշումներ, վոր պիտի կատարես:

Յերբ վոր ընկ. Տրոցկին դուրս յեկավ մեր կուսակցութայն մեծամասնութայն դեմ, նա լիովին համոզված էր, թե ինքը միանգամայն ճշմարիտ է. նա համոզված էր, վոր ճշմարիտ է և կովում էր այդ ճշմարտութայն համար: Համագումարը վորոշում կայացրեց և ասաց, վոր Տրոցկին սխալվում է. այդ ժամանակ մենք նրան ասացինք.— դու կարծում ես, թե դու ճշմարիտ ես. ինչ ուզում ես մտածիր, դա քո գործն է, միայն յենթարկվիր համագումարի վորոշումներին: Այս ինչդրում վոչ մի բացառություն չի կարող լինել: Մեր կուսակցութայնը կարող է գոյություն ունենալ միայն այն ժամանակ, յերբ նրա բոլոր անդամները կայացրած վորոշումները կատարեն: Յեթե զգում ես, վոր դու սխալվել ես, բարի յեղիր հայտարարելու այդ մասին: Քանի վոր համագումարի վորոշումն արդեն յեղել է, պետք է յենթարկվես ու հաշտվես: Իսկ յեթե այնուամենայնիվ գտնում ես, վոր դու իրավացի ես, շատ լավ. այն ժամանակ սպասիր, յերբ վոր հետեվյալ համագումարից առաջ Կենտրոնական Կոմիտեն դիսկուսիա բացի, նորից սկսիր պաշտպանել քո տեսակետը: Դու լիակատար իրավունք ունես այդ անելու: Իսկ մինչև համագումար լինելը, գլուխդ խոնարհիր կուսակցութայն առաջ, յենթարկվիր նրա վորոշումներին և սպասիր հաջորդ համագումարին: Ձեզ եմ հարցնում, այդպէս է, թե չե (բուն ծափահարություններ):

Յես գիտեմ, վոր մի քանիսը, մանավանդ կուսակցութայն յերիտասարդ անդամները այլ կերպ են մտածում.— դուք այստեղ շարունակ խոսում եք, իսկ ուրիշներին ստիպում եք լռել—անա թե ինչ են ասում նրանք: Ընկ. Ուխանովն ասում է, թե նախագահութայնն ուղարկած մի գրութայն մեջ այդպես է ասված: Այն ժամանակ ձեզ հարց եմ տալիս.— Այդ ով է ասել, թե մեր բոլշևիկա-

կան կուսակցութայն մեջ չեն յեղել դեպքեր, յերբ հարկավոր է յեղել լռեցնել (ծափահարություններ):

Իսկ ինչ դրություն կառաջանար յերբ կուսակցական համագումարի վորոշումներից հետո չստիպելինք լռել. ինչ կստացվեր այն ժամանակ: Իմ խոսելուց հետո դուրս կգնային ընկ. ընկ. Չինովյեը և Կամեներ և կասեին.— «Դու եսենց, ենենց և այն, և այն»: Այն ժամանակ յես ել նրան կպատասխանեի. վաղը նա կգնար մի ուրիշ ռայոնում կխոսեր, յես ել նրա հետեից կգնայի. հետեյալ որը կգնար մի ուրիշ տեղ, յես այնտեղ ել կգնայի ու կպատասխանեի, և ինչ կստացվեր այն ժամանակ: Դիսկուսիան անվերջ կշարունակվեր և մեր կուսակցութայնն այն ժամանակ վոչ թե կուսակցութայն կնամանվեր, այլ կդառնար դիսկուսիայի մի ակումբ: Յեվ ինչ կստացվեր այս բոլորից: Նախ քան կուսակցութայն համագումարի վորոշումը կայանալը, վոչ վոք չի ստիպել լռելու: Այն ժամանակ թույլ են արվել և՛ ձառեր և՛ կից զեկուցումներ, ամբողջ ժամանակ խոսել են բոլոր ռայոններում, բոլոր կոնֆերանսներում, այդ ժամանակ դա կարելի էր, իսկ այժմ. համագումարը կայացրել է յուր վորոշումները և այժմ արդեն զեկուցողը պիտի խոսի վոչ թե վորպես փոքրամասնութայն կամ մեծամասնութայն ներկայացուցիչ, այլ վորպես ամբողջ համագումարի ներկայացուցիչ (ծափահարություններ):

Յեթե ոպպոզիցիայի ընկերները հետեյալ համագումարում կկարողանան համոզել մեծամասնութայնը իրենց ասածներում և մենք փոքրամասնութայն կկազմենք, այն ժամանակ պարզ է, վոր մենք կենթարկվենք:

Մենք ապրում ենք այնպիսի պայմաններում, յերբ դժբախտաբար, մի քանի ընկերներ, վորոնք վերջին ժամանակներս ձեռք ձեռքի տված աշխատել են, վորոշ սխալներ են գործում և դժվար է ասել, թե ելի չեն գործի,—կարիք չկա դրանից հուսահատվելու: Դա շատ բնական է, վորովհետև շատ դժվարություններ կան, շատ բարդ հարցեր են դրվում մեր առաջ և այդ հարցերը վճռելու ժամանակ վոչ միայն առանձին ընկերներ, այլև ամբողջ խմբակներ զանազան հարցերի տարբեր կերպ են նայելու:


Լենինը այժմ չկա, դրա համար ել հարցերը ուղիղ կերպով վճռելու համար տարվող պայքարը ավելի մեծ է լինելու, քան այդ յեղել է Լելինի որոք: Լենինի մեծությունն ել հենց նրա մեջ է կայացել, վոր նա աշխատել է վորքան կարելի է դիսկուսիայից կախացել, վոր նա աշխատել է վորքան կարելի է դիսկուսիայից առաջացած վրասները քչացնել: Մենք բոլորս գիտենք, վոր Լենինը միակ մարդն էր, վորին բոլորս լսում էինք. այժմ այդ ավտո-րիտետը չկա և չի լինի: Դա պարզ է: Ամեն մի հարց վճռելուց Կենտրոնական Կոմիտեի, Քաղբյուրոյի յուրաքանչյուր անգամ հարցին մի տեսակ է նայում, նորանոր խմբավորումներ են առաջա-

նում և հարավոր չի լինում իսկույն իմանալ, արդյոք, վորոշումը ուղիղ է, թե չէ: Դժբախտաբար, տարածայնությունները ավելի շատ են լինելու, քան Լենինի ժամանակ է յեղել: Սակայն դա այնքան էլ վտանգավոր չի լինի, յեթե այդ բոլոր տարածայնությունները, կարծիքների տարբերությունները, նույնիսկ թեքումները և այլն, չեն դարգանա ֆրակցիոն պայքարի ճանապարհով, կամ ուրիշ խոսքով ֆրակցիոն պայքարի բնույթ չեն կրի: Ահա թե ինչու ենք ասում— դու ինչպես ուզում ես, մտածիր, դա քո գործն է, յես էլ կաշխատեմ քեզ համոզել, վոր իմ ասածն է ճիշտ. այդ բոլորը կարելի է. սակայն չպետք է մոռանաս, վոր վոչ վոք չի կարող կուսակցության վորոշումը խախտել. դա արդեն վոչ վոքի չի թույլատրվի: Կուսակցության վորոշումները խախտելով, դու նրա հիմքերը թուլացնում ես: Դա արդեն նշանակում է պրոլետարիատի դիկտատուրայի հիմքերը փորել. դա վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ. դա արդեն անհանդուրժելի է: Սա լենինյան դեմոկրատիզմի հիմնական մասն է:

Կուսակցության համագումարը միանգամայն պարզ ու հրամայականորեն ասել է.— ահա ձեզ ամբողջ կուսակցության վորոշումները և կուսակցության ամեն մի պատասխանատու անդամ պարտավոր է իմ այս վորոշումները կյանքում իրականացնել: Ուրիշ վոչ մի խոսք (ծափահարություններ):

Ի հարկե, վոչ վոք չի ցանկանա փոքրամասնության մեջ լինել: Անդուրեկան բան է խոստովանել սեփական սխալները. շատ անգամ անդուրեկան է լինում յենթարկվելը, սակայն չպետք է մոռանալ, վոր ամբողջ կուսակցության վորոշումներին յենթարկվելը ամեն մի կոմունիստի բացարձակ պարտականությունն է: Յեթե մենք, խախտենք կուսակցության վորոշումներին յենթարկվելը, դրանով ջարդած կլինենք մեր կուսակցության վորոշումը, փլած նրա ամուր հիմքերը: Բայց չե՞ վոր մեր կուսակցությունը մի այնպիսի մեծ և հզոր կուսակցություն է, վորը կառավարում է մի հսկայական յերկիր և վորը յուր ուսերի վրա տանում է պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ ծանրությունը: Վոչ մի կերպ չի կարելի թույլ տալ, վոր կուսակցության մեջ ճեղքումներ առաջանան:

Հենց վոր ճեղքվածքները յերևան, իսկույն հարկավոր է առաջն առնել, վորպեսզի մեր կուսակցությունը ինչպես միշտ, այնպես էլ հետագայում մնա միասնական, ամուր, պողպատե, Լենինյան կուսակցություն (բուն ծափահարություններ):



«Ազգային գրադարան»



NL0186871

8

